

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐԵՆՍԳԻՐՔ

ՊԵՏՏՐՈՍ

114

31 JAN 2018

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԵՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԿԻՐՔ

Ա.Ո. 1-Ն ՀՈՒՆԻՍԻ 1938 Թ. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ,
ՅԵՎ. ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Гражд. Процессуальн. Кодекс

Арм. ССР
ГԽՀ Բրմ. ՏՏՐ, Երևան, 1939 Դ.



1-3763 gr

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վորոշում Քաղաք. Դատավ. Որենագրերի մասին 9

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՋ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆԱԳՐԵՐ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Գլուխ I.	Հիմնական սկզբունքներ	11
» II.	Փոխանորդությունը դատարանում	15
» III.	Դատարանների ընդդատությունը	17
» IV.	Դատական ծախսեր	25
» V.	Տուգանքներ	35
» VI.	Դատավարական ժամանակամիջոցները	36
» VII.	Դատակոչ և դատարանի այլ ծանուցումներ	39

ՄԱՍ ՅԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՑԱՅԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գլուխ VIII.	Հայց հարուցելը	41
» IX.	Հայցի ապահովումը	44
» X.	Գործի դատաքննությունը	47
» XI.	Արձանագրություններ	51
» XII.	Դատավարության կասեցումը	52
» XIII.	Ապացույցներ	54
» XIV.	Ապացուցույցների ապահովումը	55
» XV.	Ապացույցների առանձին տեսակներ	56
	I. Վկայություններ	56
	II. Գրավոր ապացույցներ	58
Գլուխ XVI.	Փորձաքննություն	61

» XVII.	Մի քանի հայցվորների կամ պատասխանողների և յերրորդ անձանց դատավարութեանը մասնակցելու մասին	62
» XVIII.	Վճռահատութիւն	65
» XIX.	Կատարողական թերթեր տալը	69

ՄԱՍ ՅԵՐՐՈՐԴ

ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ XX.	Ընդհանուր սկզբունքներ	71
» XXI.	Դատարանի կարգադրութիւնները մեռածներից հետո մնացած գույքի մասին	72
» XXII.	Միջնորդադրեր և միջնորդ դատարանների վճիռներ	73
» XXIII.	Կրօնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայութիւնից ազատելը	75
» XXIV.	Նոտարների գործողութիւնների դեմ արվող դանդաղանք	76
» XXV.	ա. Կորցրած վոչ-անվանական փաստաթղթերի իրավունքները վերականգնելու հատուկ վարույթի մասին (կոչի վարույթ)	78

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

ՎՃԻՌՆԵՐԻ ԴԵՄ ԳԱՆԳԱՏ ՏԱԼՆ ՈՒ ՆՐԱՆՑ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՈՒՆԸ

Գլուխ XXVI.	Վճիռների դեմ դանդաղատ տալը	82
» XXVII.	Դատական վճիռների վերաքննութիւնը	85
Դատական վճիռների վերաքննութիւնը հսկողութեան կարգով		89

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԻ ԵՅՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ

ԿԱՏԱՐՈՒՄԸ

Գլուխ XXVIII.	Ընդհանուր սկզբունքներ	90
» XXIX.	Գանձումը գույքի վրա դարձնելը	96
» XXX.	Կատարողական թերթերով պետական և	

հասարակական հիմնարկ ու ձեռնարկութիւններից դանձում կատարելը 113

» XXXI.	Գանձումը բանվորների և ծառայողների աշխատավարձի վրա դարձնելը	117
» XXXII.	Գանձումը պարտապանի պետհիմնարկներում ու մասնավոր անձանց մոտ գանվող զբաղական գումարների և գույքի վրա դարձնելը	120
» XXXIII.	Գանձումը շենքերի և կառուցման իրավունքի վրա դարձնելը	122
» XXXIV.	Արդելադրյալ գույքի վաճառքը	123
» XXXV.	Ֆիզիկական և իրավական մասնավոր անձանց անանկութիւնը	128

Սնանկութեան վերաբերյալ գործերի ընդդատութիւնը և բըն-նութիւնը	130
Սնանկութեան հետևանքները	133
Լիկվիդատորներ	134
Լիկվիդացիայի յենթակա գույքը	136
Պահանջների բաշխումը	139
Լիկվիդացիայի ավարտումը	145
Պարտատերերի պահանջները պահատեցնելը, հետաձգելը, մասնատելը և բավարարելը	147

Կանոնադրութիւն միջնորդ դատարանի 150
Վորոշում

ՀեՍՀ ԿԳԿ-ի Կոմիտեյի նախագահութեան ՀեՍՀ բաղա-բացիական դատավարութեան որենսդրքի 43 հոդվածի «բ» ծանոթութեամբ լրացնելու մասին 153
Վորոշում

ՀեՍՀ ԿԳԿ-ի նախագահութեան
ՀեՍՀ բաղաբացիական դատավարութեան որենսդրքի 289 հոդվածը 3 և 4 ծանոթութիւններով և Քաղ. Դատ. Որենս-գիրքը 271-ա հոդվածով լրացնելու մասին 159
Այբբենական-առարկայական ուղեցույց 161

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ
III ՆՍՏԱՇԵՐՁԱՆԻ

ՀԽՍՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ

1923 թ. սեպտեմբերի 23-ին

1. Ընդունել և հաստատել ՀԽՍՀ Քաղաքացիական Դատավարության Որենսդիրքը և կիրարկության դնել 1923 թ. հոկտեմբերի 1-ից:

2. Սույն Որենսդիրքը կիրարկության դնելուց հետո վերացնել քաղաքացիական դատավարության ՀԽՍՀ Ժողովրդական Դատարանի Կանոնադրքով և Արդարադատության Ժողովրդական Կոմիտարիատի հրահանգներով սահմանված նորմաները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳՐՔ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Գ Լ Ո Ւ Խ Ի

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԻՈՒՆՔՆԵՐ

1. Քաղաքացիական Դատավարության այս Որենսդրքով սահմանված կանոնները պարտադիր են ՀԽՍՀ միասնական դատական սխառեմի բոլոր հիմնարկությունների (Ժողովրդական դատարանի և Գերազույն Դատարանի), այլ և այն հիմնարկությունների համար, վորոնք դատական ֆունկցիաներ ունեն իրենց առանձին կանոնադրությունների հիման վրա, այն բացառություններով, վորոնք սահմանված են նույն կանոնադրություններով:

(ՀԽՍՀ Կենսադրծկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրության մեջ):

2. Դատարանը ձեռնարկում է գործի քննությանը չահադրդոված կողմի դիմումի հիման վրա: Դատախազն իրավունք ունի թե գործ սկսելու և թե դատավարության ամբողջ ընթացքում գործին միջամուխ լինելու, յեթե իր կարծիքով այդ պահանջում է պետության կամ աշխատավոր մասսաների շահերի պաշտ-

պանութիւնը: Ինչ դեռութեան մեջ եւ վոր լինի գործը, կողմը կարող եւ փոխել հայցի հիմունքը, ալիւլացնել կամ նվազեցնել իր հայցապահանջները: Դատարանից եւ կախված ընդունել կողմի հրաժարվելն իրեն սպառնալով իրավունքներից եւ նրանց դատական պաշտպանութիւնից ըստփորում՝ այդպիսի հրաժարումն ընդունելուց հետո կողմն այլևս իրավունք չունի նույն հիմունքներով հայց հարուցել:

2—ա) Թնոյններից՝ յերեխաներին պահելու համար (ալիմենա) միջոցներ բռնադանձելու, հայրութիւնը հաստատելու մասին գործերը դատարանն իր վարույթում ընդունում ե՝ ծնոյնների եւ կամ խնամակալների դիմումի հիման վրա, Քաղաքացիական ակտերի կացութեան բաժնի հայտարարութեամբ, այլև դատարանի նախաձեռնութեամբ, դատախազի, մոր եւ մանկութեան պահպանութեան բաժնի, խնամակալութեան կամ պրոֆիլութեան հայցով:

Դատախազը, ալիմենտ չվճարելու մասին դիմում կամ նյութ ստանալով՝ պարտավոր եւ գործ սկսել եւ քննութիւն պահանջվելու դեպքում գործը դատարան հանձնել 53—ա. հոդ. վահմանված ժամկետից՝ վոչ ուշ:

[1937 թ. ոգոստոսի 9—ին, (Որ. և Կարգ. Ժող. № 8, հոդ. 34)]:

3. Դատարանը պարտավոր եւ գործերը լուծել Բանվորա-գյուղացիական կառավարութեան գործող որենքների եւ կարգադրութիւնների, այլև իշխանութեան տեղական մարմինների՝ իրենց վերապահված իրավասութեան սահմաններում հրատարակած վորոշումների հիման վրա:

4. Վորեւ գործ լուծելու համար որենքներ ու կարգադրութիւններ չլինելու դեպքում, դատարանը գործը վճռում եւ, դեկավարվելով խորհրդային որենագրութեան ընդհանուր սկզբունքներով ու Բանվորագյուղացիական կառավարութեան ընդհանուր քաղաքականութեամբ:

5. Դատարանը պարտավոր եւ ամեն կերպ ձգտել պարզելու կողմերի իսկական իրավունքներն ու փոխհարաբերութիւնները, ուստի, չբավականանալով ներկայացրած բացատրութիւններով ու նյութերով, պարտավոր եւ կողմերին հարցեր տալով, նպաստել գործը լուծելու համար եյական նշանակութիւն ունեցող հանդամանքները պարզելուն եւ ապացույցներով հաստատելուն. դատարանը պարտավոր եւ նաև իրեն դիմող աշխատավորների իրավունքների եւ որինական շահերի պաշտպանութեանը ակտիվ աջակցութիւն ցույց տալ, վորպեսզի նրանց իրավարանական, անտեղյակութիւնը, թերազրագիտութիւնը եւ նման հանգամանքներ ի վնաս նրանց չողտագործվեն: Այս դեպքում դատարանն իրեն դիմող կողմերին բացատրում եւ նրանց դատավարական իրավունքներն ու անհրաժեշտ ձևականութիւնները, նախազուշացնելով դատավարական գործողութիւնների եւ նրանց անտեսելու հետ կապված հետևանքների մասին:

6. Կողմերը պարտավոր են բարեխղճութեամբ ողտըվել իրենց պատկանող բոլոր դատավարական իրավունքներից: Դատարանն անհպաղ պիտի խափանի ամեն մի չարարկութիւն ու հայտարարութիւն, վորի նպատակն եւ ձգձգել կամ խճողել գործը:

7. Արտասահմանում կնքված պայմանագրեր ու

ակտեր քննելիս դատարանն աչքի առաջ պիտի ունենա պայմանագիրը կամ ակտը կնքելու վայրում դործող որենքները, յեթե պայմանագրերն ու ակտերը թույլատրված են ՀՍՍՀ որենքների և այն պետություն հետ կնքած համաձայնությունների հիման վրա, վորի սահմաններում նրանք կազմված են:

8. Յեթե ոտարերկրյա որենքների կիրառման դործում դժվարություններ առաջ գան, դատարանը կարող է խնդրել Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիտեայի քառյակի, վորպեսզի պատշաճ ոտարերկրյա կառավարություն հետ հարաբերություն մեջ մտնի ծաղած հարցի մասին յեղրակացություն ստանալու համար: Այդ յեղրակացությունը դատարանին ներկայացնում է Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիտարիատը:

9. Դատավարությունը անդի յե ունենում տվյալ վայրի բնակչության մեծամասնության լեզվով: Յեթե կողմերը, վկաները կամ փորձադեաները չզխտեն այն լեզուն, վորով կատարվում է տվյալ դործի դատավարությունը, դատարանը պարտավոր է թարգմանիչներ հրավիրել և շահագրգռված անձանց թարգմանիչի միջոցով իրազեկ անել դատարանի ամեն մի դործությունը:

10. Հանցադործության հետևանքով առաջացած վնասների վերաբերյալ քաղաքացիական հայցը, յեթե ներկայացրած և լուծված չի յի դել դործը քրեական կարգով քննելու ժամանակ, կարող է ներկայացվել առանձին՝ քաղաքացիական դործերի դատավարություն կարգով:

11. Ինչ դրություն մեջ էլ լինի դործը, կողմերը, դատարանը կարող են մասնակցելու թույլ-

ավություն ստացած յերրորդ անձինք և նրանց փոխանորդները կարող են նայել խակական դործը, քաղվածքներ անել ու ստանալ դործում յեղած թղթերի ու վաստաթղթերի պատճենները: Կողմերն ու յերրորդ անձինք վավերացված քաղվածքների և պատճենների համար դրոշմատուրը և դիվանական ծախսեր են վճարում սահմանված կարգով:

(ՀՍՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրություն):

Գ Լ Ի Խ 11

ՓՈՍՍՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴՍՏԱՐԱՆՈՒՄ

12. Կողմերը դործը կարող են վարել դատարանում անձամբ կամ իրենց փոխանորդների միջոցով: Յեթե դատարանն անհրաժեշտ է համարում դատախազի մասնակցությունը, նրա մասնակցությունը պարտադիր է:

13. Այն անձանց դործերի վերաբերմամբ, վորոնք անդործունակ են հայտարարված կամ վորոնց դործունակությունը սահմանափակված է որենքի ուժով (Քաղաքացիական Որենսդրի 7, 8 և 9 հոդվածներ), հայցերը ներկայացվում են նրանց որինական ներկայացուցիչների կողմից կամ նրանց որինական ներկայացուցիչների դեմ:

14. Կոլեկտիվները (պետական հիմնարկները, պետական ձեռնարկությունները, կոոպերատիվները, ընկերությունները, միություններն ու այլ միավորումները) հայցեր հարուցում են և պատասխանող հանդիսանում որենքով կամ իրենց կանոնադրությամբ սահմանված մարմինների միջոցով:

15. Փոխանորդութիւնը դատարանում կարող է լինել. ա) կողմի հոժարակամ ընտրութեամբ, բ) որինական փոխանորդութիւն անդորձունակներէ, գ) փոխանորդութիւն Ամուսնութեան, Ընտանիքի և Խնամակալութեան Որենսգրքի 74 հոդվածի կարգով և դ) փոխանորդութիւն Քաղաքացիական Որենսգրքի 16 հոդ. համաձայն:

(ՀՍՍՀ Կենսագործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրութեամբ):

16. Կողմերի փոխանորդներ կարող են լինել՝ ա) պաշտպանների կոլեգիայի անդամները, բ) արհեստակցական միութիւններէ լիազորները՝ նրանց անդամների գործերի վերաբերմամբ, գ) կոլեկտիվներէ դեկավարներն ու մշտական աշխատակիցները՝ իրենց կոլեկտիվի գործերի վերաբերմամբ, դ) այն անձինք, վորոնց՝ գործը քննող դատարանը թույլ է տալիս փոխանորդ լինել տվյալ գործում:

17. Կողմերի փոխանորդները պիտի ունենան պատշաճ լիազորութիւններ, վոր կողմը տալիս է կամ դատարանում բանավոր՝ արձանագրութեան մեջ մտցնելով կամ սահմանված կարգով վավերացրած հատուկ փոխանորդագրով: Նոտարական վավերացման փոխարեն բանավորներն ու ծառայողները գործ վարելու համար տված փոխանորդագիրը կարող են վավերացնել տալ իրենց հիմնարկի կամ ձեռնարկութեան մեջ, կարմիր բանակայինները՝ իրենց զորամասերում, աշխատավոր հողագտագործողները՝ գյուղական խորհուրդներում:

18. Լիազորութիւնն իրավունք է տալիս փոխանորդին բոլոր դատավարական գործողութիւնները կատարել, բացի գործը հաշտութեամբ վերջացնելուց,

վեճը միջնորդ դատարանին հանձնելուց, հայցապահանջներ ճանաչելուց, նրանցից ամբողջովին կամ մասամբ հրաժարվելուց, լիազորութիւնն այլ անձի փոխանցելուց և գույք կամ դրամ ստանալուց: Փոխանորդի հիշյալ իրավունքները հատկապես հիշատակված պիտի լինեն լիազորութիւնների մեջ: Կեղծիքի մասին վեճ կարելի չէ սկսել միայն տվյալ գործի վերաբերմամբ ստացած հատուկ լիազորութեան հիման վրա:

19. 13-րդ հոդվածով նախատեսված գործերի վերաբերմամբ լիազորութիւն են տալիս որինական ներկայացուցիչները, իսկ 14 հոդ. նախատեսված գործերի վերաբերմամբ՝ կոլեկտիվների սրենքով կամ կանոնադրութեամբ սահմանված մարմինները:

20. Կողմերի փոխանորդներ չեն կարող լինել—ա) 18 տարին չլրացրած անձինք, բ) այն անձինք, վորոնց անձնական և հասարակական իրավունքները դատավճռով սահմանափակված են՝ սահմանափակման ամբողջ ժամանակի ընթացքում, գ) խնամակալութեան տակ դռնվողները, դ) պաշտպանների կոլեգիայից հեռացվածները, ե) ժողովրդական դատավորները, դատարանի անդամները, քննիչներն ու դատախազները. վերջինները՝ բացի այն դեպքերից, յերբ նրանք գործին մասնակցում են Քաղաքացիական Դատավարութեան Որենսգրքի 2, 12 և 172 հոդվածների կարգով:

1-376394

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԲՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

21. Ժողովրդական դատարանի ընդդատութեանը յենթակա յեն քաղաքացիական փոխհարաբերութիւն-



ներկեց բղխող բոլոր գործերը, բացառութեամբ 23-բն
հոգվածուս նախատեսանլամ գործերեց.

ա) այն վեճերը, վորոնցում մեկ կամ յերկու կողմերը հանդիսանում են մասնավոր անձինք.

բ) հանրայնացված հատվածի հիմնարկները, ձեռնարկութեանները և կազմակերպութեանները մեջև տեղի ունեցող վեճերը, վորոնք ծագում են կոմունալ ստաբիլիտետից ոգտվելու պայմանագրեց, անկախ հայցագրեց:

[1937 թ. նոյեմբերի 4-ին, (Որ. և կարգ. ժող. № 11, հոգ. 47)]:

դ) աշխատանքի վերաբերյալ որեւի կիրառման կապակցութեամբ աշխատանքային հարաբերութեաններեց, կողմերի և աշխատանքային պայմանագրերեց, ներքին կարգապահական կանոններեց, տուժացուցակեց բղխող վեճերն այն դեպքում*

1) յերբ կոնֆլիկտը դնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովները քննութեանը յենթակա չեն.

2) յերբ դնահատու կոնֆլիկտային հանձնաժողովին ուղարկված կոնֆլիկտներն այնտեղ իրենց լուծումը չեն ստացել.

3) յերբ դնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումը հսկողութեան մարմինները կողմեց վերացված և.

դ) հանրայնացված հատվածի հիմնարկները, ձեռնարկութեանները և կազմակերպութեանները, կոնցեսիոն ձեռնարկութեանները և ոտարերկրյա ֆերմաների հետ ունեցած վեճերը մինչև 10.000 ուրբի գումարով.

ե) այն փաստաթղթերի վրա հիմնված հայցերը,

վորոնցով բռնադանձումը կարող և կատարվել նոտարական գրասենյակի կամ նոտարական գործողութեաններ կատարող վորեւե այլ որդանի կատարողական մակարութեամբ այն դեպքերում, յերբ որեւի սահմանված ժամկետը լրանալու հետևանքով գործը քննութեան յենթակա յե ընդհանուր դատական կարգով, անկախ հայցագրեց:

[1935 թ. սեպտ. 23-ին, (Որ. և կարգ. ժող. № 9, հոգ. 87)]:

22*) . Բոլոր քաղաքացիական գործերը, բացի ներքին շրջաններեց, քննում և դատարանը՝ ժողդատավորի նախագահութեամբ և յերկու ժողովրդական ատենակալները կազմով:

Հետևյալ գործերը քննում են ժողդատավորները միանձնաբար.

ա) բնակարանային վարձի, կոմունալ սպասարկումները վարձի բռնադանձման և վոչ բնակելի շենքերն ոգտագործելու հայցերը վերաբերյալ գործերը, յեթե վեճը կապուծ չե վտարման կամ վճարի չափը սահմանելու հետ.

բ) հանրայնացված հատվածի հիմնարկները, ձեռնարկութեանները և կազմակերպութեանները մեջ ծագած վեճերը վերաբերյալ գործերը (հոգ. 21, կետ «բ»).

դ) այն փաստաթղթերի վրա հիմնված հայցերը, վորոնցով բռնադանձումը կարող և կատարվել նոտար-

*) Տե՛ս ՍՍՀՄ Միութենական ու Ավտոնոմ հանրապետութեան Ղատարանակազմութեան որեւի 14-րդ հոգ.:

բական դրասենյակի կամ նոտարական գործողութիւններ կատարող վորեւէ այլ օրգանի կատարողական մակարութեամբ այն գեւորներում, յերբ սրենքով սահմանված ժամկետը լրանալու հետեանքով, գործը քրէնութեան յենթակա յե ընդհանուր դատական կարգով, անկախ հայցազնից (հոդ. 21, կետ «ե»):

դ) հատուկ վարույթի գործերը, բացառութեամբ 26-րդ գլխում նախատեսնված գործերից:

Դատարանի բոլոր վորոշումները գործի նախապատրաստման, դատավարութեան և վճիռների կատարելու ժամանակ կայացնում ե ժողովրդական դատավորը միանձնաբար, բացի այն վորոշումներից, վորոնք կայացվում են այն գործը լսելու ժամանակ, վորը քննվում ե այս հոդվածի 1-ին արգացի համաձայն՝ ատենակալների մասնակցութեամբ, այլև վճիռների կատարումն հետաձգելու և մի քանի նվազների բաժանելու վերաբերյալ վորոշումները (հոդ. 182), վոր կայացնում ե դատարանը՝ ժողովրդական դատավորի և յերկու ատենակալների կազմով:

Յեթե գործը ժեղդատավորի կողմից միանձնաբար քննելու ժամանակ այնպիսի վեճ ե ծագում, վորը յենթակա չե ժողդատավորի միանձնյա քննութեանը, գործը հանձնվում ե ժողդատարանին ի քննութեան՝ ժողդատավորի և յերկու ատենակալների կազմով:

[1935 թ. սեպտ. 23-ին (Որ. և կարգ. ժող. № 9, հոդ. 87)]:

23. ՀԽՍՀ Գերագույն Դատարանը քննում ե — ա) հանրայնացված հատվածի հիմնարկների, ձեռնարկութեանների և կազմակերպութեանների միջև ծագած վեճերը, վորոնք բղխում են՝

1) Պետրանկի դործառնութեաններից, յեթե վեճի մեջ Պետրանկը կողմերից մեկն ե հանդիսանում և յեթե հայցի գումարը 1000 ռուբ. ավելի յե:

2) յերկաթուղային, ջրային և ոգային փոխադրութեանների պայմանագրերից, վորոնց գումարը 10.000 ռուբլուց ավելի յե, բացի մասսայական պլանային փոխադրութեանների մասին գլխավոր պայմանագրերին վերաբերող վեճերից:

բ) հանրայնացված հատվածի հիմնարկների, ձեռնարկութեանների ու կազմակերպութեանների՝ կոնցերտն ձեռնարկութեանների ու ոտարերկրյա Ֆիրմաների հետ ունեցած վեճերը, վորոնց հայցազնը 10.000 ռուբլուց բարձր ե:

Ծանոթութիւն.— Գերագույն Դատարանը կարող ե յուրաքանչյուր դատարանից վերցնել ցանկացած գործը և ընդունել իր վարույթում, այլև, նկատի ունենալով կողմերի գտնվելու տեղը և այլ հանգամանքներ, առանձին գործեր կամ առանձին կատեգորիայի գործեր հանձնել ցանկացած ժողդատարանին քննելու համար:

[1935 թ. սեպտ. 23-ին (Որ. և կարգ. ժող. № 9, հոդ. 87)]:

24. Արբիտրաժային կարգով քննվող վեճերը, վորոնք ծագում են արտաքին առևտրի դործարքներից, մասնավորապես ոտարերկրյա Ֆիրմաների և խորհրդային տնտեսական կազմակերպութեանների միջև ծագած վեճերը քննվում են Համամիութենական Առևտրական Պալատին կից Արտաքին Առևտրի Արբիտրաժ Հանձնաժողովի կողմից՝ նրա մասին յեղած հատուկ

կանոնադրութեան հիման վրա [1935 թ. 29/9, — Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 87)]:

25. Հայցերը ներկայացվում են այն դատարանին, վորի շրջանում պատասխանողը մշտապես ապրում է կամ մշտական գրադմունք ունի [1929 թ. 23/10, (Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 162)]:

Ծանոթութիւն. — 1. Ապրուստի միջոցները (ալիմենտի) և մահվամբ, խեղանդամութեամբ ու մարմնական այլ վնասվածքներով պատճառած վնասները հատուցման վերաբերյալ հայցերը կարող են ներկայացվել նաև հայցվորի բնակութեան վայրում: [1935 թ. 23/9. (Որ. և Կարգ. Ժող. № 9. հոդ. 87)]:

Ծանոթութիւն. — 2. Նախերի ընդհարումից առաջացած վնասների հատուցման վերաբերյալ հայցերը կարող են հարուցվել նաև այն նավի գտնված վայրում, վորի վրա յե ընկնում ընդհարումից առաջացած վնասների հատուցման պատասխանատվութիւնը կամ այն նավահանգստի գտնված վայրում, վորի շրջանում ցուցակադրված է նավը [1929 թ. 23/10 (Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 162)]:

ԽՍՀ Միութեան մեջ բնակավայր չունեցող կամ ժամանակավոր բնակավայր չունեցող պատասխանողի դեմ հայց կարող է հարուցվել նրա դուրբի գտնված տեղում կամ նրա վերջին հայտնի բնակարանում կամ գրադմունքի վայրում:

[1935 թ. սեպտեմբերի 23-ին (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 87)]:

Ծնողներից՝ յերեսաներին պահելու համար (ալիմենտ) միջոցներ բռնագանձելու և հայրութիւնը հաս-

տատելու մասին գործերով, յերբ պատասխանողի բընակավայրը հայտնի չէ, դատախազութիւնը դատարանի վորոշմամբ կարգադրում է ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտարիատի մարմինների միջոցով փնտռելու պատասխանողին: Փնտռելու ծախսերը բընադանձվում են պատասխանողից, ալիմենտ բռնագանձելու մասին դատական վճիռ կայացնելու հետ միասին:

[1937 թ. ոգոստոսի 9-ին (Որ. և Կարգ. Ժող. № 8, հոդ. 34)]:

Ծանոթութիւն. — Գերագույն Դատարանի հատուկ իրավասութեան Դատական Կոլեգիան կարող է առանձին գործեր կամ առանձին կատեգորիայի գործեր հանձնել Գերագույն Դատարանի ընդհանուր իրավասութեան Դատական Կոլեգիային ի բնութիւն:

(ՀԽՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրութեամբ):

26. Այն պատասխանողի դեմ, վորի բնակավայրը հայտնի չէ, հայցերը հարուցվում են ըստ դուրբի գտնված տեղի և կամ պատասխանողի մշտական բընակութեան կամ գրադմունքի վերջին հայտնի տեղի: Պատասխանողի բնակութեան կամ գրադմունքի վերջին հայտնի տեղը համենայն դեպս ճշտութեամբ վորոշված պիտի լինի:

27. Կոլեկտիվների դեմ հայցերը հարուցվում են ըստ պատասխանող մարմնի գտնված վայրի, (հոդ. 14) կամ տեղական մարմնի գտնված վայրի, յեթե հայցը ծագել է այդ տեղական մարմնի հետ կնքված գործարքից:

28. Այնպիսի պայմանադրերից ծագող հայցերը,

վորոնց մեջ վորոշված և կատարման վայրը, կամ վորոնց կատարումը ըստ իրենց եյության կարող և տեղի ունենալ միայն վորոշ վայրում, կարող են ներկայացվել պայմանագրի կատարման վայրի դատարանին:

29. Հայցերը շենքերի, հողամասերի, ձեռնարկությունների իրավունքի մասին, դուչքը դատական կատարածուի ձեռքով վերդրելուց և վաճառելուց ադատելու մասին, սեփականատիրոջ մահից հետո մնացած դուչքի մասին ներկայացվում են այդ դուչքի կամ նրա հիմնական մասի դանված վայրի դատարանին:

30. Յեթե դործը յենթակա յե մի քանի դատարանի, նրանցից մեկն ընտրելու իրավունքը պատկանում և հայցվորին:

31. Յեթե ժողովրդական դատարանը դործն իրեն ընդգատյա չի համարում, վերադարձնում և իրեն տրված հայցը հարակից թղթերի ու իր վորոշման պատճենի հետ միասին՝ պատշաճ դատարանին ներկայացնելու համար: Իր ընդգատությանը յենթակա չլինելու պատճառով հայցը չընդունելու մասին դատարանի կայացրած վորոշման դեմ կարելի յե մասնավոր դանդատալ ԽՍՀ Գերագույն Դատարանին (այս Որենագրքի 249 հոդ.):

(ՀԽՍՀ Կենսագործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

31-ա. Այն դեպքերում, յերբ դործին մասնակցող կողմը հանդիսանում և ինքը դատարանը, նրա դործը քննության և տրվում մտտակա համապատասխան դատարանին այն դեպքում միայն, յերբ այդ մասին մյուս

կողմը միջնորդություն և հարուցում, վոչ ուչ, քան դործի վերաբերյալ դատական առաջին նիստը:

[1935 թ. սեպտ. 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 87)]:

32. Գերագույն Դատարանը, դործի առանձին հանդամանքներն աչքի առաջ ունենալով, կարող և կողմերից մեկի խնդրով կամ իր նախաձեռնությամբ վորոշում կայացնել, դործն այլ դատարանի հանձնելու մասին:

33. Դատարանների միջև ընդգատության մասին վեճ թույլ չի տրվում:

33-ա. Վորևե դատարանի կողմից իր ընդգատության սահմանում ընդունած դործը, բոլոր դեպքերում, ըստ եյության պիտի քննվի նույն այդ դատարանի կողմից, բացառությամբ 103 հոդ. նախատեսված դեպքերից, թեկուզ դործի ընթացքի ժամանակ նա յենթակա լինի այլ դատարանի ընդգատության, մասնավորապես, յեթե հայցագինը դերազանցում և սկզբնական հայցագինից, անցնում և տվայլ դատարանի ընդգատության սահմաններից, կամ յերբ ներկայացվում և հակընդդեմ հայց, վորն իր դնով դերազանցում և այդ սահմանից:

[1935 թ. սեպտ. 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 87)]:

Գ Լ Ո Ւ Խ IV

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

34. Գործը վարելու դատական ծախսերը կազմում են պետական միասնական տուրքը և դատավարության ծախսերը:

Ծանոթութիւն. — Տուրք վճարողները բաժանվում են 2 կարգի՝

ա) առաջին կարգ — պետական և հասարակական հիմնարկները, ձեռնարկութիւններն ու կազմակերպութիւնները.

բ) յերկրորդ կարգ — քաղաքացիները և մասնավոր իրավական անձինք:

[1937 թ. մայիսի 14-ին, (Որ. և Կարգ. Ժող. №5, հոդ. 28)]:

35. Յուրաքանչյուր՝ սկզբնական և հաղընդդեմ հայցից, այլև յերրորդ անձերի կողմից ինքնուրույն հայցապահանջով դործին մասնակցելու մասին գրված դիմումներէջ գանձվում և պետական և միասնական տուրք:

Առաջին կարգի վճարողներից (34 հոդ. ծանոթութիւն «ա» կետ) տուրք գանձվում և հետևյալ չափերով՝ մինչև 200 ուրբլի դնահատված հայցից 3 ուրբ. չափով. յուրաքանչյուր դիմումից, 200 սուրբ. և ավելի մինչև 500 ուրբ. դնահատված հայցից 5 ո. յուրաքանչյուր դիմումից, իսկ 500 ուրբ. և ավելի դնահատված հայցեր հարուցելու դեպքերում՝

ա) պետական և տեղական բյուջեյում դրոշմող պետական հիմնարկներից և ձեռնարկութիւններից, այլև տնահաշվարկի հիմունքներով դործող ընդհանուր ոգտադործման կոմունալ ձեռնարկութիւններից, վորոնք սապասարկում են բնակելի վայրերի առողջապահութիւնն ու բարեկարգմանը (կոյուղի, ասենիզացիա, ջրամատակարարում, լուսավորութիւն, ախտահանիչ կամերաներ և այլն), վորոնք կոմունալ տնտեսութիւն մարմինների կողմից շահագործվում են առանց վարձակալութիւն տալու, ինչպես և Համամիու-

թեանական Արհեստակցական Միութիւններից՝ 2 տուրբ. չափով:

բ) Պետական և հասարակական այլ ձեռնարկութիւններից, հիմնարկներից ու կազմակերպութիւններից՝ 500 ուրբ. մինչև 5000 ուրբ. դնահատված հայցից 2 տուրբ. չափով. 5000 ուրբ. և ավելի դնահատված հայցից՝ 6 տուրբ. հայցադնից.

գ) կոլտնտեսականների միմյանց հետ և կոլտնտեսութիւնների՝ պետական և կոոպերատիվ կազմակերպութիւնների հետ ունեցած վեճերի վերաբերյալ հայցերից հայցադնի $\frac{1}{4}$ տուրբ. չափով:

Յերկրորդ կարգի վճարողներից՝ քաղաքացիներից և մասնավոր իրավական անձերից (34 հոդ. ծանոթ. «բ» կետ) պետմիասուրք գանձվում և հետևյալ չափերով՝ մինչև 200 ուրբ. դնահատված հայցից 3 ուրբ. յուրաքանչյուր դիմումից, 200 ուրբ. բարձր և մինչև 500 ուրբ. դնահատված հայցից 5 ուրբ. յուրաքանչյուր հայցից. 500 տուրբ. մինչև 5000 ուրբ. գրնահատված հայցից 2 տուրբ., 5000 ուրբ. և ավելի դումարով դնահատված հայցից՝ 7 տուրբ. հայցադնից:

Գուլքային բնույթ չունեցող դործերից և հատուկ վարույթի դործերից յերկրորդ կարգի վճարողներից տուրք գանձվում և 3 ուրբլի:

Առաջին կարգի վճարողներից այդպիսի դործերի համար տուրք չի գանձվում: Դատական վճուրի դեմ տրված յուրաքանչյուր բեկման դիմումից տուրք գանձվում և նշված կոպարների 50 տուրբ. չափով, հիմք ընդունելով դանդատարկված գումարի չափը:

[1937 թ. մայիսի 14-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 5, հոդ. 28)]

36. Հայցագլինը վորոչվում է.—

ա) դրամական գումարներ պահանջելու և դույթի վերաբերյալ հայցերում՝ ըստ պահանջվող այն գումարի կամ պահանջվող դույթի արժեքի, վորն սկզբից վորոչում է հայցվորը:

բ) մի քանի ինքնուրույն հայցերից բնղկացած հայցերում՝ ըստ բոլորի պահանջների ընդհանուր գումարի:

գ) ժամկետային հատուցումների և վճարների վերաբերյալ հայցերում՝ ըստ բոլոր վճարումների ու հատուցումների ընդհանուր գումարի:

դ) չբավոր և անաշխատունակ ամուսիններին, ծընողներին և դավաններին ապրուստի միջոց տալու վերաբերյալ հայցերում՝ մի տարվա համար վճարվող գումարից, անորոշ ժամանակով և ցմահ տրվող վճարումների ու հատուցումների վերաբերյալ հայցերում՝ 3 տարվա վճարումներից:

ե) վարձակալական պայմանագրերի ուժը դադարեցնելու կամ յերկարելու վերաբերյալ հայցերում՝ պայմանագրի մնացած ժամկետի համար հասանելիք վարձավճարի համեմատ:

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

37. Հայցագլինը ցույց է տալիս հայցվորը: Յեթե ակներև է ցույց տրված դնի անհամապատասխանությունը հայցի առարկայի արժեքին, հայցի գինը վորոչում է դատարանը:

38. Այն հայցերի վերաբերմամբ, վորոնց գինը գծվար է լինում վորոչել հայց հարուցելիս, դատական տուրքի չափը նախապես վորոչում է դատարանը, բայց այն 10 ուրբուց պակաս լինել չի կարող: Տուրքի պակասը գանձվում է հետո՝ հայցագնի համեմատ, վորը դատարանը վորոչում է գործը վճռելիս:

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

39. Հայցապահանջների նվազեցման դեպքում վճարված տուրքը չի վերադարձվում: Հայցն ավելացնելու դեպքում տուրքի պակասորդ գումարը վճարվում է ավելացրած պահանջներ հայտնելու հետ միաժամանակ: Դատարանից է կախված պետական հիմնարկներից պահանջվող տուրքի գանձումը հետաձգելը:

40. Վերացված է:

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

41. Վերացված է:

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

42. Դատարան կանչված վկաների աշխատավարձը պահպանվում է: Բանվորների կամ ծառայողների թըվին չպատկանող վկան գործից կտրվելու համար վարձատրություն ստանալու մասին պիտի հայտնի դատարանին հարցաքննությունից հետո: Այդ դեպքում դատարանը վորոչում է վարձատրության չափը, վորը չի կարող դերազանցել ավյալ վայրի միջին աշխատավարձից: Վորպես վկա դատարան կանչված բանվորներն ու ծառայողներն իրավունք ունեն իրենց լրիվ աշխատավարձն ստանալու իրենց ծա-

առաջադրանքի կամ աշխատանքի վայրում: Յեթե վկան տվյալ դատարանի շրջանից դուրս է ապրում, նրան վճարվում է ճանապարհածախս:

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

42-ա. վկաներին վարձատրելու և նրանց ճանապարհածախս վճարելու համար անհրաժեշտ դումարը մուծվում է ծախսերի մեջ և դանձվում գործին մասնակցող կողմերից՝ այս Որենսդրելի 45, 46, 47 և 37-ա հոդվածների կարգով:

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

Ծանոթություն.— վկաների, փորձագետների և ընթերակաների ճանապարհածախսը և որպեսզի վճարելու և փորձագետներին յեղբրակացութուն տալու համար վարձատրելու կարգը վորոշվում է Սրդարադատության Ժողովրդական Կոմիտարիատի հրահանգով: (ՀՍՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

43. Դատական տուրք և գործի վարույթի վերաբերյալ ծախսեր չեն դանձվում.—

ա) աշխատավոր հայցվորից՝ աշխատավարձ դանձելու և այլ պահանջների վերաբերյալ, վորոնք բըղխում են աշխատանքային հարաբերություններից.

բ) այն հայցվորներից, վորոնք պատկանում են ժամկետային ծառայության կադրային, շարքային և կրտսեր պետկադմին (այդ թվում նաև սահմանապահ դորքերը և ՆԳՖԿ Ներքին պահպանությունը) Բանվորադուրդացիական միլիցիայի շարքային և կրտսեր պետկադմի աշխատողները, ուղղիչ — աշխատանքային

հիմնարկների և ռազմականացված պահպանության շարքին:

[1937 թ. մայիսի 14-ին (Որ. և Կարգ. Ժող. № 5, հոդ. 28)]:

դ) ապրուստի միջոց (ալիմենտ) դանձելու համար, խեղում կամ մարմնական այլ վնասվածքներ պատճառելու վերաբերյալ հատուցումներ պահանջող հայցվորներից:

դ) արհեստագործական կոոպերացիայի ցանցի մեջ մտնող արտադրական ընկերությունների (արտել) անգամ-հայցվորից, ընդհանուր արհեստանոցում աշխատելու համար տրվող վարձատրության վերաբերյալ հայցերից:

ե) հեղինակի իրավունքից և դուստարարության իրավունքից բղխող վարձատրության տրվող հայցերից:

զ) այն աշխատավորներից, վորոնք ժողովրդական դատավորը կամ գործը ըննող դատարանը տուրք վճարելու բավարար միջոցներ չունենցող են ճանաչել.

ը) այն հայցվորներից, վորոնք ԱՍՖՍՀ և ՀՍՍՀ Ֆինսոցկոմաանների վորոշումներով ազատված են պետական միասնական տուրք վճարելուց.

[1936 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

44 Փորձագետի վարձատրությունը վորոշում է դատարանը նրան կանչելիս:

45. Այն գումարները, վոր անհրաժեշտ են փորձագետներին և վկաներին վարձատրելու, փոխադրական ծախսերը, այլ և տեղադնության հետ կապված ծախսերը հատուցելու համար, մուծում է սկզբից այն վողմը, վորը խնդրել է փորձագետ կամ վկա կանչելու

կամ տեղադնություն կատարելու մասին: Յեթե դատակոչը կամ զինության վայրն ուղևորվելը տեղի չեն ունենում դատարանի նախաձեռնությամբ, դրամը ըսկըզրից մուծում են յերկու կողմերը: Բանվորներին և ծառայողներին վորպես վկա դատարան կանչելու դեպքում շահագրգռված կողմից դանձվում և ավյալ վայրի միջին աշխատավարձին համապատասխանող դումար: Այդ դումարն անմիջականորեն մուծվում և պետության ուղտին:

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. 11, հոդ. 105)]:

45. ա. Վորպես բացառություն նախորդ հոդ. (հոդ. 45) կանոններից, դատարանը, յեղնելով կողմերի սոցիալական ու նյութական պայմաններից, կարող և փորձադետներին և վկաներին վարձատրելու համար անհրաժեշտ դումարը դանձել, ինչպես դատին մասնակցող յերկու կողմերից, նույնպես և մեկ կողմից, անկախ նրանից, թե ում նախաձեռնությամբ և նշանակված փորձագիտությունը կամ՝ հրավիրված են վկաները:

Յեթե կողմերն այդ դումարը վճարելուց խուսափում են, դատարանի վորոշմամբ այն բռնադանձվում և հարկադիր կարգով:

Դատարանը, յեղնելով կողմերի սոցիալական և նյութական դրությունց, կարող և նաև նրանց ազատել այդ դումարները լրիվ կամ մասնակի վճարելուց:

Համենայն դեպս 45-րդ հոդված. նշված անհրաժեշտ ծախսերը չեն կարող դրվել այն հիմնարկի, ձեռնարկության, կադմակերպության և անձանց վրա՝ փորոնք ազատված են պետական միասնական տուրքից (հոդ. 43):

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. 11, հոդ. 105)]:

46. Պետական միասնական տուրքը և գործի վերաբերյալ մյուս բոլոր ծախսերը, վոր կրել և հայց հարուցող կողմը, կամ յեթե այդպիսին կրելուց այդ կողմը ազատված և 43 հոդ. հիման վրա, դատարանի վրձուով բախարարված հայցերի համեմատական չափով վճարում և պատասխանողը, յեթե 43 հոդվ. հիման վրա այդպիսիք վճարելուց նա ազատված չեն: Պատասխանող կողմը նույնպես իրավունք ունի կրած ծախսերի հատուցումը պահանջելու հայցի՝ դատարանի կողմից մերժված մասի համեմատական չափով:

Մանրություն. — 1. Բացի պետական միասնական տուրք մուծելուց, գործը տարած կողմը իրավունք ունի պահանջելու իր փոխանորդին վարձատրելու համար արած ծախսերի հատուցումը, յեթե փոխանորդը գործին մասնակցել և հայցի այն մասի 5%-ի չափով, վորի նկատմամբ կողմի ոգտին վճիռ և կայացված:

Մանրություն. — 2. Անբարեխիղճ կերպով անհիմն հայց կամ հայցի դեմ վեճ կամ գործի արագ ու կանոնավոր լուծում ստանալու դեմ սխտեմատիկարար խոչընդոտներ հարուցող կողմին, դատարանը կարող և, միջին աշխատավարձի համապատասխան, պարտավորեցնել վարձատրելու մյուս կողմին, ի հատուցումն նրա փաստորեն կորցրած աշխատանքի ժամանակի: Փոխհատուցման այդ դումարը պիտի համապատասխանի միջին աշխատավարձի չափին, սակայն չպիտի գե-

բաղանցի վճռած կամ մերժած հայցամասի 5%-ից: Այդ փոխհատուցումը, նայած դորժի հանդամանքներին, կարող է վճռվել և այն կողմի համար, փորի ոգտին ամբողջովին կամ մասնակի կերպով վճիռ և կայացվում, անկախ դատական ծախսերի հատուցման հայցը լուծելուց [1935 թ. 9/11 (Որ. և Կարգ. Ժող. հոդ. 105)]:

47. Գատարանի կողմից քաղաքացիական դորժերի դատավարութան, մասնավորապես վկաների ու փորձադեմոնների դատակոչի և փորձաքննութունների համար կատարված ծախսերը պիտի դանձվեն, իրեն պետութան հասույթ յուրաքանչյուր կողմից՝ նույնպես պահանջի այն մասի համեմատական չափով, վորի նկատմամբ տվյալ կողմի դեմ վճիռ և կայացել:

47-ա. Յեթե պետութան ոգտին դանձվելիք միասնական տուրքի գումարը (հոդ. 46) այն դեպքերում, յերբ հայցվորն այս Որենագրքի 43 հոդ. ուժով աղատված և վերոհիշյալ տուրքերից, ինչպես նաև դատարանի՝ դորժը վարելու ծախսերը (հոդ. 47) մեկ ուր. պակաս են, նշված դանձումները չեն կատարվում և դատարանի կրած ծախսերն ընդունվում են դանձարանի հաշվին:

[1935 թ. նոյեմբերի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 105)]:

48. Յեթե դատարանը սխալ և զնահատել հայցը և սխալ և հաշվել սահմանված տուրքերը, այդպիսի վորոշման դեմ կարելի յե մասնավոր դանդաղ տալ (հոդ. 249):

49. Յեթե դատարանի կողմից կանչված վկան չըներկայանա այնպիսի պատճառներով, վոր դատարանը հարգելի չի համարի, նա յենթարկվում և տուգանքի՝ առաջին անգամ 1-ից մինչև 10 ուրբլի, նայած վկայի նյութական դրութանը, յերկրորդ անգամ՝ հարկազիր բերման և կրկնակի չափով տուգանքի:

(ՀՈՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

50. Յեթե վկան վկայություն տալուց հրաժարվի այնպիսի պատճառներով, վոր դատարանը հարգելի չհամարի, յենթարկվում և տուգանքի՝ 5-ից մինչև 25 ուրբլի:

(ՀՈՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

51. Յեթե զխտակ անձը դատարանին չներկայանա կամ յեղրակացություն տալուց հրաժարվի այնպիսի պատճառներով, վոր դատարանը հարգելի չհամարի, յենթարկվում և տուգանքի 5-ից մինչև 25 ուրբլի:

(ՀՈՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

52. Գործին չմասնակցող յերրորդ անձինք, յեթե հրաժարվեն իրենց ունեցած փաստաթղթերը դատարանի պահանջով ներկայացնելուց, յենթարկվում են տուգանքի՝ 10-ից մինչև 50 ուրբլի:

Ծանոթություն. — 49, 50, 51, 52-րդ հոդվածների կարգով տուգանելու դեպքում, դատարանի վորոշումները դանդաղատարկման յենթակա

չեն, սակայն, ժողովրդական դատավորն իրավաբան չէ, առանց կողմերին հրա իրելու, նշանակված սուղանքը միանձնաբար զիջելու, յեթե կան հարգելի պատճառներ: [1932 թ. 9/3, (Որ. և Կարգ. Ժող. № 1, հոդ. 13)]:

Գ Լ Ո Ւ Ն Վ

ԴԱՏԱՎՈՐՍԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅՆԵՐԸ

53. Դատավարութեան մեջ ժամանակամիջոցներ նշանակում ե դատարանը այն դեպքերում, յերբ որենքով չեն սահմանված:

53-ա. Ալիմենտ և հայրութեանը հաստատելու վերաբերյալ գործերը դատարանը քննում ե գործն ստանալու որից տասնորյա ժամկետից վոչ ուշ՝ պատասխանողի տվյալ վայրում ապրելու դեպքում, այլ դեպքում՝ քսանորյա ժամկետից վոչ ուշ:

[1937 թ. ողոստոսի 9-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 8, հոդ. 34)]:

54. Որենքով վորոշված կամ դատարանի կողմից նշանակված ժամանակամիջոցները հաշվվում են ամիսներով և օրերով:

55. Ամիսներով հաշված ժամանակամիջոցը լրանում ե վերջին ամսի համապատասխան թվին: Յեթե ամիսներով հաշվվող ժամանակամիջոցի վերջն ընկնում ե այնպիսի ամիս, վորը համապատասխան թիվ չունի, այդ դեպքում ժամանակամիջոցը լրանում ե այդ ամսի վերջին օրը:

56. Յեթե ժամանակամիջոցը հաշվվում ե օրերով, ժամանակամիջոցի սկիզբը պետք ե հաշվել հաջորդ օրվանից:

57. Յեթե որենքով կամ պայմանագրով սահմանված ժամկետը լրանու ե հետևյալ հեղափոխական օրերին՝ նոյեմբերի 7-ին և 8-ին, հունվարի 22-ին, մայիսի 1-ին և 2-ին, ապա ժամկետի վերջին օր ե համարվում այդ օրերին հաջորդող առաջին օրը:

Այն հիմնարկները, ձեռնարկութեաններն ու կազմակերպութեանները, վորոնք չեն անցել անընդհատ արտադրական շարաթի, ինչպես նաև առանձին քաղաքացիներ կարող են իրենց պարտականութեանները կատարել կամ իրենց իրավունքն ողտադործել որենքով կամ պայմանով սահմանված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքի օրն այն դեպքում, յերբ ժամկետը լրանում ե ԱՍՖՍՀ և ՀԽՍՀ որենսդրութեամբ սահմանված հեղափոխական օրերին, հանգըստի հատուկ օրերին և շարաթական հանգստի օրերին:

Ծանոթութեան. — Այս հոդվածի կանոնները կիրառվում են հիշյալ հիմնարկների, ձեռնարկութեաններին ու կազմակերպութեաններին նկատմամբ այն պայմանով, յեթե նրանք տեղեկանք ներկայացնեն, վոր դեռ չեն անցել անընդհատ շարաթի:

Տեղեկանքը ստորագրվում ե տվյալ հիմնարկի, ձեռնարկութեան կամ կազմակերպութեան պատասխանատու դեկավարի կողմից 1930 թ. (Որ. և Կարգ. Ժող. № 12, հոդ. 211):

58. Ժամանակամիջոցի վերջին օրը տևում ե մինչև դեղերվա ժամի 12-ը, բայց յեթե այդ ժամանակի ընթացքում կարիք լինի վորևե գործողութեան կատարելու դատարանում, վորտեղ պարապմունքներն ա-

վելի վազ են ավարտվում, այդ դեպքում ժամանակամիջոցը լրանում է այդ պարապմունքները դադարեցնելու վայրկյանին:

59. Ժամանակամիջոցը բաց թողած չի համարվում, յեթե դանդաղ կամ դատարանի պահանջած թուղթը փոստին և հանձնված ժամանակը լրանալուց առաջ:

60. Դատավարության կասեցման հետ միասին կանգ են առնում նրա վերաբերյալ բոլոր ընթացիկ, բայց դեռ չլրացած ժամանակամիջոցները: Ժամանակամիջոցների կասեցումը սկսվում է այն դեպքից, վորի հետևանքով դադարեցված է յեղել դատավարությունը:

61. Ինչպես որենքով սահմանված, այնպես և դատարանի նշանակած ժամանակամիջոցները կարող են յերկարացվել թե շահագրգռված կողմի խնդրքով և թե դատարանի նախաձեռնությամբ:

(ՀՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորչման խմբագրությամբ):

62. Դատարանը կարող է վերականգնել որենքով սահմանված կամ դատարանի կողմից նշանակված ժամկետը՝ բաց թողած կողմի համար, յեթե բաց թողնելու պատճառները հարգելի համարել:

63. Բաց թողած ժամկետը վերականգնելու հարջը, կողմերին կանչելով, լուծում է այն դատարանը, վորտեղ պիտի կատարվի ժամանակամիջոցը՝ բաց թողած գործողությունը, կամ վորին թուղթը պիտի սրվեր:

64. Ժամկետը վերականգնելու մասին խնդր ատալու հետ միաժամանակ պետք է կատարվի այն գործո-

ղությունը, կամ տրվի այն թուղթը, վորոնց վերաբերմամբ միջնորդություն է հարուցվում:

65. Այն թղթերը, վորոնք տրվում են սահմանված ժամկետը լրանալուց հետո, թողնվում են առանջ քննության:

Գ Լ ՈՒ Խ Վ II

ԴԱՏԱԿՈՉ ՅԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՅԼ ԾԱՆՈՒՅՈՒՄ-ՆԵՐ

66. Դատարանի ծանուցադիրը հանձնվում է կամ փոստի միջոցով պատվիրված ծրարով՝ հետադարձ ստացադրով կամ դատական ցրիչների միջոցով այնտեղ, վորտեղ դրանք կան, կամ համապատասխան դյուղխորհուրդների միջոցով: Գյուղական վայրերում փոստային կապ չլինելու դեպքերում ծանուցադրերը կողմերին հանձնելու համար ուղարկվում են դյուղխորհուրդներին միլիցիայի միջոցով, կամ այդ անհրնարին լինելու դեպքում արվում են հայցվորին՝ մյուս կողմին հանձնելու համար:

(ՀՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորչման խմբագրությամբ):

67. Դատարանի բոլոր հարաբերությունները Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմաններից դուրս գտնվող անձանց ու հիմնարկների հետ տեղի յե ունենում Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի միջոցով:

68. Դատարանի ծանուցադրերը պիտի պարունակեն.—ա) դատարանի անունը, բ) նիստի վայրի ու ժամանակի, այլև կողմերի ու այն գործի նշումը վորի

համար դատակոչն և տեղի ունենում, դ) առաջարկու-
թյուն գործի վերաբերյալ բոլոր ապացույցները ներ-
կայացնելու մասին և զ) դատարանին չներկայանա-
լու հետևանքները:

69. Դատարանի ծանուցագրերն ու հաղորդում-
ները կանչվողներին հանձնվում են անձամբ: Հանձ-
նելու թվականը նշանակվում է հանձնվող ծանուցա-
գրի՝ դատարանին վերադարձվելիք կտրոնի վրա:

70. Յեթե ծանուցագրերը տեղ հասցնող սլաշտոնա-
տար անձը չկարողանա տեսնել դատարան կանչվողին,
ծանուցագրերը նա հանձնում է ընտանիքի՝ նրա հետ
միասին ապրող անդամներից մեկին, այն տան կամ
հիմնարկի վարչությանը, վորտեղ ծանուցագրեր ստա-
ցող անձը մշտապես ապրում է կամ մշտական դրաղ-
մունք ունի:

71. Յեթե այն անձը, վորին դատարանի ծանու-
ցագրերը պիտի հանձնվի, հրաժարվի այն ընդունելուց,
հանձնողն այդ մասին հիշատակում է կտրոնի վրա:

72. Պատասխանողի խկական բնակավայրը հայա-
նի չլինելու դեպքում դատարանը գործը լսում է, յերբ
դատարանում ստացվում է ծանուցագրի պատճենը՝
պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի
տնային վարչության մակագրությամբ այն մասին,
թե նա (տնային վարչությունը) ծանուցագրերն ստա-
ցել է:

73. Դատարանի ծանուցագրերը համապատասխան
անձին ուղարկվում է կողմի ցույց տված հասցեյով:

74. Կողմերն իրենք են պարտավոր տեղեկություն
տալու դատարանին, յեթե գործի ընթացքում իրենց
հասցեն փոխել են: Յեթե այդպիսի տեղեկություն չի

տրված, ծանուցագրերն ուղարկվում է դատարանին
հայտնի վերջին հասցեյով, վորով ծանուցագրերը
հանձնվել են և հասցված է համարվում, նույնիսկ յե-
թե հասցետերն այլևս այն հասցեյով ապրելիս չլինի:

ՄԱՍ ՅԵՐԿՐՈՐԳ

ՀԱՅՑԱՅԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ Լ Ո Ւ Խ VIII

ՀԱՅՑ ՀԱՐՈՒՅԵԼԸ

75. Դատարանը քաղաքացիական գործի ըննու-
թյանը ձեռնարկում է զրավոր դիմումի հիման վրա.
բանավոր դիմում թույլ է տրվում միայն ժողովրդ-
դական դատարանում վարվող գործերի նկատմամբ:

76. Հայցադիմումը սխախ պարունակի.—

ա) հայցվորի, այսինքն՝ հայց հարուցող անձի
ճիշտ անունը, այլ և նրա փոխանորդինը, յեթե վեր-
ջինն է հայցադիմում տվողը.

բ) պատասխանողի, այսինքն՝ հայցի վերաբեր-
մամբ պատասխանելու կանչվող անձի ճիշտ անունը.

գ) հայցվորի և նրա փոխանորդի ու պատասխա-
նողի մշտական բնակավայրի կամ մշտական դրաղմուն-
քի վայրի ճիշտ մատնանշումը.

դ) հայցի հիմք ծառայող հանգամանքները և հայ-
ցը հաստատող ապացույցները.

ե) հայցվորի պահանջն ու հայցադիմումը:

Ծանոթություն.— 1. Այս հոդվածում «անձ» ասե-
լով հասկացվում են թե ֆիզիկական և թե
իրավական անձինք:

Ծանոթություն.— 2. Փոխանորդի տված հայցա-

գլխումներին կցվում է փոխանորդադիր կամ լիազորագիր (հոդ. 17) :

77. Բանավոր գլխումը ժողովրդական դատավորը կամ նրա հանձնարարութեամբ՝ քարտուղարը մտցնում է արձանագրութեան մեջ և կարգում հայցվորին : Արձանագրութեանը ստորագրում են դատավորն ու գլխումը տվողը :

78. Գերազույն Դատարանում քննվելիք գործերի վերաբերյալ հայցերն ու բոլոր փաստաթղթերը ներկայացվում են՝ հակառակ կողմից մասնակցողներին թվով պատճենների հետ միասին, վոր վավերացնում է կողմն ինքը : Այդ պատճենները դատարանը հանձնում է հակառակ կողմին առաջին ծանուցադրի հետ միասին :

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիս 7-ի վորոշման խմբագրութեամբ) :

Ծանոթութուն — Այս հոդվածով նախատեսված կարգը ժողովրդական դատավորը կարող է տարածել իրեն ընդդատյա վորոշ կատեգորիայի գործերի վրա, նայած նրանց բարգուծյանը, բնույթին և հայցվորի սոցիալական դրութեանը :

[1929 թ. սեպտեմբերի 4-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 149)] :

79. Գործի վերաբերմամբ ներկայացված իսկական փաստաթուղթը կարելի յե հետ վերցնել, գործի մեջ թողնելով պատճենը, վոր պետք է վավերացնի ներկայացնող կողմը : Այսպիսի դեպքում հայցի հիմք ծառայող փաստաթղթի իսկականի վրա պետք է մակագրվի այն մասին, թե նրա հիման վրա հայցային գործ է սկսված, իսկ փաստաթուղթն ստացվել է գոր-

ծըն ալաբրտվելուց հետո, նաև այն մասին, թե գործի վերաբերյալ ինչ վճիռ է կայացվել :

80. Ժողդատավորը կարող է հայցվորի խնդրով կամ իր նախաձեռնութեամբ միանձնարար կանչել կողմերին, յսել նրանց մասնավոր միջնորդութեանները և վորոշումների կարգով բավարարել կամ մերժել այդ միջնորդութեանները, նշանակել փորձաքննութեան թե կողմերի խնդրով և թե իր նախաձեռնութեամբ, պահանջել կողմերից ներկայացնելու ապացույցներ և գլխումը առարկութեաններ և կատարել ստուգողական այլ գործողութեաններ, հարկ յեղած դեպքերում հարցաքննելով այդ առթիվ վկաներին : Գործը նախապարտատեսելու վերաբերյալ հարցերի մասին դատավորի կայացրած բոլոր մասնավոր վորոշումները մասնավոր կարգով դանդատարկման յեթակա չեն : (ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիս 7-ի վորոշման խմբագրութեամբ) :

81. Հայցադիմումը մնում է առանց ընթացքի, յեթե պահպանված չեն 76 և 78 հոդ. պահանջները, և յեթե նրանց համար դատական տուրք և գրոշմատուրք չի վճարված, վորի մասին դատարանը տեղեկացնում է հայցվորին և ժամանակ է տալիս նրան թերութեանները լրացնելու համար : Յեթե հայցադիմումի թերութեանները մատնանշված ժամկետում լրացրած չլինեն, գլխումը համարվում է չոված :

Ծանոթութուն — Հակադարձ հայցադիմումի բոլոր թերութեանները պետք է լրացրած լինեն վոչ ուշ, քան գործը յսելու համար նշանակված որը, հակառակ դեպքում, ներկայացրած հակընդդեմ հայցը տվյալ դատավարութեան ընթացքում քննութեան չի առնվում :

ՀԱՅՅԻ ԱՊՍՀՈՎՈՒՄԸ

82. Գործի ամբողջ ընթացքում, քանի դեռ վճիռ չի կայացել, հայցվորը կարող է խնդրել, վոր իր հայցն ապահովվի:

Ծանոթություն.— 1. Պետական ամեն կարգի հիմնարկների ու ձեռնարկությունների դեմ հարուցված հայցերն ապահովության յենթակա չեն, բացի այն հայցերից, վորոնք բողոքում են պետական կառավարիչ բաղադրիկ կամ գերակշիռ մասնակցությամբ գործող վարկային հիմնարկների գործառնություններից, ինչպես նաև այն դեպքերից, յերբ հայցեր հարուցում են վարկային-կոոպերատիվ կազմակերպություններն իրենց գործառնություններից բխող պահանջների վերաբերմամբ:

Ծանոթություն.— 2. Ապրուստի միջոցների և աշխատավարձի վերաբերյալ գործերով դատարանը պարտավոր է հայցադիմումն ընդունելիս քննության ատենել հայցն ապահովելու հարցը՝ անկախ այդ մասին հարուցած միջնորդությունից:

(ՀեՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հունիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

83. Հայցի ապահովումը թույլ է տրվում. ա) յերբ հայցը ներկայացրած փաստաթղթերով բավականաչափ հիմնավորված է յերևում, բ) յերբ հայցի ապահովման համար միջոցներ ձեռք չառնելը հայցվորի համար անհնարին կարող է դարձնել բավարարություն ստանալը կամ յերբ նույն այդ պահանջի բնույթն այն-

պես է, վոր հասպտումը կռվարացնի կամ անկարելի կդարձնի վճուի կատարումը:

83-ա. Ալիմենտի բռնադանձման վերաբերյալ գործեր քննող ժողովրդական դատավորը կամ դատախազը, վորի մոտ է գտնվում գործի քննությունը, պարտավոր են միջոցներ ձեռք առնել հայցն ապահովելու պատասխանողի աշխատավարձի վորոշ մասի վրա կաշանք դնելու, այլև պատասխանողի դույզը վերգրելու և կաշանքի տակ առնելու ձևով:

[1937 թ. ոգոստոսի 9-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 8, հոդ. 34)]:

84. Դատարանն ապահովում թույլ տալով, կարող է պահանջել հայցվորից, վոր նա ել իր կողմից ապահովի պատասխանողին հնարավոր վնասներից:

85. Դատարանը կարող է ապահովել կամ ամբողջ հայցը կամ միայն նրա այն մասերը, վոր ինքը բավականաչափ հիմնավորված կհամարի:

86. Հայցերն ապահովելու վերաբերյալ խնդիրները լուծում է ժողովրդական դատավորը կամ գործը քննող դատարանը նույն ուրը, առանց հակառակ կողմին կանչելու:

87. Հայցն ապահովում է պատասխանողին պահանջող՝ նրա կամ կողմնակի անձանց մոտ յեղած դույզի վրա արդելք դնելով:

88. Պետական հիմնարկի կամ պետական ձեռնարկության կողմից մասնավոր ձեռնարկության դեմ հարուցված հայցն ապահովելիս դատարանը կարող է թույլ տալ, վոր հայցվորն իր ներկայացուցիչը նշանակի ձեռնարկության կանոնավոր ընթացքի վրա հսկելու համար:

ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

89. Դատարանը՝ կողմերից մեկի խնդրով և հա-
կառակ կողմի առարկությունը նկատի առնելով, կարող
է ապահովության մի ձևը մի այլ ձևով փոխարինել,
այլև ապահովության մի քանի ձևեր թույլ տալ այն
պայմանով, վոր նրանց ընդհանուր դումարը հայցա-
դումարից ալելի չլինի: Դրամական հայցի ապահո-
վության դեպքում՝ պատասխանողը դատարանի թույլ
տված ապահովության փոխարեն կարող է իբրև ա-
վանդ՝ դատարանի գիպողիար մուծել հայցապումարը:

90. Հայցերի ապահովության վերաբերյալ վորո-
շումները կատարվում են դատական վճիռների կատար-
ման համար սահմանված կարգով:

91. Հայցերի ապահովության գործերի վերաբեր-
մամբ դատարանի կայացրած վորոշումները դեմ կարելի
յե դանդառ տալ մասնավոր կարգով (հոդ. 249). յե-
թե վորոշումը կայացվել է դանդառավորի բացակա-
յությամբ, այդ դեպքում 249 հոդ. նախատեսված
ժամկետի ընթացքն սկսվում է դատական կատարածուք
ծանուցագիրն ստանալու օրից:

Ծանոթություն. — Գանդատ տալը գործի հետագա
քննությանն արդեւք չի հանդիսանում:

92. Գանդատ տալը չի կասեցնում ապահովության
մասին կայացրված վորոշման կատարումը: Ապահովու-
թյան համար ձեռք առած միջոցը վերացնելու մասին
կայացված հետագա վորոշման դեմ հայցվորի տված
դանդառը կասեցնում է այդ վորոշման կատարումը:

93. Այն պատասխանողը, վորի ոգտին վճոված է
գործը, կարող է հայցվորից պահանջել հայցի ապահո-
վությամբ իրեն պատճառած վնասները:

94. Գործի դատաքննությունը կատարվում է գործն-
բաց և բանավոր: Աղբյային փոքրամասնության շրջա-
նում դատաքննությունն անպայման կատարվում է
տեղական բնակչության մեծամասնության լիզվով:

[1932 թ. մայիսի 13-ին, (Որ. և Կարգ. Ժող. Դճ
2, հոդ. 49)]:

95. Յեթե ըստ գործի հանդամանքների՝ դռնբաց
դատաքննությունը ցանկալի չլինի հանրային շահի
պաշտպանության տեսակետից, այլև յեթե գործի հան-
դամանքները կողմերից մեկի խնդրով կյանքն են շոջա-
փում, դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմե-
րի խնդրով կարող է վորոշել գործը կամ նրա վորոշ-
մասերը քննել դռնփակ նիստում:

96. Գործը դռնփակ նիստում լսելու դեպքում դա-
տարանը թույլ է տալիս նիստին ներկա լինել միայն
կողմերին և նրանց փոխանորդներին, վկաներին ու
փորձագետներին: Դատարանի վճիռը համենայն դեպս
հայտարարվում է դռնբաց:

97. Գործի քննությունն սկսելիս դատարանը պար-
զում է, թե դատարան կանչվածներից ո՛վ է յեկել և
ի՞նչ տեղեկություններ կան մնացածների չգալու պատ-
ճառների մասին:

98. Կողմից վորեւ մեկի ջներկայանալը, վորին
ծանուցագիր հանձնված յլնելը դատարանին հայտնի
յե, գործի քննությունն ու վճոահատությանն արդեւք
չի հանդիսանում:

99. Յեթե դատարանը չեկած կողմի անձամբ բացատրություն տալն անհրաժեշտ է համարում, հետաձգում է դատաքննությունը: Հայրվորին կամ պատասխանողին անձամբ բացատրություններ տալու համար դատարան կանչելը թույլ է տրվում և այն դեպքում, յերբ դործին մասնակցում է նրանց փոխանորդը:

100. Յերբ կողմը յերկրորդ անգամն է կանչվում՝ բացատրություն տալու անհրաժեշտությունը նրան մատնանչելով, և առանց հարգելի պատճառների չի ներկայացնում, դործը վճռվում է յեղած ավյալների հիման վրա:

Ծանոթություն.— Յեթե կողմերը յերկրորդ անգամն են կանչվում և չեն ներկայանում և դործը վճռելու համար ավյալներ չեն լինում, դատարանը կարող է կարճել դործը: Այս կարգով դործը կարճվելու դեպքում չահարգում կողմը հետագայում նորից կարող է դիմել դատական պաշտպանության, ընդհանուր կարգով:

(ՀՍՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբադրությամբ):

101. Չքափոր և անաշխատունակ ամուսնու համար պարուստ (ալիմենտ) պահանջելու և աշխատավարձի վերաբերյալ դործերով դատարանը կարող է վորոշել պատասխանողին բերման յենթադիելու միայն այն դեպքում, յեթե դատարանը նրա անձամբ ներկայանալն անհրաժեշտ համարի, նաև յերկրորդ անգամ համապատասխան նախադուշացմամբ կանչելուց հետո:

101-ա. Ծնողներից՝ յերեխաներին պահելու հա-

մար (ալիմենտ) միջոցներ բռնադանձելու, ինչպես նաև յելվ հայրությունը հաստատելու մասին դործերով, դատարան ներկայանալը սրարտադիր է: Պատասխանողի չներկայանալու դեպքում դատարանը վորոշում է կայացնում նրան միլիցիայի մարմինների միջոցով բերել տալու մասին: Անկախ բերել տալուց, պատասխանողի առանց հարգելի պատճառների չներկայացնելու դեպքում, դատարանը կարող է նրան մինչև 100 ռ. տուգանել և մինչև դործը վճռվելը նրանից ստորագրություն վերցնել չմեկնելու մասին:

Այդ դործով պարտադիր կերպով ներկա լինելուց պատասխանողը կարող է աղափել միայն՝ դատարանից իր բնակավայրի հեռավորության դեպքում կամ յուրաքանչյուր առանձին դեպքում դատարանի վորոշմամբ այլ հարգելի պատճառներով:

[1937 թ. ոգոստոսի 9-ին, (Որ. և Կարդ. ժող. № 8, հոդ. 34)]:

102. Մինչև դործն ըստ եյության քննելը կողմերը կարող են հայտարարություններ անել դործը տրվյալ դատարանում կամ դատարանի ավյալ կազմով քննելու անկարելիության մասին:

103. Դատարանը կարող է վորոշել դործը հանձնել մի այլ դատարանի կամ այլ հիմնարկի հետևյալ դեպքերում. ա) յեթե դատարանը գտնում է, վոր ավյալ հայցը, դործի հանգամանքներին նայելով՝ ավելի մեծ հարմարությամբ կարող է վճռել գլխավոր ստուգողական դործողությունները կատարելու վայրում կամ առհասարակ այլ դատարանում և վոչ հայցվորի ընտրած դատարանում (հոդ. 30), բ) յեթե բավարարելի համարվի բնակավայրն անհայտ (հոդ. 26) պատաս-

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

խոնարհի խնդիրը՝ գործը նրա խոհական բնակավայրը տեղափոխելու մասին դ), յեթե ժողովրդական դատավորին հեռացնելուց հետո (հոդ. 104) նրան տվյալ դատաքանուժ փոխարինելը գծվարության հանդիպի : գ) յեթե դատարանը գործն այլ հիմնարկի (Արքիարած անձնաժողով և այլն) ընդդատյա համարի :

104. Եթե դատավորը կամ ժողովրդական ատենակալը շահազրկված է գործի յեւթով կամ վորոչ հարաբերություններ ունի կողմերի հետ, նա հեռացվում է գործի քննությանը մասնակցելուց թե կողմերի և թե իր սեփական հայտարարության հիման վրա, վոր դատավորը կամ ատենակալը պարտավոր է անել դատարանին՝ նույնիսկ կողմերի հայտարարությունը չլինելու դեպքում :

105. Գործի դատաքննությունն ըստ ելության սկսվում է նրանով, վոր դատարանն առաջարկում է կողմերին բացատրություններ տալ՝ հիմնվելով գործին կցված իրենց բոլոր ապացույցների վրա :

106. Գործի դատաքննությունը սկսվելուց հետո կողմերի նոր ապացույցներ ներկայացնելը թույլ է տրվում միայն այն դեպքում, յերբ դատարանը հարգելի յե համարում ապացույցները ժամանակին չներկայացնելու պատճառները :

107. Գործը հետաձգելիս դատարանը նշանակում է ապացույցները ներկայացնելու կամ ստուգելու համար ժամկետ, այլև, յեթե այդ հնարավոր է, նիստի օրը :

108. Դատարանը գործը բավականաչափ պարզված համարելով, դադարեցնում է դատախոսությունը և անցնում է վճռահատությանը :

109. Յուրաքանչյուր նիստի մասին և նիստից դուրս կատարված յուրաքանչյուր առանձին դատական գործողության մասին կազմվում է արձանագրություն :

110. Արձանագրության մեջ մասնանշված պիտի լինի նիստի կամ գործողության վայրն ու ժամանակը, դատարանի կազմը, յեկամ կողմերը, գործին մասնակցող անձանց, վկաների և դիտակ անձանց բացատրությունների և հայտարարությունների ելությունը, գործին մասնակցող անձանց մասնավոր խնդիրները, դրանց դեմ արված առարկությունները և դատարանի վորոշումները, ներկայացրած ապացույցներն ու փաստաթղթերը :

111. Արձանագրությունները կազմվում են նույն նիստում կամ առանձին գործողություն կատարելիս՝ նիստից դուրս : Արձանագրություններն ստորագրում են վկաները և դիտակ անձինք՝ միայն այն մասերը, վոր իրենց են վերաբերում, իսկ հետո կողմերն ու դատարանը :

112. Գործին մասնակցող անձանց թույլ է տրվում նայել արձանագրությունը, վորը հաստատվելուց վոչ ուշ, քան յերեք օրվա ընթացքում նրանք կարող են ներկայացնել իրենց դիտողությունները արձանագրության առթիվ : Նախադասից է կախված արձանագրության այս կամ այն դիտողության առթիվ նրա մեջ համապատասխան փոփոխություններ մտցնելը :

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

113. Դատարանը պարտավոր է կասեցնել դատա-
վարութիւնը՝ ա) կողմերից մեկի մահվան դեպքում,
բ) կողմերից մեկի վրա խնամակալութիւն նշանակե-
լու կամ դատարանում հայց հարուցելու և պատաս-
խանելու իրավունքի այլ սահմանափակման անհրա-
ժեշտութեան դեպքում, գ) դործի մեջ կողմ հանդի-
սացող իրավական անձի գոյութիւնը դադարելու
դեպքերում, դ) կողմի՝ Կարմիր Բանակի դործող մա-
սը կանչվելու դեպքում, ե) յերբ տվյալ դործը չի կա-
րող վճռվել մի այլ դործ վճռելուց առաջ, վերը քըն-
նրվելու յի քաղաքացիական, քրեական կամ վարչա-
կան կարգով:

(ՀեՍՀ Կենտդործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վո-
րոշման խմբագրութեամբ):

Ծանոթութիւն.— 1 Այս հոդվածուց մատնանշված
առիթները, յեթե յերեվան են գալիս մինչև
դործի դատավարութիւնը, ժողովրդական
դատավորը պարտավոր է միանձնաբար կա-
սեցնել դատաքննութիւնը:

[1932 թ. 2/3, (Որ. և Կարգ. Ժող., № 1,
հոդ. 13)]:

Ծանոթութիւն.— 2. Արգելվում է դործը հետա-
ձգել կամ կասեցնել՝ կողմերի միջև հաշտու-
թեան բանակցութիւններ վարելու համար:

[1932 թ. 4/9, (Որ. և Կարգ. Ժող., № 1,
հոդ. 149)]:

Ծանոթութիւն.— 3. Այս հոդվածում մատնանշը-
ված առիթները, յեթե յերեվան են գալիս

մինչև դործի դատավարութիւնը, ժողովրդ-
ական դատավորը նույնպես կարող է մի-
անձնաբար կասեցնել դատաքննութիւնը:

[1932 թ. մարտի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող., №
1, հոդ. 13)]:

114. Դատարանը լայն հիշյալ դեպքերից կարող
է կասեցնել դատավարութիւնը՝ ա) կողմերի փոխա-
դարձ համաձայնութեամբ, բ) կողմերից մեկի Կարմիր
Բանակ կամ այլ ձևի պարտադիր պարհակ կատարե-
լու համար կանչվելու դեպքում:

115. 113 հոդ. «ա», «բ» և «գ» կետերով նախա-
տեսված դեպքերում դառ սվարութիւնը կասեցվում
է, մինչև դուրս մնացած կ դմերի իրավահաջորդը կամ
որինական ներկայացուցիչը դործի մեջ մտնի կամ հա-
կառակ կողմը նրանց դործի մեջ քաչի:

116. 113 հոդ. «ա», «բ» և «գ», 114 հոդ. «ա»
կետերում մատնանշված պատճառներով կասեցված
դործերի համար վաղեմութեան ժամկետի ընթացքը
(Քաղաքացիական Որենսդրելի 51 հոդ.) սկսվում է դա-
տավարութիւնը կասեցնելու որից, իսկ 113 հոդ. «դ»
և 114 հոդ. «բ» կետերում նախատեսված դեպքերում
— կողմի՝ Կարմիր Բանակի դործող մասից դուրս
գալու կամ պարտադիր զինվորական ծառայութիւնն
ավարտելու որից:

(ՀեՍՀ Կենտդործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վո-
րոշման խմբագրութեամբ):

117. Դատավարութիւնը վերսկսվելու դեպքում
դատարանը կողմերին կանչում է ընդհանուր հիմունք-
ներով:

ԱՊԱՅՈՒՅՅՆԵՐ

118. Յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցելու այն հանգամանքները, վորոնց վրա նա հիմնում է իր պահանջներն ու առարկությունները: Ապացույցներ ներկայացնում են կողմերը, բայց դատարանը կարող է իր նախաձեռնությամբ ապացույցներ հավաքել: Յեթե ներկայացրած ապացույցները բավական չլինեն, — դատարանը կարող է կողմերին առաջարկել ներկայացնել լրացուցիչ ապացույցներ:

119. Կողմերի ներկայացրած այս կամ այն ապացույցները թողյալ տալը կախված է նրանից, թե դատարանը դործի համար այդ ապացույցներն եյական է համարում, թե՞ չէ:

120. Դատարանն է վորոշում, թե կարելի՞ յե, արդյոք, վորոշ հանգամանք ապացույցների կարոտ չհամարել:

121. Դատարանը իր նախաձեռնությամբ կամ կողմերի խնդրանքով կարող է ներկայացրած ապացույցների ստուգման անհրաժեշտ դործողություններ կատարել՝ տեղադնություն, զիտակ անձանց (փորձապետների) կանչելու, վկաներ կանչելու ու հացրաքննելու և վաստաթղթեր ստուգելու միջոցով ॥

122. Ապացույցների ստուգման մասին կողմերին հայտնվում է նաև այն դեպքում, յերբ այդ կատարվում է դատական նիստի վայրից դուրս: Յեթե դործողությունը կատարվում է ավյալ դատարանի շրջանում, կողմերը կանչվում են սովորական կարգով:

ԱՊԱՅՈՒՅՅՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

123. Այն անձինք, վորոնք հիմք ունեն յերկյուղ կրելու, թե իրենց համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը հետադայում անկարելի կամ խիստ դժվար կլինի, կարող են խնդրել ժողովրդական դատավորից՝ միանձնաբար ապահովելու այդ ապացույցները:

Յեթե դեռ չի հարուցված այն հարցը, վորի համար այդ ապացույցները կարող են կարևոր լինել, ապացույցները ապահովումը կատարում է ժողովրդական դատավորը միանձնաբար, առանց կողմերին հրավիրելու:

(1932 թ. մարտի 9-ին Որ. և Կարգ. ժող. № 1, հոդ. 13):

124. Ապացույցների ապահովման վերաբերյալ խնդիրը քննում է այն մշտական ժողովրդական դատավորը, վորի շրջանում տեղի պիտի ունենան ապացույցների ապահովման դործողությունները:

125. Ապացույցների ապահովման մասին տրվող խնդիրը պիտի պարունակի՝ 1) պահանջվող ապացույցների եյությունն ու ձևը, 2) այն հանգամանքները, վորոնք պիտի հաստատվեն այդ ապացույցներով և 3) ապացույցների ապահովման մասին խնդրելու հիմքը:

126. վերացված է:

(ՀեՍՀ Կենսոդորձկումի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշումը):

127. Ժողովրդական դատավորն ապացույցների ա-

պահանջները թույլ տալու մասին վերոշում կայացնելիս նրա մեջ ցույց ե տալիս ապահովման կարգն ու յեղանակը :

Ժողովրդական դատավորի կողմից ապացույցների ապահովում թույլ տալու դեմ չի կարելի մասնավոր դանդատ տալ :

[1932 թ. մարտի 9-ին, (Որ. և կարգ. Ժող. № 1, հոդ. 13)]:

Գ Լ ՈՒ Խ XV

ԱՊՍՅՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐ

I. Վկայություններ

128. Վկայությունները թույլ են տրվում բոլոր դեպքերում, բացի այն դեպքերից, յերբ որենքը վորոշ գործողությունների ու հարաբերությունների համար պարտադիր գրավոր ձև ե սահմանում :

129. Վոչ վոք դատարանում վկա լինելուց հրաժարվելու իրավունք չունի, բացի այն դեպքերից, յերբ պահանջվող փաստերը հաղորդելը գուցորդված ե պետական կամ ծառայության դաղտնիքների խախտման հետ :

130. Յեթե կողմը հայանում ե, վոր վկան շահագրգռված ե գործի յեւքով կամ յեթե վորոշ հարաբերություններ կան վկայի ե կողմի միջև, դատարանը կարող ե թույլ չտալ այդպիսի վկայի հարցաքննությունը :

131. Վկա առաջարկող կողմը պարտավոր ե մատնանչել այն հանդամանքները, վոր այդ վկան պիտի

հաստատի ե հայտնել նրա անունը, աղբանունն ու բնակավայրը :

132. Դատարանը վկաներին հարցաքննում ե, նախադրուչացնելով այն պատասխանատվության մասին, վորն ընկնում ե նրանց վրա սուտ ցուցմունքներ տալու համար՝ Գրեական Որենսգրքի 119 հոդ. համաձայն :

(ՀեՄՀ կենտգործկումի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ) :

133. Յուրաքանչյուր վկա հարցաքննվում ե առանձին :

134. Գործի քննության ժամանակ չեն կարող նիստի դահլիճում ներկա լինել դեռ ցուցմունքներ չբաված վկաները :

135. Վկաներին հարցաքննելու հերթը վորոշում ե դատարանի նախագահը :

136. Ամեն մի հարցաքննված վկա մինչև բոլոր վկաների հարցաքննությունը վերջանալը պիտի մնա դատարանի նիստում, յեթե դատարանը թույլ չտա նրան ավելի շուտ հեռանալ :

137. Վկան կարող ե յերկրորդ անգամ հարցաքննվել նույն կամ հետագա նիստում իր դիմումի հիման վրա, վորմերի խնդրանքով կամ դատարանի նախաձեռնությամբ :

138. Դատարանը վկաներին կարող ե յերես առ յերես անել նրանց վկայությունների մեջ յեղած հակասությունները պարզելու համար :

139. Գործը քննող դատարանի գործունեյության չրջանից դուրս մչտական բնակություն ունեցող վկաներին հարցաքննում ե նրանց բնակության չրջանի ժո-

ղովբղական դատավորը միանձնաբար, խակ յեթե նը-
րանք ներկայանան զործը քննող դատարանին, թույ-
լաարվում է նրանց այնտեղ հարցաքննել:

[1932 թ. մարտի 9-ին (Որ. և Կար. Ժող. № 1,
հոդ. 13)]:

II. ԳՐԱՎՈՐ ԱՊԱՅՈՒՅՅՆԵՐ

140. Գրավոր ապացույցները, այն է՝ ամեն ակ-
սակ զբաղոր ահտեր, փաստաթղթեր, զործաթղթի և
մասնափոր բնույթ՝ ունեցող զբաղբուրթյուն դատարա-
նին ներկայացնում են կողմերն իրենք, կամ կարող է
պահանջել դատարանը:

141. Այն կողմը, վոր դատարանի միջոցով մյուս
կողմից կամ զործին չմասնակցող անձերից պահան-
ջում է փաստաթուղթ ներկայացնել, պետք է մանրա-
մասն վորոշի իր պահանջած փաստաթուղթը և ցույց
տա, թե ինչ հիմք ունի յենթադրելու, վոր փաստա-
թուղթը հակառակ կողմի կամ այդ անձանց ձեռքում
է, և այն հանգամանքները, վորոնք կարող են այդ
փաստաթղթով հաստատվել:

142. Պետական հիմնարկներից ու մասնավոր ան-
ձերից դատարանի պահանջած փաստաթղթերն ու-
ղարկվում են անմիջականորեն դատարանին: Դատա-
րանը կողմերին կարող է վկայական տալ պետական
հիմնարկներից ու մասնավոր անձերից փաստաթղթեր,
պատճեններ և ամեն տեսակի տեղեկություններ ստանա-
լու համար՝ դատարանին ներկայացնելու նպատակով:

143. Նախորդ հոդվածում հիշատակված հիմնարկ-
ներն ու անձինք, յեթե չեն կարող դատարանի սահ-

մանած ժամկետում պահանջված փաստաթուղթեր ներ-
կայացնել, պարտավոր են այդ մասին հայտնել դա-
տարանին, մատնանշելով պատճառը: Պատճառը հար-
գելի չլինելու, այլև չհայտնելու դեպքում դատարա-
նը կարող է տուգանել այս Որենսգրքի 52 հոդ. համա-
ձայն:

144. Յեթե դատարանին փաստաթղթեր ներկայաց-
նելը դժվար լինի, որինակ՝ դրանք բաղմաթիվ լինե-
լու կամ դատարանի համար միայն մի մասի նշանա-
կություն ունենալու պատճառով, դատարանը կարող
է պահանջել պատշաճ կարգով վավերացրած քաղվածք-
ներ կամ փաստաթղթերի քննությունը կատարել տե-
ղում:

145. Յեթե փաստաթղթերը ներկայացրած են վոչ
դատախոսության լեղվով, պիտի ներկայացվի նաև նը-
րանց պատշաճ թարգմանությունը:

146. Գրավոր ապացույցների դեմ կարելի յե ա-
ռարկել, բացի որենքով հատկապես մատնանշված դեպ-
քերից:

147. Փաստաթղթերն ընդունվում են իբրև ապա-
ցույց նաև այն դեպքում, յերբ նրանք կազմված են
դրոշմատուրքի կանոնների խախտումով, բայց դատա-
րանն այդպիսի փաստաթուղթն ստանալիս անհապաղ
վորոշում է դրոշմատուրքի կանոնադրությունը խախ-
տողներից բոլոր տուրքերն ու տուգանքները դանձե-
լու մասին: Այս վորոշման դեմ կարելի յե դանդառ
տալ մասնավոր կարգով (հոդ. 249):

Ծանոթություն. — Առանց դրոշմատուրք վճարելու
ներկայացրած փաստաթուղթը հետ չի տըը-
վում առանց դրոշմատուրքը գանձելու:

148. Յեթե հակառակ կողմը հայտնում է, թե դործի համար ներկայացրած փաստաթուղթը կեղծ է, փաստաթուղթ ներկայացնող կողմը կարող է հրաժարվել այն վորպես ասպացույց սպտադործելուց և խնդրել դատարանից շարունակել դործի քննությունն այլ ասպացույցների հիման վրա:

149. Յեթե փաստաթուղթը, վորի մասին կասկած է հայտնված (հոդ. 148), ներկայացնող կողմի պահանջով թողնվում է դործի մեջ վորպես ասպացույց, փաստաթղթի կեղծ լինելու մասին հայտնող կողմը դատարանի սահմանած ժամկետում պարտավոր է փաստաթղթի կեղծ լինելու ասպացույցներ ներկայացնել:

150. Փաստաթուղթը կեղծ հայտարարելու դեպքում քաղաքացիական դործը քննող դատարանը փաստաթղթի իսկական լինելը ստուգում է հետևյալ յեղանակներից մեկնումեկով. ա) փաստաթուղթը գննելով և այլ փաստաթղթերի հետ համեմատելով, բ) հարցաքննելով այն վկաներին, վորոնք մատնանշված են փաստաթղթի մեջ, կամ վորոնց կողմերն են հիշատակում, այլև—դատարանի նախաձեռնությամբ կանչվածներին, գ) համեմատելով կասկածելի հայտարարված փաստաթղթի ձեռագիրը և նրա վրա յեղած ստորագրությունը նույն անձի անվիճելի փաստաթղթերի վրա ունեցած ստորագրության հետ, դ) փորձաքննության յենթարկելով:

151. Յեթե դատարանը համոզվում է, վոր փաստաթուղթը կեղծ է, հանում է ասպացույցների շարքից և դործ է հարուցում քրեական կարգով:

152. Գործի դատաքննության ժամանակ մասնագիտական տեղեկություններ պահանջող հարցեր ծառայու դեպքում, նրանց պարզարանության համար դատարանը կարող է նշանակել փորձագետներ:

153. Կողմերը կարող են բացարկել փորձաքննության համար հրավիրվող անձանց նույն հիմունքներով, ինչպես և վկաներին:

154. Փորձագետներ նշանակելու վերաբերյալ վորոշման մեջ պետք է ցույց տրվի, թե ինչ հանդամանքների համար և պահանջվում նրանց յեզրակացությունը:

155. Փորձագետներն իրենց յեզրակացությունները տալիս են դրավոր կամ բանավոր՝ դատարանի հայեցողությամբ: Բանավոր յեզրակացությունները մշտցրվում են արձանագրության մեջ և ստորագրվում փորձագետի կողմից: Գրավոր յեզրակացություն տալու դեպքում փորձագետներին դատարանը կարող է պարտավորեցնել բանավոր պարզարանել իրենց յեզրակացությունը:

156. Փորձագետներն իրենց հետաքրքրող հանդամանքները պարզելու համար կարող են հարցեր տալ վկաներին և մասնակցել տեղադննության ու ասպացույցների ստուգման:

157. Փորձագետների յեզրակացության մեջ բոլոր հետևությունները պետք է հիմնավորված լինեն:

158. Փորձագետների հետազոտությունը լրացնելու և յեզրակացությունը պարզարանելու անհրաժեշտու-

Թյան, այլև մի քանի փորձազետներ յեղրակացությունները հակառական լինելու դեպքում դատարանը կարող է նրանցից լրացուցիչ բացատրություն պահանջել կամ ուրիշ փորձազետներ նշանակել:

159. Փորձաքննությունը կատարվում է դատարանում կամ դատարանից դուրս, յեթե այդ պահանջում է հետազոտության բնույթը, կամ, յեթե դժվար է հետազոտելի առարկան դատարան բերել:

160. Տեղադննություն կատարում է դատարանն ամբողջ կազմով կամ դատական նիստում նախագահողը:

161. Տեղադննությանը ներկա լինելու համար ծանուցագրերը ստացած կողմերի չգալը չի կասեցնում գննությունը:

162. Տեղադննության ժամանակ կատարված գործողությունների մասին արձանագրություն է կազմվում, վորն ստորագրում են գննության բոլոր մասնակցողները: Արձանագրությանը կցվում է վերգրի ցուցակի հետ միասին գննության ժամանակ կազմված կամ համեմատված բոլոր հատակագծերը, գծագրերը, նկարները և այլն:

Գ Լ Ո Ւ Խ XVII

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅՅՎՈՐՆԵՐԻ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՅ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՆԱԿՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

163. Հայց կարող է հարուցվել մի քանի հայցվորների կողմից միատեղ, կամ մի քանի պատասխանողների դեմ:

164. Հայցվորներից կամ պատասխանողներից յուրաքանչյուրը դատավարության մեջ հակառակ կողմի նկատմամբ հանդես է գալիս ինքնուրույնաբար և դատակիցներից մեկի գործողությունները դատավարության ժամանակ մնացածներին վոչ հոգուտ և վոչ ի վնաս չեն ծառայում, բացի այն հայցերից, վորոնք բղխում են համապարտ պարտավորություններից:

165. Դատակիցները գործի վարումը կարող են հանձնել իրենցից մեկին, յեթե նույնիսկ նա առհասարակ ուրիշի գործ վարելու իրավունք չունենա:

166. Յեթե գործի դատավարության ընթացքում պարզվի, վոր հայց ներկայացնողն այն անձը չէ, վորը ավյալ հայցը ներկայացնելու իրավունք ունի կամ հայցը հարուցված է վոչ այն անձի դեմ, վոր պատասխանող է այդ հայցի դեմ, այդ դեպքում դատարանը կողմերի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ առանց գործը կարճելու կարող է թույլ տալ, վոր գործից դուրս յեկող հայցվորին կամ պատասխանողներին փոխարինի պատշաճ հայցվորը կամ պատասխանողը:

(ՀԽՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

167. Հայցվորն ու պատասխանողը կարող են իրենց կողմը քաշել յերրորդ անձանց, յեթե գործի լուծումը կարող է վերջինների համար իրավունքներ ու պարտավորություններ ստեղծել կողմերից մեկի նկատմամբ:

168. Յերրորդ անձինք կարող են գործին միջամտել հայցվորի կամ պատասխանողի կողմում, յեթե գործի վերաբերյալ վճիռը նրանց համար կարող է ի-

չափուհներ ու պարտականութիւններ ստեղծել կողմերէց մեկի նկատմամբ:

169. Վիճելի առարկայի վերաբերմամբ ինքնուրույն իրավունք ունեցող յերրորդ անձինք գործին միջամտում են հայց հարուցելով վիճող կողմերէց մեկին կամ յերկուսի դեմ՝ ընդհանուր հիմունքներով:

170. Կողմերի միջնորդութիւններով յերրորդ անձանց գործին մասնակից անելու մասին և յերրորդ անձանց վիճումներում՝ հայցվորի կամ պատասխանողի կողմում գործին մասնակցելու մասին պիտի հիշատակվի թէ ինչ հիմունքներով յերրորդ անձը պիտի կանչվի կամ իրավունք ստանա գործին մասնակցելու:

171. Յերրորդ անձանց կողմից կողմերի դեմ ինքնուրույն հայց հարուցելը, այլև յերրորդ անձանց կանչելն ու դատավարութեան մեջ գտնվող գործին միջամտելը թույլ է տրվում դատավարութեան ամբողջ ընթացքում մինչև գործի վերաբերյալ վճիռ կայացնելը:

Ծանոթութիւն.— 167, 168 և 169-րդ հոդվածներում նախատեսված միջնորդութիւնները կարելի չէ հարուցել թէ մինչև գործի դատավարութիւնը և թէ դատավարութեան ընթացքում:

Յեթե նման միջնորդութիւններն սպառվում են մինչև դատաքննութիւնը, ժողովրդական դատավորը կարող է նման հարցերը լուծել միանձնաբար:

[1932 թ. մարտի 9-ին (Որ. և Կարգ. Ժող., № 1, հոդ. 13)]:

172. Յեթե գործի դատավարութեան ընթացքում յերևան գա, վոր նրա յեղքով շահադրդոված է վորեւէ

պետական հիմնարկ կամ ձեռնարկութիւն, վորը գործին չէ մասնակցում, դատարանը պարտավոր է դատավարութեան մեջ դանվող գործի մասին տեղեկացնել պետական հիմնարկին կամ ձեռնարկութեանը, այլ և դատախազութեանը:

Ծանոթութիւն.— Այս հոդվածում մատնանշված առիթները, յեթե յերեվան են դալիս մինչև գործի դատավարութիւնը, ժողովրդական դատավորը կարող է առանց կողմերին հրաժիրելու, միանձնաբար կատարել նույն գործողութիւնը:
[1932 թ. մարտի 9-ի (Որ. և Կարգ. Ժող., № 1, հոդ. 13)]:

173. Յեթե դատարանում քննվում են մի քանի գործեր, վորոնց նույն անձինք են մասնակցում հայցվորի կամ պատասխանողի կողմում, դատարանը կարող է այդ գործերի վարույթը միացնել և վորոշել նույն գործերը քննել միասին:

Գ Լ ՈՒ Խ XVIII

ՎՃՌՍՀՍՏՈՒԹՅՈՒՆ

174. Վճիռը կայացվում է ձայների մեծամասնութեամբ: Դատավորներից վոչ վոք ձեռնազահ մնալու իրավունք չունի: Յուրաքանչյուր դատավոր կարող է գործին կցել իր առանձին կարծիքը:

175. Կայացած վճիռը գրվում է ստորագրվում և լուրջ դատավորների կողմից:

176. Կայացած վճիռը պիտի պարունակի. ա) վճռահատութեան ժամանակը, բ) դատարանի կողմը

և կողմերի անունը. դ) վեճի առարկան. դ) վճուխ հիմունքը և այն որենքները, վորոնցով դատարանը ղեկավարվել է, ե) դործի վերաբերյալ կայացած վճուխ բովանդակութունն ու նրա կատարման կարգը, զ) վճուխ գեմ գանգատ տալու կարգը, ը) դատական ծախսերի բաշխումը:

Ծանոթություն.— Յերբ պատասխանողը հանձն է ստնում և ընդունում է հայցի հիմքն ու չափը, դատարանը կարող է պատճառաբանված վճիռ չկայացնել, այլ սահմանափակվել համառոտ բանաձևով միայն:

(ՀԽՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

177. Բացառիկ դեպքերում, յեթե դործի բարդության պատճառով պատճառաբանված վճիռ կաղմելը յերկար ժամանակ կամ նախարարատարաուություն է պահանջում, դատարանը նույն նիստում դռնբաց հայտարարում է միայն բանաձևը, հետաձգելով պատճառաբանված վճուխ հայտարարումը յերեք որից վոչ ավելի ժամանակով:

(ՀԽՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

178. Դատարանի կայացրած վճիռը դռնբաց է հայտարարվում: Յեթե դատարանի անդամներից վորեւե մեկը չնախատեսված հանդամանքների պատճառով չի կարող վճիռը ստորագրել, այդ մասին հիշատակվում է նախագահի ստորագրությամբ:

179. Յեթե հայցապահանջների չափը հիմնված չէ կողմերի վաղորդ կայացած համաձայնության վրա կամ վորոշված չէ որինական կարգով (մուրհակ, պայ-

մանագիր, տարիֆներ և այլն), այդպիսի դեպքում դատարանը դործի վերաբերմամբ վճիռ կայացնելիս կարող է դուրս դալ հայցվորի ներկայացրած պահանջների սահմաններից, նկատի ունենալով դատարանում պարզված հանդամանքները:

180. Յեթե դատարանը վճիռ է կայացնում, վոր դույքը հանձնվի բնական վիճակում կամ վորոշ դործողություններ կատարվեն, այդ դեպքում դատարանը հենց նույն վճուխ մեջ մասնանշում է վճուխ կատարման ժամկետը:

181. Վճուհատությունից հետո կողմերից յուրաքանչյուրը յոթ որվա ընթացքում կարող է խնդրել, վոր դատարանը լրացուցիչ վճիռ կայացնի՝ ա) յեթե վորեւե հայցապահանջի վերաբերմամբ, վորի համար կողմերն սպացույցներ են ներկայացրած յեղել և բացատրություն տվել, դատարանը վճիռ չի կայացրել, բ) յեթե դատարանը իրավունքի հարցը լուծել է, բայց չի վորոշել այն պահանջի կամ առարկայի ճիշտ չափը, վորը պիտի գանձվի կամ հանձնվի: Բոլոր մասնանշված դեպքերում դատարանը կանչում է կողմերին:

(ՀԽՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

182. Դատարանը վճիռ կայացնելիս և վճուխ կատարման կարգը վորոշելիս կարող է նրա կատարումը հետաձգել կամ մի քանի նվազի բաժանել, աչքի առաջ ունենալով կողմերի նյութական վիճակը կամ գործի այլ հանդամանքները:

Ծանոթություն.— Յեթե դատավճիռ կայացնելիս, վճուխ կատարման կարգը չի վորոշված, ժո-

դովրդական դատավորը՝ շահագրգռված կողմի դիմումի համաձայն, կողմերին հրավիրելու կարգով, կարող է միանձնաբար քննութեան առնել դատավճռի կատարումը հետաձգելու կամ միջանի նվազի բաժանելու հարցը, աչքի առաջ ունենալով կողմերի նյութական վիճակը կամ դործի հանգամանքները:

[1932 թ. 9/3, (Որ. և կարգ. ժող., № 1, հոդ. 13)]:

183. Յեթե վճիռը կայացել է հոգուտ կամ ընդդեմ մի քանի դատակիցների, դատարանը մատնանշում է, թե ինչ չափով է վերաբերում վճիռը նրանցից յուրաքանչյուրին և թե համապարտ է արդյոք պատասխանատվութունը կամ համապահանջ է դանձումը:

184. Վճիռները կայացնում են տվյալ նիստին մասնակցող դատավորները, վորտեղ ավարտվել է գործի դատաքննութունը:

185. Վճիռների պարզաբանումն ու մեկնաբանումը վերաբերում է գործը վճռող դատարանին. վճիռները մեկնաբանելու մասին խնդիր տալը վոչ մի ժամկետով չի սահմանափակված, յեթե վճիռը դեռ չի կատարված կամ իր ուժը չի հորցրել՝ յեռաձգա վաղեմութունը բրանալու հետևանքով: Այդ կարգի միջնորդութունները դատարանը քննում է կողմերին կանչելով:

(ՀնՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ ՏԱԼԸ

186. Դատարանի վճիռը պիտի կատարվի բեկման դանդատ տալու ժամկետը լրանալուց հետո կամ, յեթե բեկման դանդատ է սրվում, վճիռը՝ վճռարեկ առայանի կողմից հաստատվելուց հետո, բացի 187 և 187-ա հոդվածներում մատնանշված դեպքերից:

(ՀնՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

187. Անհապաղ պիտի կատարվեն այն վճիռները, վորոնք վերաբերում են՝ ա) աշխատավարձին և ապրուստի միջոցներին, բ) փաստաթղթերի վրա հիմնըված այն հայցերին, վորոնց վերաբերմամբ թույլ է սրվում դատական հրամանների կամ նոտարական դրրասենյակիների կատարողական մակադրութունների կիրառումը, գ) գործի դատաքննութեան ժամանակ պատասխանողի ընդունած հայցերին—ամբողջովին կամ նրանց այն մասին, վորը համապատասխանում է պատասխանողի ընդունածին: (ՀնՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

187-ա. Բացի դրանից դատարանը հայցվորի խնդրով կարող է թույլ տալ այն վճիռների անհապաղ կատարումը՝

ա) վորոնք հիմնված են նոտարական կարգով վավերացված կամ չվավերացված, բայց պատասխանողի կողմից ընդունված փաստաթղթերի վրա, յեթե միայն վավերացման պարտադիր լինելը սահմանված չի որենքով:

բ) վորոնք վերաբերում են վարձակալութեան ժամկետը լրանալու պատճառով բնակարաններ ազա-

տելու պահանջներին կամ որենքներում հատկապես մատնանշված դեպքերում .

դ) վորոնց կատարման հապաղումից, դործի առանձին հանդամանքների պատճառով, կարող ե խոչոր ե անուղղելի վնաս առաջանալ դանձման համար կամ կատարումը կարող ե անհնար դառնալ :

Այս հոդվածում թված դեպքերում դատարանը կարող ե հատուկ վորոշմամբ պահանջել հայցվորից՝ ապահովել հետագարձ պահանջը վճիւրը բեկանելու դեպքում :

(ՀՆՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրութամբ) :

187-բ. Թույլ չի տրվում պետական մարմինների դեմ կայացրած վճիռների անհապաղ կատարումը բացի այն վճիռներից, վորոնք վերաբերում են աշխատավարձին, բողոքարկված մուրհակներից բղխող պահանջներին, վարկային հիմնարկների պահանջներին ե վարկային-կոոպերատիվ կազմակերպություններին հասանելիք պարտքի հատուցմանը :

(ՀՆՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրութամբ) :

187-դ. Այն վճիւրը, վոր անհապաղ կատարման յենթակա չե, հայցվորի խնդրով կարելի յե ապահովել այս Որենսդրքի 85—90 հոդվածների կարգով :

(ՀՆՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրութամբ) :

187-դ. Անհապաղ կատարումը թույլ տալու կամ մերժելու վորոշման դեմ կարելի յե զանգատ տալ Քաղաքացիական Դատավարության Որենսդրքի 249 հոդ. կարգով :

(ՀՆՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրութամբ) :

188. Դատարանի վճիւրը կամ կողմի խնդրով հայցը ապահովելու մասին արած վորոշումը ի կատար ածելու համար դատարանը կատարողական թերթ ե տալիս :

189. Յեթե կայացած վճուի համաձայն մի քանի տեղում գտնվող գույք պիտի հանձնվի կամ յեթե վճիւրը կայացել ե հողուտ մի քանի հայցվորների կամ ընդդեմ մի քանի պատասխանողների, դատարանը հայցվորների խնդրով կարող ե մի քանի կատարողական թերթեր տալ՝ ճշտութեն վորոշելով վճուի այն մասը, վոր տվյալ թերթով պետք ե կատարվի :

190. Վճիւր կայացնող դատարանի դատավորը՝ կորցրած կատարողական թերթի իսկականի փոխարեն կարող ե միանձնարար տալ կրկնակը : Կրկնակը տալու վերաբերյալ խնդիրը քննվում ե կողմերին կանչելով :

[1932 թ. մարտի 9-ին, (Որ. ե Կարգ. Ժող., № 12—13, հոդ. 13)] :

ՄԱՍ ՅԵՐՐՈՐԴ

ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ Ո Ւ Խ XX

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԻՈՒՆՔՆԵՐ

191. Հատուկ վարույթի դործեր են այն դործերը, վորոնք վերաբերում են՝ ա) մեռածներից հետո մնացած գույքին (198 հոդ.), բ) միջնորդադրերին ե

միջնորդ դատարանների վճիռներին, դ) պարտավորութիւնների աւարկաները (ավանդ) դատարանին հանձնելուն, դ) ակտերի վերաբերյալ դատական հրամաններ տալուն, ե) ամուսնութիւնը լուծելուն, զ) կրօնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայութիւնից ազատվելուն, ը) նոտարների դործողութիւնների դեմ արվող գանդատներին, թ) չքավորութեան մասին վկայականներ տալու խնդիրներին և ժ) կորցրած վոչ-անվանական փաստաթղթերի վերաբերյալ իրավունքները վերականգնելու դործերին (կոչի վարույթ) :

(ՀԽՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրութեամբ) :

192. Հատուկ վարույթի դործերը ժողովրդական դատավորը քննում է միանձնաբար՝ դոնրաց դատական նիստերում, ստուգելով ապացույցները և կարիք յեղած դեպքերում դատարան կանչելով շահագրգռված անձանց, բացի այս Որենագրքի XXVI և XXVII դրուխներով նախատեսված դործերից :

193. Յեթե դործի քննութեան ժամանակ շահագրգռված անձը վեճ հարուցանի, դատավորը կարող է հատուկ վարույթը կարճել, հնարավորութեան տակ կողմերին դործ սկսելու ընդհանուր հայցային կարգով :

Գ Լ Ո Ւ Խ XXI

ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՌԱՄՆԵՐԻՅ ՀԵՏՈ ՄՆԱՅԱԾ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

194. Վերացված է :

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող № 9, հոդ. 97)]:

195. Վերացված է :

[1935 թ. սեպտեմբերի 9-ի (Որ. և Կարգ. Ժողով № 9, հոդ. 87)]:

196. Վերացված է :

(ՀԽՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշումը) :

197. Վերացված է :

(ՀԽՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշումը) :

198. Ժառանգատուից պահանջ ունեցող անձինք իրավունք ունեն դիմելու այն ժողովրդական դատարանին, վորի շրջանում ժառանգութեանը բացվել է և խնդրելու, վոր միջոցներ ձեռք առնվեն իրենց պահանջների բավարարումն ապահովելու համար :

Գ Լ Ո Ւ Խ XXII

ՄԻՋՆՈՐԴԱԳՐԵՐ ՅԵՎ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ

199. Կողմերի համաձայնութեանը՝ քաղաքացիական իրավունքի վերաբերյալ իրենց վեճը միջնորդ դատարանի միջոցով քննելու մասին (միջնորդադիր) պետք է վավերացվի նոտարական կարգով :

Ծանոթութեան. — Միջնորդ դատարանում դործեր քննելու կարգը վորոշվում է միջնորդ դատարանի կանոնադրութեամբ (հավելված 1—XXII գլխի) :

(ՀԽՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրութեամբ) :

200. Միջնորդ դատարաններում քննվող դործերի համար դատական տուրքեր զանձվում են կիսով չափ՝ միջնորդագիրը նոտարական կարգով վավերացնելիս :

(ՀնՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ) :

201. Միջնորդ դատարանի ամբողջ դործը ավարտվելուց հետո ներկայցվում է պահելու համար այն ժողովրդական դատարանին, վորի շրջանում միջնորդ դատարանը դործել է : Յեթե պետք լինի վճիռը կատարել հարկադրական կարգով, ժողովրդական դատավորը կատարողական թերթ է տալիս այս Որենսդրելի XIX գլխում սահմանված կանոնների համաձայն :

202. Կատարողական թերթ տալիս ժողովրդական դատավորը հավաստիանում է, վոր վճիռը կայացված է միջնորդ դատարանների համար սահմանված կանոնների համաձայն և առհասարակ չի հակասում որենքին :

203. Յեթե ժողովրդական դատավորը մերժի կատարողական թերթ տալ, այդ մասին կարելի յե մասնավոր դանդառ տալ Գերագույն Դատարանին (հոդ. 249) :

(ՀնՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ) :

Գ Լ Ո Ւ Խ XXIII

204—209. Վերացված է :

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող., № 9, հոդ. 87)] :

Գ Լ Ո Ւ Խ XXIV

210—219. Վերացված է :

[1929 թ. ոգոստոսի 22-ին, (Որ. և Կարգ. Ժող., № 10, հոդ. 127)] :

Գ Լ Ո Ւ Խ XXV

220—225. Վերացված է :

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող., № 9, հոդ. 87)] :

Գ Լ Ո Ւ Խ XXVI

ԿՐՈՆԱԿԱՆ ՀՍՄՈՉՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾՍԱՍՅՈՒԹՅՈՒՆՆԵՑ ԱԶԱՏԵԼԸ

226. Այն անձինք, վորոնք ցանկանում են պարտագիր զինվորական ծառայության որենքի հիման վրա (ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1928 թ. ոգոստոսի 8-ի վորոշումը, — Որ. և Կարգ. Ժող. 1928 թ., № 52, հոդ. 449) միջնորդություն հարուցել զինվորական ծառայությունից կրոնական համոզմունքների պատճառով իրենց պատելու մասին, զիմում են տալիս ժողովրդական դատարանին : Այդ դործերը լավում են խնդրատուին կանչելով և անպայման դատախազության ներկայացուցչի մասնակցությամբ :

[1930 թ. հունվարի 7-ին, (Որ. և Կարգ. Ժող., № 1, հոդ. 18)] :

227. Այս կարգի դործերում փոխանորդների մասնակցությունը թույլ չի տրվում :

228. Դատարանը վճիռ կայացնելիս լսում է փոր-

ձաջնեության՝ յեզրակացությունն այնչ մասին, թե տվյալ անձն իրօք պատկանում է իր ասած կրօնական ուսմունքին և իրօք հետևում է նրան և թե այդ ուսմունքին հետևորդ լինելը վորևէ ձևով բացառում է գինվորական, ծառայությունը:

229. Այս կարգի խնդիրները շահադրուված անձինք պետք է տան վոչ շուտ, քան 21/2 տարի և վոչ ուշ, քան 1 տարի իրենց հասակակիցներին՝ զորակոչի ներկայանալուց առաջ:

(ՀՊՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

230. Զինվորական ծառայությունից ազատելու մասին դատարանի կայացրած վորոշման մեջ պիտի մատնանշվի, թե՛ ա) ինչ գործ է իսկապես նշանակվում, բ) ուր և յերբ պիտի ներկայանա ազատվողը նշանակված գործը կատարելու համար կամ գ) պիտի մեջ բերվեն ծառայությունից իսպառ արտակելու շարժառիթները՝ Անդրկովկասի Սոցիալիստական Պորհըրդային Հանրապետությունների Միութենական Պորհըրդի 1922 թ. նոյեմբերի 25-ի դեկրետի համաձայն: Վորոշման պատճենն ուղարկվում է այն հիմնարկին, ուր ուղարկվում է ազատվածը, այլ և տեղական ուղմական կոմիտարիատին:

Գ Լ Ո Ւ Խ XXVII

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՏՐՎՈՂ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

231. Նոտարների կատարած գործողությունները գեմ դանդատներ արվում են շրջանի ժողգատարանին:

Վերջինն ընդհանուր կարգով ըստ եյովթյանը քննության և առնում գործը, կասեցնելով նոտարական մահազրության կատարումը հայցի ապահովման կարգով: Գործողությունը կատարելուց հրաժարվելու, նաև գործը ձգձգելու դեպքում դանդատներ արվում են Գեւրգույն դատարանին:

[1931 թ. հունվարի 9-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 1, հոդ. 151)]:

232. Գանդատ տալու համար յոթն ուր ժամանակ է սահմանվում՝ սկսած այն օրից, յերբ դանդատվորն իմացել է նոտարի կարգադրության մասին: Գործը ձգձգվելու դեպքում դանդատ տալու ժամանակը սահմանափակված չէ:

(ՀՊՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

233. Գանդատը ներկայացվում է այն նոտարին, վորի գործողությունների դեմ դանդատ է արվում, նոտարը՝ գործի եյովթյան վերաբերյալ իր բացառության և իսկական գործի կամ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների հետ միասին դանդատը յերեք օրվա ընթացքում ուղարկում է ըստ պատկանելույն՝ ժողգատարանին կամ Գեւրգույն Դատարանին:

[1931 թ. հունվարի 9-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 1, հոդ. 15)]:

234. Նոտարական գրասենյակի կատարողական մահազրությամբ կամ այլ փաստաթղթերով ձևակերպված պահանջները, վորոնց հիման վրա անվիճելի կարգով կարող են կատարվել դրամական կամ այլ գույքային դանձումներ, կարող են վեճի առարկա դառնալ ընդհանուր կարգով պարտատերերի կողմից՝ ըստ

ընդդատուելիցան ժողդատարանույ կամ պետական Ար-
բիտրատում հայց ներկայացնելու միջոցով:

[1936 թ. նոյեմբերի 26-ին, (Որ. և Կարգ. Ժող.,
№ 11, հոդ. 85)]:

Գ Լ Ո Ւ Խ XXII —

ԿՈՐՅՐԱԾ ՎՈՉ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՐԱ-
ՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹԻ
ՄԱՍԻՆ

(ԿՈՉԻ ՎԱՐՈՒՅԹ)

(Հաստատված ՀԽՍՀ Կենտրոնական 1926 թ. հոկ-
տեմբերի 13-ի վորոշմամբ):

234-ա. Այն անձինք, վորոնք շահագրգռված են,
վոր ներկայական փաստաթուղթը համարվի վոչըն-
չացված, այդ մասին դիմում են տալիս փաստաթուղ-
թը տվող հիմնարկի կամ անձի գտնված վայրի ժողո-
վրդական դատարանին:

234-բ. Դիմումի մեջ հիշատակված պիտի լինի՝
ա) դիմում տվողի ճիշտ անունն ու բնակավայրը,
բ) կորցրած փաստաթղթի պատճենը կամ նրա անունը
և առանձնահատուկ նշանները, գ) կորստյան հանգա-
մանքները և դ) փաստաթուղթը կորցրած համարելու
վերաբերյալ խնդիրը:

234-գ. Ժողովրդական դատավորը, հաստատելով
փաստաթղթի կորստյան փաստը, վորոշում է կայաց-
նում՝ ա) փաստաթղթի կորստյան առթիվ դատարա-
նին տված դիմումի վերաբերյալ հայտարարութուն
տալու մասին, հրավիրելով դատարան այդ փաստա-
թղթի տիրոջներին հայտարարութուն տալու որից 3
ամսվա ընթացքում, բ) հիշյալ փաստաթղթով վը-
ճարումներ կատարելն արգելելու մասին:

Ծանոթութուն. — Կորցրած փաստաթղթերով պար-
տավորված անձինք, կարող են վճարելիք
դումարները մուծել դատարան, վորպես ա-
վանդ:

234-դ. Յեթե ժողովրդական դատավորը հրաժար-
վի վերահիշյալ խնդիրը բավարարելուց, նրա վորոշ-
ման դեմ կարելի չե մասնավոր դանդատ տալ Գերա-
դույն Դատարանին:

234-ե. Փաստաթղթի կորստյան հայտարարության
մեջ պիտի հիշատակված լինի՝ ա) դիմում տվողի անու-
նը, հայրանունն ու բնակավայրը, բ) այն փաստաթղ-
թի անունն ու առանձնահատուկ նշանները, վորի մա-
սին դիմում է տրված դատարանին, գ) 234-դ հոդվա-
ծի «ա» կետում սահմանված ժամկետը, վորի ընթաց-
քում հիշյալ փաստաթղթին տիրոջները պիտի դիմում
տան դատարանին՝ այդ փաստաթղթի վերաբերմամբ
իրենց ունեցած իրավունքներին մասին, դ) հիշյալ փա-
տաթղթով պարտավորված անձանց կողմից՝ դատա-
րանի սահմանած ժամկետում վորևէ վճարում կատա-
րելու արգելքը:

234-զ. Կորցրած փաստաթղթին տիրողը պարտա-
վոր է մինչև 234-դ հոդվածի «ա» կետով սահմանված
ժամկետը լրանալը դիմում տալ 234-դ հոդվածի կար-
ղով վորոշում կայացնող ժողովրդական դատարանին
այն մասին, վոր նա այդ փաստաթղթին տիրոջն է, և
միաժամանակ ներկայացնել այդ փաստաթղթի իսկա-
կանը կամ վավերացրած պատճենը:

234-ը. Այն դեպքում, յեթե 234-դ հոդվածում հի-
շատակված դիմումը տրվում է դատարանին սահման-
ված ժամկետն անցնելուց հետո, ժողովրդական դա-

տավորը վորոշում է կայացնում, վորով փաստաթղթը-
թի կորստյան մասին զիմում ներկայացնողին ժամա-
նակ է տրվում ընդհանուր կարգով հայց հարուցել
փաստաթղթին տիրողի դեմ՝ փաստաթուղթը հետ
ստանալու մասին, և իր այդ վորոշումը ժողովրդա-
կան դատավորը հայտնում է փաստաթղթին տիրողին:
Այդ ժամկետը չի կարող յերկու ամսից ավելի լինել:

234-թ. Յեթե 324-դ հոդվածի «ա» կետում սահ-
մանված ժամկետում 234-դ հոդ. հիշատակված դիմու-
մը չի տրվում ժողովրդական դատարանին. վերջինը
վորոշում է կայացնում կորցրած փաստաթղթի հետ
կապված բոլոր իրավունքները վերացված համարելու
մասին, այլ և այն մասին, վոր կորցրած փաստա-
թուղթը տվող անձը պարտավորվում է կորցրածի վո-
խարեն նոր փաստաթուղթ տալ զիմում տվողին:

234-թ. 234-ը և 234-թ հոդվածների կարգով դոր-
ծը լսելու մասին հայտնվում են ինչպես զիմում տը-
վողին, այնպես էլ կորցրած փաստաթուղթ տվող հիմ-
նարկությանը կամ անձին, սակայն նրանց չներկայա-
նալը չի կարող դործի քննությանն արգելք լինել:

234-ի. ժողովրդական դատարանի՝ 234-ը և 234-թ
հոդվածների համաձայն կայացրած վորոշումներն զեմ
կարելի յե բեկման կարգով դանդատ տալ Գերագույն
Գատարանին:

234-լ. Այն դեպքում, յերբ զիմում տվողը դա-
տարանի սահմանած ժամկետում հայց չհարուցի փաս-
տաթղթին տիրողի դեմ, կոչի վարույթի կարգով
(234-րդ հոդ. «բ» կետ) դատարանի ձեռք առած բոլոր
միջոցները կորցնում են իրենց ուժը, իսկ փաստաթղթին
տիրողն իրավունք է ստանում պահանջելու զիմում

տվողին այն վնասները, վոր ինքը կրել է դատարանի
ձեռք առած միջոցների հետևանքով:

234-խ. կորցրած փաստաթղթին տիրողը, վորը
վորեւ պատճառով ժամանակին զիմում չի տվել այդ
փաստաթղթի վերաբերմամբ ունեցած իր իրավունք-
ների մասին (234-դ հոդ.), այդ փաստաթղթով ձեռք
բերած իրավունքները վերացած համարելու մասին դա-
տարանի վորոշումն ուժի մեջ մտցնելուց հետո կարող
է այդ դատարանում հայց հարուցել ապրիլի կեր-
պով հարստանալու մասին այն անձի դեմ, վորը կորց-
րածի փոխարեն նոր փաստաթուղթ ստանալու իրա-
վունք է ձեռք բերել:

234-ծ. Այս վարույթի կանոնները կարող են կի-
բանվել բացառապես այն փաստաթղթերի վերաբեր-
մամբ, վորոնց վրա հատուկ որենքներով տարածվում
է կոչի վարույթի կարգը:

Թանոթություն. — Ի պահ ընդունված ավանդների
և գրավ զրված արժեթղթերի համար վար-
կային հիմնարկների կողմից տրված վոչ ան-
վանական կորած անդորրագրերի վերականգ-
նումը կարող է տեղի ունենալ միայն այս
վարույթի կանոնների կարգով: Անդորրագրի
տերը պարտավոր է դատարան ներկայանալու
անդորրագրի կորստյան մասին դատարանին
տրված զիմումը հրապարակելու որից մեկ
տարվա ժամկետում:

[1929 թ. 1819, (Որ. և Կարգ. Ժող., № 10,
հոդ. 153)]:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԳ

ՎՃԻՌՆԵՐԻ ԴԵՄ ԳԱՆԳԱՏ ՏԱԼՆ ՈՒ ՆՐԱՆՅ ՎԵՐԱ-
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ Ո Ւ Խ XXVIII

ՎՃԻՌՆԵՐԻ ԴԵՄ ԳԱՆԳԱՏ ՏԱԼԸ

235. Դատարանների վճիռների դեմ գործին մասնակցողները կարող են բեկման զանգատ տալ Գերազույն Դատարանի Քաղաքացիական Վճուռակ Կոլեգիային: Գանդատը տրվում է վճիռ կայացնող դատարանին, կցելով պատճենները հակառակ կողմի մասնակցողներին թվով:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

236. Գանդատը պիտի պարունակի. ա) այն վճուռ մատնանշումը, վորը գանդատավորը սխալ է համարում (հոդ. 176), բ) մատնանշում, թե վորն է վճուռ սխալ լինելը, գ) գանդատավորի խնդիրը՝ վճիռն ամբողջովին կամ մասամբ բեկանելու մասին:

237. Վճիռը վերացնելու հիմք կարող են լինել. ա) գործող օրենքների և մասնավորապես այս Որենագրքի 4 հոդվածի խախտումը կամ սխալ կիրառումը կամ բ) վճուռ ակներև հակասելը գործը վճուռ դատարանի կողմից ճշտված՝ գործի փաստական հանգամանքներին, գ) գործը բավականաչափ քննված չլինելը:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

238. Գանդատ տալու ժամկետ է սահմանվում Ժողովրդական դատարանների վճիռների դեմ—յոթն

որ և Գերազույն Դատարանի ընդհանուր իրավասության Դատական Կոլեգիայի վճիռների դեմ— տասընչորս օր, հաշված վճիռը հայտարարելու օրից:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

239. Դատարանը տված գանդատը և գործի վերաբերյալ ամբողջ դրազրույթյունն ուղարկում է Գերազույն դատարանին վոչ ուշ, քան գանդատն ստանալուց հետո յերեք օրվա ընթացքում, միաժամանակ պատճենն ուղարկելով հակառակ կողմից մասնակցողներին:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

240. Մյուս կողմը կարող է գանդատի պատճենը ստանալուց հետո յոթն օրվա ընթացքում վճիռը կայացնող դատարանին բեկման գանդատի առթիվ բացատրություններ կայացնել, կցելով պատճենը: Այդ բացատրությունն ուղարկվում է վերագաս դատարանին, իսկ պատճենը՝ գանդատ տվողին:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

241. Դատակիցները վոչ ուշ քան Գերազույն Դատարանի գործի վերաբերյալ առաջին նիստը, կարող են միանալ այն կողմի տված գանդատին, վոր կողմից իրենք մասնակցում են:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

242. Բեկման գանդատները քննելիս կանչվում են կողմերը: Ունկնդրությունն նշանակված գործերի ցուցակը հրապարակվում է կառավարական պաշտոնական

որդանում վոչ ուշ, քան դատական նխտից յերկու շաբաթ առաջ:

243. Գործի ունկնդրութեան կողմերի չներկայանալը գործը քննելուն արդեւք չի հանդիսանում:

244. Գործը բեկման կարգով քննելիս դատախազը իր յեզրակացութիւնը գործի մասին կարող է տալ թե պրափոր, թե բանավոր՝ դատական նխտում:

245. Գերագույն Դատարանը բեկման գանդատը քննելիս կաշկանդված չէ գանդատի մեջ մատնանըջված առիթներով:

(ՀՆՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրութեամբ):

246. Յեթե Գերագույն Դատարանը գանդատն անհիմն է համարում, թողնում է առանց հետեանքի: Գանդատը հարգելի ճանաչելու դեպքում Դատարանը բեկանում է ամբողջ վճիռը կամ նրա մի մասը և կամ կարճում է գործը՝ հայցի իրավունքի բացակայութեան կամ վեճը դատարանին ընդդատյա չլինելու պատճառով կամ վերադարձնում է ամբողջ գործը կամ միայն բեկանված մասը՝ վերստին քննելու համար դատարանի այլ կազմով կամ ինքը փոխում է կայացած վճիռը առանց գործը նոր քննութեան հանձնելու: Նման դեպքում թույլ են տրվում այնպիսի փոփոխութիւններ, վորոնք բղխում են այս կամ այն որեւքի սխալ կիրառումից և բնավ վճռի փոփոխութիւն չեն հանդիսանում քստ ելութեան:

(ՀՆՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրութեամբ):

247. Յեթե Գերագույն Դատարանի վճռաբեկ Կոլեգիան գործը քննելիս որեւքի իմաստի ղեկավար

պարզաբանութիւնն անհրաժեշտ է համարում, գործի քննութիւնը հետաձգում է, մինչև որեւքի իմաստը պարզաբանվի Գերագույն Դատարանի Պլենումի կողմից:

248. Վորոշման մեջ պետք է մատնանշվեն այն նկատառումները, վորոնցով վճիռը բեկանված է կամ գանդատն առանց հետեանքի յե թողնված: Այս ցուցումները գործը վերաքննող դատարանի համար պարտադիր են:

249. Բեկման գանդատից անջատ կարելի չէ մասնավոր գանդատներ տալ այս Որենդրքով հատկապես նախատեսված դեպքերում, այլ և յերբ դատարանը մերժում է ընդունել բեկման գանդատը կամ բողոքը, չի վերականգնում բաց թողված ժամկետը կամ կարճում է գործը: Մասնավոր գանդատների նկատմամբ կիրառվում են այս գլխի կանոնները: Այդ գանդատները տրվում են գանդատարկիող վորոշումը կայանալուց յոթ որվա ընթացքում:

(ՀՆՍՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրութեամբ):

Գ Լ Ո Ւ Խ XXIX

ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ 1.

Դատական վեճերի վերաքննութիւնը նոր յերեան յեկած հանգամանքների պատճառով

250. Նոր յերեան յեկած հանգամանքների պատճառով որինական ուժի մեջ մտած դատական վճիռները վերաքննելու մասին հարց հարուցելու իրավունքը

եկատի ունենալով նոր յերևան յեկած հանդամանքներէրն ընույթը, պատկանում է կամ այն դատարանին, վորը գործը քննել է ըստ ելության կամ Գերազույն Դատարանին :

[1935 թ. նոյեմբերի 3-ի (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 104)] :

251. Վճիռը կարող է վերաքննվել միայն հետևյալ դեպքերում .

ա) յերբ յերևան են յեկել գործի համար ելական նշանակութուն ունեցող նոր հանգամանքներ, վորոնք հայտնի չեյին և չեյին կարող հայտնի լինել խնդրատուին .

բ) յերբ այն գործի վերաբերմամբ, վորի մասին կայացել է վճիռը, դատավճռով հաստատված են վրկաների սուտ ցուցմունքները, կողմերի, նրանց ներկայացուցիչների կամ փորձագետների հանցավոր արարքները, կամ գործին մասնակցած՝ դատարանի անդամների հանցավոր արարքները .

գ) յերբ վճիռը հիմնված է այնպիսի փաստաթղթերի վրա, վորոնք հետագայում քրեական գործի վերաբերյալ դատավճռով համարված են կեղծ, կամ յերբ բեկանված է դատարանի կամ այլ հիմնարկի այն վորոշումը, վորը հիմք է ծառայել տվյալ վճռի համար :

(ՀնՍՀ Կենտգործկոմի 1927 թ. մարտի 9-ի վորոշման խմբագրությամբ) :

252. Նոր յերևան յեկած հանգամանքների պատճառով վճիռներ վերաքննելու մասին հարց կարող է հարուցվել թե՛ դատավարության մասնակցող կողմերի խնդրով և թե՛ Արդժողկոմի, Հանրապետական դատախազի և նրա տեղակալի, Գերազույն Դատարանի նա-

խազահի կամ համապատասխան շրջանային դատախազի առաջարկությամբ :

151. հոդ. «բ» և «գ» կետերում նշված հիմունքներով գործը վերաքննելու մասին դիմում տրվում է գործն ըստ ելության քննող դատարանին, վորը և վորոշում է միջնորդությունը բավարարելու հարցը՝ Դատարանի այն վորոշումը, վորով բավարարած է վճիռը վերաքննելու միջնորդությունը՝ դանդաղարկման յենթակա չէ : Վճռի վերաքննության մասին հարուցված միջնորդությունը մերժելու դեմ կարելի չէ մասնավոր գանդառ տալ (249 հոդ.) :

251 հոդ. «ա» կետում նշված հիմունքներով գործի վերաքննության վերաբերյալ դիմում տրվում է Գերազույն Դատարանին և լուծվում է նրա Պլենումի կողմից :

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. №11, հոդ. 104)] :

253. Դատական վճիռների վերաքննության մասին (հոդ. 252) կողմերը կարող են դիմումներ տալ մի ամսից վաղ ու չայն ուրից, յերբ հաստատվել են այն հանգամանքները, վորոնք դատական վճռի վերաքննության մասին խնդիր հարուցելու հիմք են ծառայում :

(ՀնՍՀ Կենտգործկոմի 1927 թ. մարտի 9-ի վորոշման խմբագրությամբ) :

Դատական վճիռների վերաբնութայուքը հսկողության կարգով

254-*) Արդժողկոմին, Հանրապետական դատախազին և նրա տեղակալին, Գերագույն Դատարանի նախագահին և նրա տեղակալին իրավունք է վերապահվում Հանրապետության ամեն մի դատարանից հսկողության կարգով վերանայելու համար պահանջել ամեն մի գործ, վորի վերաբերյալ վճիռը մտել է որինական ուժի մեջ, ինչպես նաև՝ կասեցնելու այդ գործ մեծի կատարումը մինչև գործի վերաքննվելը:

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. №11, հոդ. 104)]:

254-պ. Երջանային դատախազներին իրենց չըբերմամբ նույնպես իրավունք է վերապահվում հրահրողության կարգով պահանջելու ամեն մի գործ, վորի վերաբերյալ վճիռը մտել է որինական ուժի մեջ, առանց վճռի կատարումը կասեցնելու իրավունքով:

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. №11, հոդ. 104)]:

*) Տե՛ս ԽՍՀՄ, Միութենական և Ավտոնոմ Հանրապետությունների Դատարանակազմության որենքի 16-րդ հոդ.:

254-բ.*) Յերբ պահանջված գործի վերաբերյալ վճռուի մեջ յերևան է դալիս դործող որենքների առանձին էյական խախտում կամ Բանվորա-դյուղացիական պետության կամ աշխատավոր մասսաների շահերի ակներև խախտում հակառակ որենքի ուղղակի պահանջի, գործը հսկողության կարգով մտցվում է ի վերաքննության: —

ա) Գերագույն Դատարանի Քաղաքացիական Կոլեգիա, յեթև այն Գերագույն Դատարանում չի ըբնդվել բեկման կարգով:

բ) Գերագույն Դատարանի Պլենում, յեթև գործի վերաբերյալ վճիռը քննվել է Գերագույն Դատարանի Քաղաքացիական Կոլեգիայում:

Գերագույն Դատարանի Քաղաքացիական Կոլեգիան կամ Գերագույն Դատարանի Պլենումը գործը հըրհրողության կարգով քննելով կարող է՝

ա) փոխել վճիռը, հանձնելով գործն ի նոր քննության կամ կարճել նրա վարույթը, հայց հարուցելու իրավունքի բացակայության կամ գործը դատարանին յենթակա չլինելու դեպքում, կամ՝

բ) ուժի մեջ թողնել գործում յեղած վճիռներից մեկը, կամ՝

գ) փոխել վճիռը կամ նոր վճիռ կայացնել, յեթև գործի բոլոր հանդամանքները լիովին պարզված են և

*) Տե՛ս ԽՍՀՄ, Միութենական և Ավտոնոմ Հանրապետությունների Դատարանակազմության որենքի 49 և 51 հոդվածները:

ըրացուցիչ ապացույցների հավաքման ու ստուգման կարիք չկա :

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 104)] :

254-դ. *) Գերագույն Դատարանի Քաղաքացիական Կոլեգիայի, վորպես առաջին ատյանի և վորպես վրձ-նարեկ ատյանի, կայացրած վճիռները կարող են հսկողութեան կարգով բողոքարկվել Գերագույն Դատարանի Պլենումում Արդժողկոմի, Հանրապետութեան գառախազի և նրա տեղակալի, Գերագույն Դատարանի նախագահի և նրա տեղակալի կողմից :

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 104)] :

254-դ. Հսկողութեան կարգով գործ հարուցելու ժամկետը չըջանային (քաղաքային) դատախազներին համար սահմանվում է յերեք ամիս, հաշված վճիռն որինական ուժի մեջ մտնելու օրից :

Արդարադատութեան Ժողովրդական Կոմիտարի, Հանրապետութեան դատախազի և նրա տեղակալի, Գերագույն Դատարանի նախագահի և նրա տեղակալի կողմից հսկողութեան կարգով բողոք առլու ժամկետը չի սահմանափակվում :

Ծանոթութիւն.— Աշխատանքային գործերի վերաբերյալ Ժողովրդական դատարանների վճիռները հսկողութեան կարգով բողոքարկել թույլատրվում է համապատասխան վճիռ

*) ՏԵՊՈՒՄ, Միութենական և Ավստրո-Հանրապետութեան Դատարանակազմութեան որենքի 16-բգ հոդ. :

կայացնելու օրից՝ յեռամսյա ժամկետում և այն եւ միանգամայն բացառիկ դեպքում միայն :

Աշխատանքային գործերի վերաբերյալ դատական մարմինները վճիռները հսկողութեան կարգով փոխելու դեպքում, այդ վճիռների հիման վրա վճարած դու-մարներն աշխատավորից կարելի յէ հետ դանձել միայն այն դեպքում, յեթե վճիռը փոխված է աշխա-տավորի կողմից ներկայացված կեղծ փաստաթղթերի հաղորդած սուտ տեղեկութիւնների հիման վրա : Նշված դեպքերում աշխատանքային գործերի վերաբե-րյալ հետ դանձումը թույլատրվում է միայն դատական կարգով՝ Ժողդատարանի վճռով : (1935 թ. 3/11, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 104)) :

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԱՏԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ

Գ Լ Ո Ւ Խ XXX

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

255. Հաջորդ հոդվածներով վորոշված կարգով կատարման յենթակա յեն. ա) դատարանների՝ քաղա-քացիական գործերի վերաբերյալ վճիռները, բ) քաղա-քացիական գործերի վերաբերյալ դատական հրաման-ները, գ) նոտարական դրասենյակների կատարողական մակադրութիւնները, դ) դատարանների վճիռները հատուկ վարույթի գործերի վերաբերմամբ և հայցե-րի ապահովման մասին. ե) դատարանների քաղաքա-

լրացուցիչ ապացույցների հավաքման ու ստուգման կարիք չկա :

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 104)] :

254-դ.*) Գերագույն Դատարանի Գաղափարական Կոլեգիայի, վորպես առաջին առյուծի և վորպես վրձնարեկ առյուծի, կայացրած վճիռները կարող են հսկողութան կարգով բողոքարկվել Գերագույն Դատարանի Պլենումում Արդժողկոմի, Հանրապետության գաղափարի և նրա տեղակալի, Գերագույն Դատարանի նախագահի և նրա տեղակալի կողմից :

[1935 թ. նոյեմբերի 3-ին (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 104)] :

254-դ. Հսկողութան կարգով գործ հարուցելու ժամկետը չըջանային (քաղաքային) դատախազների համար սահմանվում է յերեք ամիս, հաշված վճիռն որինական ուժի մեջ մտնելու օրից :

Արդարադատության Ժողովրդական Կոմիտեի, Հանրապետության դատախազի և նրա տեղակալի, Գերագույն Դատարանի նախագահի և նրա տեղակալի կողմից հսկողութան կարգով բողոք տալու ժամկետը չի սահմանափակվում :

Ծանոթություն.— Աշխատանքային գործերի վերաբերյալ ժողովրդական դատարանների վճիռները հսկողութան կարգով բողոքարկել թույլատրվում է համարտատասխան վճիռ

*) ՏԷՊ ՈՍԷՄ, Միութենական և Ավստրոսոցալոսյանների Դատարանակազմութան օրենքի 16-րդ հոդ. :

կայացնելու օրից՝ յեռամսյա ժամկետում և այն էլ միանգամայն բացառիկ դեպքում միայն :

Աշխատանքային գործերի վերաբերյալ դատական մարմինները վճիռները հսկողութան կարգով փոխելու դեպքում, այդ վճիռների հիման վրա վճարած գումարներն աշխատավորից կարելի չէ հետ դանձել միայն այն դեպքում, յեթե վճիռը փոխված է աշխատավորի կողմից ներկայացված կեղծ փաստաթղթերի հաղորդած սուտ տեղեկությունների հիման վրա : Նշված դեպքերում աշխատանքային գործերի վերաբերյալ հետ դանձումը թույլատրվում է միայն դատական կարգով՝ ժողդատարանի վճռով : (1935 թ. 3/11, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 104) :

ՄԱՍ ԳԻՆԳԵՐՈՐԴ

ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ

Գ Լ Ո Ւ Խ XXX

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

255. Հաջորդ հոդվածներով վորոշված կարգով կատարման յենթակա յեն. ա) դատարանների՝ քաղաքացիական գործերի վերաբերյալ վճիռները, բ) քաղաքացիական գործերի վերաբերյալ գատական հրամանները, գ) նոտարական դրասենյակների կատարողական մակադրությունները, դ) դատարանների վճիռները հատուկ վարույթի գործերի վերաբերմամբ և հայցերի ապահովման մասին, ե) դատարանների քաղաքա-

ցիակհան գործերի վերաբերյալ վորոշումները—տու-
ղանկու մասին. դ) դատարաններին՝ Քրեական Դատա-
վարութեան Որենսդրքի 121, 121-ա և 449 հոդվածնե-
րի հիման վրա կայացրած վորոշումները, ը) արբիա-
րաժ հանձնաժողովների վճիռները՝ նրանց կանոնա-
դրութեաններով նախատեսված կարգով, ինչպես նաև
ժողովրդական դատարանների հողային նստաչրջաննե-
րի և միջնորդ դատարանների վճիռները: (ՀՍՍՀ
Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խըմ-
բադրութեամբ):

Քաղվածքներ՝ ամուսնութեանները դադարման դը-
րանցման մատյանից՝ յերեխաների և անաչխատունակ
ամուսնուկն/պահելու վերաբերյալ ծնողների համաձայ-
նութեան մասին: (ՀՍՍՀ, ԿԳԿ և ԺԿԽ 1937 թ. ոգոս-
տոսի 9-ի վորոշման խմբադրութեամբ):

Մանրութեան. — Ոտարերկրյա դատարանների
վճիռների կատարման կարգը վորոշվում է
համապատասխան պետութեանների հետ
կնխված հատուկ համաձայնութեաններով:

256. Դատական վճիռը կատարող անձը կատարո-
ղական գործողութեանների յե ձեռնարկում ըստ պար-
տաւերը բանավոր կամ գրավոր դիմումների, պատ-
շած կարգով արված կատարողական թերթերի հիման
վրա:

Մանրութեան. — Ժողովրդական դատարանների
կողմից վորոշված՝ մինչև 25 ոտւրլի արժեք
ունեցող հայցերի, ինչպես նաև դյուղական
վայրերում ապրող անձանց ապրուստի մի-
ջոցների վերաբերյալ դանձումները հանձն-
վում են դյուղական կատարածուններին:

[1929 թ. 9/10, (Որ. և Կարգ. Ժող. № 10,

հոգ. 156)]:

256.—ա. Դատական վճիռները կատարելու պարտա-
կանութեանը դրվում է նաև պետական և հասարա-
կական հիմնարկների ու ձեռնարկութեանների վարկե-
րը տնորինողների վրա այս Որենսդրքով նախատես-
ված դեպքերում:

(ՀՍՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վո-
րոշման խմբադրութեամբ):

256-բ. Դատարանի վճիռները ճշտութեամբ և իր
ժամանակին կատարելու պատասխանատւութեանը
դրվում է այն դատարանի վրա, վորի շրջանում կա-
տարվում է դանձումը:

(ՀՍՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վո-
րոշման խմբադրութեամբ):

256-գ. Դատարանի ցուցումները պետական և հա-
սարակական հիմնարկների ու ձեռնարկութեանների
վարկերը տնորինողների համար պարտադիր են այս
Որենսդրքով նախատեսված դեպքերում:

(ՀՍՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վո-
րոշման խմբադրութեամբ):

257. Դատական կատարածուն վճարի կատարմանը
ձեռնարկելիս ծանուցագիր է ուղարկում պարտապա-
նին՝ կատարման մասին ծանուցագիր հանձնելու կա-
նոնների համաձայն:

258. Յեթե պարտապանն անձամբ կամ վոխանորդի
միջոցով մասնակցել է դործին, կատարման վերաբեր-
յալ ծանուցագիրը վճարահատութեան որից մեկ ամըս-

վա ընթացքում կարելի չե ուղարկել պարտապանի՝ դատարանի դործում ունեցած հասցեյով և ծանուցագիրը հանձնված և համարվում, յեթե նույնիսկ պարտապանն այնտեղ չլինի:

259. Յեթե պարտապանի բնակութան կամ դրադմունքի վայրը հայտնի չե, և ծանուցագիրը 257 և 258 հոդվածները կարգով չի կարելի հանձնել, դանձողը կարող է խնդրել կատարման վայրի դատարանից, վոր պարտապանի պաշտոնական ներկայացուցիչ նշանակվի:

260. Յեթե դատական վճռով հոժարակամ կատարման համար հատուկ ժամկետ չի նշանակված, դատական կատարածուն պարտապանի ծանուցագիրը հանձնելու կամ ուղարկելու հետ միաժամանակ կատարման համար վոչ ավելի, քան յոթ որ ժամանակ է տալիս նրան:

261. Կատարումը տեղի չե ունենում այն դատական կատարածուի ձեռքով, վորի դործունեյության շրջանում գտնվում է պարտապանի դանձման յենթակա դուշքը, բայց անհրաժեշտության դեպքում դատական կատարածուն կատարողական դործողությունները շարունակում է իր շրջանից դուրս, մի քաղաքի կամ շրջանի սահմաններում:

262. Կատարումն ավարտելուց հետո դատական կատարածուն կատարողական թերթը վերադարձնում է համապատասխան դատական հիմնարկին, թերթի վրա մակադրելով կատարման մասին: Նոտարական գրասենյակի կատարողական մակադրության հիման վրա կատարված դանձումների մասին դատական կատարածուն հիշատակում է հենց փաստաթղթի վրա

և այդ դեպքում, յերբ կատարված դանձումով լիովին մարվում է փաստաթղթի մեջ յեղած պարտավորությունը, իսկական փաստաթուղթը տրվում է պարտապանին:

(ՀՍՍՀ Կենտգործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

263. Կատարողական դործողություններ կատարելիս դատական կատարածուն կարող է ստուգել պարտապանի բնակարանն ու մթերանոցները: Հիշյալ դործողությունները, այլ և բնակարանի ու մթերանոցների բացումը կատարվում է միլիցիայի և տնային վարչության ներկայացուցչի ներկայությամբ:

264. Տոն օրերը և դիչեր ժամանակ վճիռների կատարումը թույլ է տրվում միայն անհետաձգելի դեպքերում՝ այն ժողովրդական դատավորի թույլտվությամբ, վորի շրջանում կատարումը տեղի չե ունենում:

265. Դատական կատարածուն կարող է հետաձգել կամ կարճել կատարումը միայն դատարանի հատուկ վորոշման կամ պարտափրոջ դեմումի հիման վրա:

266. Այն դեպքերում, յեթե դատական կատարածույի ստացած դումարները բավական չեն պարտապանի վրա դարձրած բոլոր դանձումները ծածկելու համար, հիշյալ դումարները, վճուի կատարման ծախսերը նախապես հանելուց հետո, բաշխվում են Քաղ. Որենագրքի 101., 101-ա, 101-բ, 101-գ և 101-դ հոդվածներում մատնանշված կարգով: [1929 թ. 4-ին հուլիսի, (Որ. և Կարգ. Ժող. № 8, հոդ. 107)]:

Մանրութիւն. — Նախադատութեան կարգով
ըստ 266 հոդ. բաժարարելի ապրուստի մի-
ջոցներէց նորման սահմանում եւ Արդարա-
դատութեան ժողովրդական Կոմիտարիատը՝
Սոցիալական Ապահովութեան ժողովրդական
Կոմիտարիատի համաձայնութեամբ:

(ՀնՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վո-
րոչման խմբագրութեամբ):

267. Յեթն հաշվարկ կազմելուց հետո պարտատերը
կամ պարտապանը յերեք օրվա ընթացքում առարկու-
թյուններ չեն անում, դատական կատարածունը դրամը
տալիս եւ բոլոր պարտատերերին հաշվարկի համա-
ձայն: Առարկութիւններ լինելու դեպքում դատական
կատարածուն հաշվարկը ներկայացնում եւ ժողովրդ-
ական դատավորին ի հաստատութիւն: Ժողովրդա-
կան դատավորի՝ հաշվարկի հաստատման վերաբերյալ
վորոշման դեմ դանդաղ կարելի չէ տալ յեթե օրվա
ընթացքում:

268. Այն դեմարները, վորոնցով պիտի բաժարար-
վին պարտատերերի՝ հայցի ապահովման մասին տված
դիմումներին հիման վրա ստացած կատարողական թեր-
թերով, արվում են պարտատիրոջը միայն այն ժամա-
նակ, յերբ նա ներկայացնում եւ գործի վճուի վերաբեր-
յալ կատարողական թերթ: Հայցը մերժվելու դեպքում
հիշյալ դեմարները լրացուցիչ կերպով եւ ընդհանուր
կարգով բաշխվում են այն բոլոր պահանջատերերի մի-
ջե՝ վորոնք մասնակցել են սկզբնական բաշխմանը,
կամ հետ եւ արվում պարտապանին, յեթե մինչ այդ
մյուս պահանջները բաժարարված են:

269. Վերացված ե.

[1937 թ. փետրվարի 27-ին, (Որ. և Կարգ. Ժող.
№ 2, հոդ. 11)]:

270. Դատական կատարածունը գործողութիւնների
դեմ դանդաղներ արվում են այն ժողովրդական դա-
տավորին, վորի շրջանում տեղի չէ ունենում կատա-
րումը յոթ օրվա ընթացքում՝ դանդատարկելի գոր-
ծողութեան կատարման օրից կամ այդ գործողութիւն-
նը դանդատավորին հայտնի դառնալու պահից:

Գ Լ Ո Ւ Խ XXVI

ԳԱՆՁՈՒՄԸ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԴԱՐՁՆԵԼԸ

271. Գանձումը գույքի վրա յե դարձվում պար-
տապանի գույքն արդելանքի տակ զնելու, կնքելու եւ
վաճառելու միջոցով, բացի՝

1. Հանրայնացված սեկտորի հիմնարկների, ձեռ-
նարկութիւնների եւ կազմակերպութիւնների հետե-
վյալ գույքից՝

1) ՀնՍՀ Քաղաքացիական Որենսգրքի 22-րդ հոդ-
վածի համաձայն ոտարացման չենթարկվող պետական
գույքը:

2) կոոպերատիվ եւ կոլտնտեսային, արդյունա-
րական եւ անայնա-արհեստագործական ձեռնարկու-
թիւնների հետեյալ գույքը:

ա) այն գույքը, վորը արվում ե թված կազմա-
կերպութիւններին, ձեռնարկութիւններին՝ որենսգրա-
կան հատուկ ակտերի հիմունքներով:

բ) արտադրական մեքենաներն ու գործիքները, վորոնք անհրաժեշտ են արտադրական ձեռնարկութեան պահպանման համար.

գ) արտադրական մեքենաներն ու գործիքները, վորոնք անհրաժեշտ են թված կազմակերպութեաննրի ոժտանդակ և սնանկագործական ձեռնարկութեաննրի համար:

Մանրութիւն. — Այն դեպքում, յերբ նշված նըպատակների համար ինվենտարի անհրաժեշտ քանակը ճշտորեն սահմանվում է տնտեսութեան արտադրական պլանի համաձայն, դանձուժը կատարող մարմինները ղեկավարվում են այդ պլանի տվյալներով, իսկ մնացած դեպքերում վորոշում է Փինրատինը՝ տնայնաւործական կամ կոոպերատիվ շրջանային միութեան համաձայնութեամբ:

3) Պետական, կոոպերատիվ, կոլտնտեսային և տնայնա-արհեստագործական կազմակերպութեաննրին պատկանող այն շենքերը, վորոնք զբաղված են արդյունաբերական կամ արհեստագործական ձեռնարկութեաննրով (ջրաղացներ, ձիթահաններ, յուղի, պանրի գործարաններ և այլն):

4) Տնայնա-արհեստագործական կազմակերպութեաննրի անբաժան Փոնդի և կոլտնտեսութեաննրի ու արդյունաբերական կոլտնտեսութեաննրի հետեւյալ Փոնդերը, անբաժանելի, հասարակական, կապիտալ շինարարութեան, սերմնային և ապահովագրական Փոնդերը:

5) Ձեռնարկութեանը յերեք ամիս աշխատելու համար անհրաժեշտ հումքն ու վառելանյութը:

6) Բնակելի և տնտեսական շենքերը.

7) Տվյալ տնտեսութեան արտադրական պլանները կատարելու համար անհրաժեշտ դյուղատնտեսական կենդանի ինվենտարը հետեւյալ չափով՝

ա) մեկ ձի կամ մեկ ուղտ կամ մեկ զույգ յեղ, կամ մեկ մատղաշ անասուն, յուրաքանչյուր յերեք հեկտար այն վարելահողի համար, վորը մշակվում է նույն անասունների միջոցով.

բ) անասնապահական խորհտնտեսութեաննրում այն քանակութեամբ կաթնատու անասուններ, վորն անհրաժեշտ է արտադրական պլանները կատարելու համար՝ համաձայն տեղական հողային մարմինների կամ պատշաճ դեպքերում՝ ՀԽՍՀ Հողփողկոմատի սահմանած նորմաների.

գ) դյուղատնտեսական կոլեկտիվների յուրաքանչյուր տնտեսութեանն ընկնող մեկ կով կամ մեկ հորթ.

դ) տվյալ տնտեսութեան հոտն սպասարկող ցուլեր և աղնվացիղ անասուններ.

յե) կարակուլի և փափկամաղ վոչխարներ, ինչպես նաև փոքրահասակ դառներ և ուլեր:

8) Տվյալ տնտեսութեան արտադրական պլանները կատարելու համար անհրաժեշտ դյուղատնտեսական մեռյալ ինվենտար հետեւյալ չափերով՝

ա) յուրաքանչյուր 100 հեկտար վարելահողի համար 8 դուլթան, 4 փոցիս, 2 բանող մեքենա.

բ) յուրաքանչյուր 100 հեկտար ցանքի համար 2 հավաքող մեքենա (հնձող մեքենա, խուրձկապիչ և այլն), 2 կալսիչ հասարակ կամ 1 կալսող բորդ մեքենա.

դ) յուրաքանչյուր 100 հեկտար խոտհարքի համար 2 խոտհար մեքենա և 2 փոցխ.

դ) յուրաքանչյուր 100 հեկտար հող վարելու համար մեկ արակտոր և այլ այնպիսի ինվենտար, վորն անհրաժեշտ է տնտեսությունը նորմալ կարգով վարելու համար:

ե) յուրաքանչյուր մեկ ձիու կամ մեկ զուլդե յեզան համար 1 սայլ կամ 1 ֆուրդոն:

9) Չհավաքած բերք:

10) Ընթացիկ դյուղատնտեսական տարվա համար անհրաժեշտ քանակի սերմեր.

ա) ցանքերի համար անհրաժեշտ սերմերի քանակը տարբեր մշակույթների համար վորոշում են շրջանային գործադիր կոմիտեները, յեղնելով տեղի հողագործական պայմաններից ու հետևյալ միջին նորմաներից.

Յուրաքանչյուր մեկ հեկտար հացահատիկային ցանքի համար 130—160 կիլոգրամ ցորեն, գարի, վարսակ, 1600—1900 կիլոգրամ կարտոֆիլ, 32 կիլոգրամ արևածագիկ, 32 կիլոգրամ կորեկ, լոբի, սիսեռ, փոսպ, 48 կիլոգրամ կանեփ, 16 կիլոգրամ կերի խոտարուսեր, 50—60 կիլոգրամ բամբակ:

11) Անասունների կերն այնպիսի քանակութամբ, վորն անհրաժեշտ է մինչև նոր բերքը հավաքելը կամ մինչև արոտ հանելը, յեղնելով մի ամսվա պահանջի հետևյալ չափից—մեկ կովին կամ յեզան 325 կիլոգրամ չոր խոտ, մեկ գլուխ մանր անասունին 48 կիլոգրամ չոր խոտ, մեկ հորթին 212 կիլոգրամ չոր խոտ, մեկ ձիուն 325 կիլոգրամ չոր խոտ և 50 կիլո-

գրամ դարի, պատշաճ դեպքում չոր խոտը փոխարինվում է դարմանով:

12) Վերադաս կոոպերատիվ կազմակերպությունների ոգտին մուծվող՝ կոոպերատիվ կազմակերպությունների փայտվճարները:

13) Կոլտնտեսությունների և կազմակերպությունների ու հիմնարկների այն մուծումները, վորոնք հատկացվում են դյուղատնտեսական յերկարատե վարկավորման ֆոնդին, սոցիալիստական դյուղատնտեսության ֆինանսավորման բանկում, ինչպես և այդ ֆոնդի անտոկոսարեր ավանդները:

14) Պարտադիր ապահովագրական կարգով հասանելիք ապահովագրական վարձատրությունը:

15) Կոլտնտեսության պարենավորման արտագրանքի այն մասը, վորը կոլտնտեսականների միջև բաշխվելու յե կոլտնտեսականներին և նրանց խնամքի տակ դտնվողներին մինչև հետևյալ տարվա բերքը բաշխելու ժամանակ նրանց պարենավորումն ապահովելու համար, յեղնելով յուրաքանչյուր անձի համար պահանջվող հետևյալ չափից՝ 16 կիլոգրամ ալյուր (կամ 18 կիլոգրամ հացահատիկ), 16 կիլոգրամ կարտոֆիլ, 3 կիլոգրամ ձավար, 400 գրամ բուսական յուղ կամ 500 գրամ յուղատու սերմ, 5 կիլոգրամ բուր տեսակի բանջարեղեններ:

Նայած տեղական պայմաններին, նվաճ մթերքները համապատասխան քանակութամբ կարող են փոխարինվել այլ մթերքներով: Կոլտնտեսությունների արտագրանքի նվաճ մասը վորոշելու ժամանակ պիտի հաշվի առնել տվյալ տնտեսական տարվա արդեն բաշխված բերքը:

16) Բանվորների հասարակական սննդի համար հատկացվող խորհրդատեսական արտադրանքի այն քանակը, վորն անհրաժեշտ է առաջիկա յերեք ամիսների համար:

2) Բռնազանձումը չի կարող տարածվել կոլտրնտեսականներին, բանվորներին, ծառայողներին, ինչպես նաև գյուղատնտեսական հարկման չենթարկվող (բացառությամբ Յ-րդ կատեգորիայի յեկամատահարկով հարկվողներին) անձանց հետևյալ դույթի վրա:

1) Ապառքատիրոջ և նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ ամառային ու ձմեռային հագուստ, սպիտակեղեն, կոշիկեղեն և տնային՝ գործածութեան հետևյալ իրերը.—

ա) ամառային և ձմեռային հագուստ—մեկ անձնավորութեան համար մեկ ամառային կամ աշնանային վերարկու (կամ յափնջի և այլն), մեկ ձմեռային վերարկու (կամ կիսամուշտակ, վոչխարամուշտակ և այլն), մեկ ձեռք ձմեռային հագուստ (կանանց համար յերկու ձեռք ամառային հագուստ), մեկ ձեռք ամառային հագուստ (կանանց համար յերկու ձեռք ամառային հագուստ), մեկ ղլխարկ կանանց համար, բացի դրանից յերկու ամառային ղլխաչոր և մեկ տաք ղլխաչոր (կամ շալ), մեկ վոչխարամուշտակ այն ընտանիքին, վորը մշտապես ղբաղվում է գյուղատնտեսութեամբ.

բ) յուրաքանչյուր անձնավորութեան 3 ձեռք սպիտակեղեն.

դ) յուրաքանչյուր անձնավորութեան մեկ դույթ ամառային, մեկ դույթ ձմեռային կոշիկ և մեկ դույթ կրկնակոշիկ:

դ) կենցաղային գործածութեան համար անհրաժեշտ իրեր՝ յուրաքանչյուր անձնավորութեանը ճաշի (ափսե, դանակ, սլատառաքաղ, դղալ) և թեյի (բաժակ կամ չաշկա և բաժակապնակ) մեկ սրբիբոր, մեկ աթոռ (տարուրետկա), մեկ ձեռք անկողին (ներքնակ, բարձ, յերկու սավան, յերկու բարձի յերես, վերմակ), մեկ մահճակալ, անձնական յերկու յերես սրբիչ, յուրաքանչյուր ընտանիքին ինքնայեռ (թեյաման ջուր յեփացնելու համար), սրբիմուս (կամ կերասինկա), լամպ, ճաշի սեղան, յերկու սփոոց, յերկու թեյի սրբիչ, յերկու խահանոցի սրբիչ, յերկու դույլ, մեկ պահարան (կամ նրան փոխարինող մի այլ կարասի՝ հագուստներ պահելու համար, խոհանոցի անհրաժեշտ իրեր (կաթսա, ունելիք և այլն):

Ծանոթութիւն.— Նույն նորմաներով բռնազանձման յենթակա չեն ընտանիքի հարգելի պատճառներով բացակայող այն անդամների դույթը, վորոնք գյուղատնտեսական հարկը վորոշելիս հաշվառված են:

2) Այն քանակութեամբ վառելիքի պաշար, վորն անհրաժեշտ է ապառքատիրոջ յերեք ամիս կերակուր յեփելու և շենք տաքացնելու համար:

3) Արտադրութեան սարքավորում, գործիքներ, ձեռնարկներ և զրքեր, վորոնք անհրաժեշտ են առանց վարձու աշխատանքի աշխատող ապառքատիրոջը՝ սրոֆեսիոնալ ղբաղմունքների համար և մեկ վարձու աշխատավորով աշխատողի համար, յեթե այդ պահանջում են արտադրութեան պայմանները և նրանք ղրկված չեն ինտուրդների ընտրութեան իրավունքից.

ա) այն կատեգորիայի ապառքատիրոջ արտադրութեան գործիքները, վորոնք անհրաժեշտ են նրա ղղ-

բաղմունքի և տնայնագործական արհեստի համար և վորոնք համաձայն գործող որենսդրութեան՝ արհեստագործական հարկով չեն հարկվում:

Անճնական պրոֆեսիոնալ գրադմունքների համար անհրաժեշտ արտադրութեան միջոցներ, գրքեր ու ձեռնարկներ:

Ծանոթութիւն. — 3-րդ կետում նշված առարկաները չեն բռնադանձվում նաև այն կատեգորիայի անճնավորութեաններից, վորոնք պաշտոնավարում կամ աշխատում են վարձով (գարբին, հյուան, մանտյոր, բժիշկ, յերաժիշտ, գծագրող և այլն), ինչպես նաև ուսանողներից:

4) 3-րդ կետում նշված անճնավորութեանների փաստական աշխատանքի համար յերկու ամսվա հումք և վառելիք:

5) Կոլտնտեսականների անասունը, թռչուններն ու գյուղատնտեսական ինվենտարը հետևյալ չափով՝

ա) յուրաքանչյուր տնտեսութեանը մեկ կով, մինչև 1 և կես տարեկան հասակի մեկ հորթ, տնային թռչուններ (հավ, սառ, բառ) յուրաքանչյուր տեսակից 5 հատից վոչ ավելի, վոչխարներ մինչև դառնեբը ծծից կտրելը, ախինքն՝ ծնելու որից 4 ամսվա ընթացքում:

Ծանոթութիւն. — Մեկ գլուխ խոշոր յեղջուրավոր անասունը հավասարեցվում է հարկվող հասակի 5 գլուխ մա՛նր անասունի (վոչխար, այծ):

բ) գյուղատնտեսական ինվենտար. յուրաքանչյուր տնտեսութեանն անհրաժեշտ մանր ինվենտար (գերան-

դիներ, մանղաղներ, կացիններ, փոցիներ, յեղաններ, բահեր և այլն), վորսորդութեան, ձկնորսութեան և այլ արհեստների համար անհրաժեշտ գործիքներ, վորտեղ այդ արհեստները հանդիսանում են տնտեսութեան յեկամուտի հիմնական աղբյուրը:

6) Կոլտնտեսականների բնակելի և անտեսական շէնքերը, այլև շինարարութեան համար պետական մարմիններից արտոնյալ պայմաններով ստացված փայտանյութը:

7) Պարենավորման մթերքներ այն քանակութեամբ, վոր ապահովվի կոլտնտեսականների և նրանց խնամքի տակ դանվողների պահանջը՝ մինչև նոր բերքը, յեղնելով մեկ ամսվա պահանջի հետևյալ չափից—1 1/2 կիլոգրամ ավուր (կամ 16 կիլոգ. ցորեն), 16 կիլոգրամ կարտոֆիլ, 2 կիլոգ. ձավար, 1—1/4 կիլոգրամ աղ, 400 դրամ բուսական յուղ (կամ 1 և կես կիլոգ. յուղատու սերմեր), 4 կիլոգ. բուրս տեսակի բանջարեղեն:

8) Մերմեր, տեղական հողային մարմինների կողմից սահմանված նվազագույն չափով:

9) Անասունների համար կեր՝ այն քանակութեամբ, վորն անհրաժեշտ է մինչև նոր բերքը հավաքելը կամ մինչև արոտ հանելը, յեղնելով մեկ ամսը վա պահանջի հետևյալ չափից,—1 կովին 325 կիլոգր. չոր խոտ, մեկ գլուխ մանր անասունին 48 կիլոգրամ չոր խոտ, մեկ հորթին՝ 212 կիլոգր. չոր խոտ, մեկ ձիուն՝ 325 կիլոգր. չոր խոտ և 50 կիլոգր. գարի: Պատշաճ դեպքում չոր խոտը փոխարինվում է դարմանով:

10) Բանջարանոցների, պտղատու և խաղողի այ-

գիների և հատապտուղների չհավաքված բերքը, բացի արդյունաբերական նշանակութուն ունեցողներից:

11) Կոոպերատիվ կազմակերպութունների անդամների փայտավճարները:

12) Պարտադիր ապահովագրութունից ապառքատիրոջ հասնող ապահովագրական վարձատրութունը, այլև սոցիալական ապահովագրության կամ սոցիալական ապահովման կարգով տրվող գումարները:

13) Բռնագանձումը չի կարող տարածվել աշխատավոր մենատնտեսների հետևյալ դույզի վրա՝

1) Մեկ ընակելի կամ անմիջականորեն նրա հետ կապ ունեցող տնտեսական շենքերի:

2) Վառելիքի պաշարի այն քանակության, վորն անհրաժեշտ է ընակելի շենքերը յերեք ամսվա ընթացքում տաքացնելու համար:

3) Ապառքատիրոջ և նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ ձմեռային և ամառային հագուստի, սպիտակեղենի և կոշիկեղենի ու տնային կենցաղի համար անհրաժեշտ այն քանակությամբ իրերի, վոր նշված է սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին յենթակետում:

4) Կոոպերատիվ կազմակերպութունների անդամների փայտավճարները:

4. Կուլակային տնտեսութուններից և 3-րդ կատեգորիայի յեկամտահարկով հարկվող անձերից բռնագանձումը չի կարող դարձվել ապառքատիրոջ և նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ ամառային և ձմեռային հագուստի, կոշիկեղենի, սպիտակեղենի և տնային կենցաղի այլ անհրաժեշտ հետեվյալ իրերի վրա՝

1) Ձմեռային և ամառային հագուստ մեկ-անձի համար, ամառային կամ աշնանային մեկ վերարկու (կամ յափնջի և այլն), ձմեռային մեկ վերարկու (կամ կիսամուշտակ, մուշտակ և այլն), մեկ ձեռք ձմեռային հագուստ (կանանց համար յերկու ձեռք ձմեռային հագուստ), մեկ գլխարկ (իսկ կանանց համար բացի դրանից ամառային գլխաշոր, մեկ տաք գլխաշոր կամ շալ):

2) Յուրաքանչյուր անձին յերկու ձեռք սպիտակեղեն:

3) Յուրաքանչյուր անձին մեկ գույգ ամառային և մեկ գույգ ձմեռային կոշիկ:

4) Տնային կենցաղի այլ անհրաժեշտ իրերի—յուրաքանչյուր անձին մեկ ճաշի (ափսե, պատառքաղ, դանակ, դղալ) և մեկ թեյի (բաժակ և բաժակապնակ) պրիքոր, մեկ աթոռ (տաբուրետիկա), մեկ ձեռք անկողին (ներքնակ, բարձ, յերկու սավան, յերկու բարձի յերես, վերմակ), մեկ մահճակալ, յերկու յերեսորբիչ, յուրաքանչյուր ընտանիքին ինքնայն (թեյաման՝ ջուր տաքացնելու համար), պրիմուս (կամ կերասինկա), լամպ, ճաշի սեղան, թեյի յերկու սըրբիչ, խոհանոցի յերկու սըբիչ, յերկու դույլ, մեկ պահարան (կամ նրան փոխարինող մեկ այլ կարասիք հագուստեղենը պահելու համար), խոհանոցային ամենանհրաժեշտ իրեր (կաթսաներ, ունելիք և այլն):

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 86)]:

271-ա. Պետական հիմնարկներից և ձեռնարկութուններից, կոոպերատիվ, արհեստակցական և հասարակական կազմակերպութուններից ու կուլտեսու-

Թյուններից վաղնած, հախչտակած կամ յուրացրած գուլքի հատուցման կարգով, քրեական կամ քաղաքացիական դատարանի վորոշած դումարների գանձումը տարածվում է ամբողջ գուլքի վրա (բացառութեամբ այն գուլքի, վորի վրա 271 հոդվածի համաձայն բռնադանձում չի կարող տարածվել), վորը դատապարտյալի (պատասխանողի) հետ միասին պատկանում է նաև ուրիշ անձնավորությունների, այդ թվում նաև դուրդական ծխի ընդհանուր գուլքի վրա, վորի կազմին պատկանում է դատապարտվածը (պատասխանողը), այլև ամուսինների ընդհանուր գուլքի վրա, յեթե դատարանով կհաստատվի, վոր ընդհանուր գուլքը ավելացել է հանցադործության շնորհիվ:

Գանձումն ընդհանուր գուլքի վրա դարձնելը թույլ է տրվում միայն դատավճռի կամ վճռի մեջ այդ մասին համապատասխան հիշատակություն անելու դեպքում:

Մանքուքյուն.— Այս հոդվածի ուժը տարածվում է միայն այն դեպքի վրա, յերբ վատնելու, յուրացնելու կամ հախչտակելու մոմենտից մինչև քրեական հետապնդում սկսելու մոմենտը 2 տարուց ավելի չի անցել:

[1935 թ. 23/9, (Որ. և Կարգ. Ժող., № 9, հոդ. 86)]:

271-բ. Պետական խնայողական դանձարկղներն, ինչպես նաև սպառողական և դյուրատնտեսական ու արհեստագործական ընկերությունները մուծած ավանդների վրա գանձում դարձնել և արգելք դնել կարելի չէ միայն դատական և դատաքննչական մարմինների՝ քրեական գործերի վերաբերյալ վորոշումների

հիման վրա: Մատնանշված ընկերություններում պահվող ավանդների վրա, բացի դրանից, թույլ է տրվում գանձում դարձնել և արգելք դնել նաև այդ ավանդներն ընդունած կազմակերպությունների ոգտին կատարվող գանձումների վերաբերյալ գործերով:

[1930 թ. 3-ին մայիսի, (Որ. և Կարգ. Ժող. № 5, հոդ. 101)]:

271-դ. Վարկային հիմնարկի կողմից ընդունված չեկի գումարի վրա չի կարող չեկատուի դեմ հարուցված պահանջների բավարարման կարգով արգելք դրվել կամ գանձում դարձվել մինչև չեկի ներդրում-թյան որինական ժամկետը լրանալը:

[1930 թ. մայիսի 3-ին, (Որ. և Կարգ. Ժող., № 6, հոդ. 113)]:

271-դ. Հեղինակի իրավունքի վրա՝ հեղինակի պարտատիրոջ կողմից չի կարող գանձում դարձվել:

Գանձումը կարելի չէ դարձնել այն յեկամուտների վրա, վոր հեղինակն ստանում է իր իրավունքով:

[1928 թ. նոյեմբերի 5-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 14, հոդ. 154) և 1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 86)]:

272. Գործարանների և արհեստանոցների սարք ու կարգի առարկաներն արգելադրության յենթակա կարող են լինել վոչ առանձին-առանձին, այլ գանձումն ամբողջ ձեռնարկության վրա դարձնելու դեպքում միայն, յեթե գործող որենսդրության համաձայն գանձումը կարելի չէ դարձնել այդ ձեռնարկության վրա:

272-ա. Վարկատուները տնտեսական մարմինների կապիտալ շինարարության հաշիվների վրա կարող են

դանձում դարձնել միայն այն պահանջներով, վորոնք արբիտրաժի կամ դատարանի կողմից ընդունված են և վորոնք վերաբերում են կապիտալ շինարարութեանը:

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 86)]:

272-բ. 272-ա հոդվածում նշված դանձումը կարող է տարածվել տնտեսական մարմինների կողմից կապիտալ շինարարութեան համար բաց թողնված բոլոր միջոցների վրա անկախ նրանից, թե այդ միջոցները վոր որպիսի են վերաբերում և յե՞րբ և ծաղել վարկատույի սվյալ պահանջը, յեթե միայն վաղեմութեանը չի անցել:

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 86)]:

272-դ. Կապիտալ շինարարութեան հաշիվներում միջոցներ չլինելու դեպքում վարկատուները կարող են դանձումը տարածել տնտեսական մարմիններին պատկանող ամեն մի դուլքի վրա, վորը վերաբերում է կապիտալ շինարարութեանը, բացառութեամբ այն դուլքերից, վորոնց վրա դործող որենսդրութեամբ դանձումը դարձնել չի թույլատրվում:

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 86)]:

272-դ. Վարկատուները կարող են դանձումը դարձնել տնտեսական մարմինների շահագործման և այլ դուլքերի հաշվարկային այն հաշիվների վրա, վորոնք չեն վերաբերում կապիտալ շինարարութեանը և պայմանավորված են միայն այդ մարմինների, բացի կապիտալ շինարարութեանից, այլ հիմունքներից բղխող պարտականութեաններով:

Դատարանի կամ պետարբիտրաժի մարմինների հատուկ վորոշումներով, վորպես բացառութեան 272-ա և 272-դ հոդվածներից, վարկատուները կարող են դանձումը դարձնել այն պահանջների վրա, վորոնք վերաբերում են կապիտալ շինարարութեանը, անտեսական մարմինների շահագործմանը վերաբերող հաշվարկային հաշիվների վրա և ընդհանրապես՝ այլ հիմունքներից բղխող պահանջներով—կապիտալ շինարարութեան հաշիվին: Դատարանը և պետարբիտրաժի մարմիններն այդպիսի վորոշում կարող են կայացնել այն դեպքում, յերբ կհաստատվի տնտեսական մարմնի մի հաշիվ ունեցած պարտքը մյուսի հաշիվին (վորոշված ժամկետին չիջուցման վճարումների և շահույթի չլիտանցելը, կապիտալ շինարարութեան համար պատրաստած նյութերը շահագործման կարիքների համար ոգտագործելը և այլն):

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 86)]:

272-ե. Վորպես բացառութեան 272-ա և 272-դ հոդվածներից, հանրայնացված սեկտորի կազմակերպութեանների միջև տեղի ունեցող վեճերով 500 ուրբ. վոչավելի դումարի կատարողական փաստաթղթերով դանձումն անմիջականորեն առաջադրվում է թերով դանձումն անմիջականորեն առաջադրվում է պարտապանին և դանձումը դարձվում է պարտապանի՝ բանկում ունեցած հաշիվների վրա այն դեպքում միայն, յերբ պարտապանը բացի բանկում ունեցած հաշիվներից վորևե այլ դուլք չունի:

[1935 թ. սեպտեմբերի 23-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 9, հոդ. 86)]:

273. Յեթե դուլքը դանձվում է այնպիսի բնակա-

բանում, վորը պարտապանի և միաժամանակ այլ ան-
ձանց ձեռքումն է, արդելագրության յենթակա չէ մի-
այն այն դեպքում, յերբ բացահայտ է, վոր դուչքն
այլ անձի յե պատկանում:

274. Յեթե դուչքի արդելագրությունը տեղի յե
ուեննում պարտապանի բացակայութեամբ, պարտա-
դիր է միլիցիայի կամ տնային վարչության ներկայա-
ցուցչի ներկայութեանը:

275. Արդելագրությունը կատարվում է դուչքի
վերդրի մասին արձանագրություն կազմելով և պար-
տապանին հայտնելով, վոր նա դուչքը տնորինելու ի-
րավունք չունի:

276. Գուչքի վերդիրը պիտի պարունակի.—

ա) վերդիրողի անունը.

բ) ակտ կազմելու ժամանակն ու տեղը.

գ) արդելագրության հիմքը.

դ) պահանջատիրոջ և պարտապանի անունը.

ե) արդելքի տակ առած յուրաքանչյուր առարկա-
յի անունն ու նկարագրությունը.

զ) հիշատակություն այդ առարկաների հատկա-
նիշների կամ հաղվադյուտ լինելու մասին.

ը) յուրաքանչյուր արդելագրյալ առարկայի գնա-
հատությունը.

թ) պահպանողի անունը (հոդ. 280), պահպանու-
թյան վերաբերյալ պարտականությունների բացատրու-
թյունը և պահպանողի ստորագրությունը.

ժ) կողմերի և վերդրի ժամանակ ներկա յեղող ան-
ձանց դիտողությունները և դատական կատարածուի
կարգադրություններն այդ դիտողությունների առ-
թիվ.

ի) բոլոր ներկա յեղողների ստորագրությունը:

277. Յեթե արդելագրության ժամանակ յերրորդ
անձինք իրենց իրավունքներն են առաջադրում արդե-
լագրվող դուչքի վերաբերմամբ, վորի հետևանքով հը-
նարավոր չէ դանձումը այդ դուչքի վրա դարձնել
պարտապանի պարտքերի դիմաց, այդ մասին հիշա-
տակվում է վերդրում:

278. Դատական կատարածուն պահանջատիրոջ պա-
հանջմամբ կարող է կնքել վերդրված առարկաները,
վորի մասին պիտի հիշատակի վերդրի ակտում:

279. Վերդրի հետ միաժամանակ դատական կա-
տարածուն գնահատում է վերդրված դուչքը շուկայա-
կան միջին գներով: Անհրաժեշտության դեպքում գը-
նահատության համար կարող է փորձագետ հրավիր-
վել:

280. Վերդրված դուչքը հանձնվում է պարտապա-
նին ի պահ: Յեթե պարտապանը հրաժարվում է պահ-
պանելուց կամ յերբ նա բացակա յե, դատական կա-
տարածուն պահպանող է նշանակում: Դատական կա-
տարածուն կարող է պահպանող նշանակել նաև պա-
հանջատիրոջ խնդրով, յեթե այդ հարգելի համարի:

281. Պահպանողը, յեթե պարտապանը պահպա-
նող չի նշանակված, վարձատրություն է ստանում
պահպանության համար Արդարադատության Ժողո-
վրդական կամ Թյարիատի սահմանած սակագնի հա-
մաձայն. բացի դրանից պատշաճ դեպքերում նրան
հատուցվում են պահպանության համար նրա փաստո-
րեն կատարած ծախսերը:

282. Պարտապանը, վորին դուչքը հանձնված է ի
պահ, կարող է ոգտագործել այն, յեթե պահպանելու

տված գույքի հատկութունն այնպես ե, վոր ողտա-
գործելուց նրա արժեքը չի պակասի:

Գ Լ Ո Ւ Խ XXXII

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱ-
ԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՅ ՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵ-
ՐԻՅ ԳԱՆՁՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ

283. Կատարողական թերթերով պետական և հա-
սարակական հիմնարկներից և ձեռնարկութուններից
դանձում կատարելիս սահմանվում են հետևյալ բացա-
ռությունները:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վո-
րոչման խմբագրությամբ):

284. Կատարողական թերթը պահանջատիրոջ միջո-
ցով անձամբ կամ նրա համաձայնությամբ՝ վճիռ կա-
յացնող դատարանի միջոցով ուղարկվում և համապա-
տասխան պետական կամ հասարակական հիմնարկի և
ձեռնարկության վարչությանը:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վո-
րոչման խմբագրությամբ):

285. Պետական կամ հասարակական հիմնարկի և
ձեռնարկության վարչությունը, հանձնիս վարկեր առ-
նորինողի կամ նրան փոխարինողի, պիտի լինվին և
անվերապահորեն կատարի դանձողին հասանելիք դու-
մարները վճարելու վերաբերյալ՝ կատարողական թեր-
թից բղիտը բոլոր գործողությունները, հակառակ
դեպքում նա նյութական կամ կարգապահական պա-
տասխանատվության և յենթարկվում:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վո-
րոչման խմբագրությամբ):

285-ա. Վճիռը կատարելու համար սահմանվում և
ժամկետ տասնչորս օր, իսկ աշխատավարձի դանձման
վերաբերյալ վճիռները կատարելու համար— յոթն օր,
հաշված պետական կամ հասարակական հիմնարկի և
ձեռնարկության կողմից կատարողական թերթն ստաց-
վելու օրից:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վո-
րոչման խմբագրությամբ):

285-բ. Ժողովրդական դատավորը կարող է պար-
տատիրոջ բողոքի հիման վրա անհրաժեշտության դեպ-
քում դատական կատարածուի միջոցով ձեռք առնել ու-
րենքով նախատեսված հարկադրական միջոցներ այն
ժամանակ, յերբ նախորդ հողվածով նախատեսված
ժամկետում պետական կամ հասարակական հիմնարկը
և ձեռնարկությունը չի կատարում այդ վճիռը:

(ՀՆՍՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի վո-
րոչման խմբագրությամբ):

285-գ. Յերբ պարտատերն ու պարտապանը հան-
դիսանում են հանրայնացված սեկտորի կազմակերպու-
թյուններ, դանձումը կատարվում է վարկային հիմ-
նարկներում յեղած դումարներից: Պարտատերը կատա-
րողական թերթը (կամ 255-րդ հոդ. նշված մի այլ
փաստաթուղթ) անմիջաբար ներկայացնում է վարկա-
յին հիմնարկին, վորը կատարում է դանձումը բանկի
կողմից մշակված և Արդժողկոմատի հետ համաձայնեց-
րած կանոնները հիման վրա:

Այդ դեպքում Քաղ. Դատ. Որ. 257, 262, 284,
285 և 287 հոդվածները չեն կիրառվում:

Յեթե վճիռը կատարելու ժամանակ առաջանում է այնպիսի հարց, վորը յենթակա չե Պետքանկի և վարկային այլ հիմնարկի իրավասութեանը, համապատասխան վարկային հիմնարկը կատարման թերթն ուղարկում է դատական կատարածունին՝ դանձումն ընդհանուր կարգով կատարելու համար:

[1934 թ. հունվարի 1-ին, (Ռր. և Կարգ. Ժող. № 1, հոդ. 3)]:

286. Պահանջը չի դարձվում պետական բյուջեյով պահվող պետական հիմնարկի գույքի վրա:

(ՀՍՄՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրութեամբ):

286-ա. Յեթե պետական հիմնարկը փոխանցված է տնտեսավարական հաշվի, արդեւք է դրվում և վաճառվում պետհիմնարկի այն գույքը, վորի վրա դործող որենադրութեան համաձայն կարելի չե դարձնել դանձումը:

Գանձումը չի կարելի դարձնել նաև այն միջոցների վրա, վորոնք անհրաժեշտ են անցած ժամանակի և առաջիկա յերկու շաբաթվա աշխատավարձը վճարելու համար: Նույն կարգով է կատարվում դանձումը նաև հասարակական հիմնարկին կամ ձեռնարկութեանը պատկանող միջոցների վերաբերյալ:

(ՀՍՄՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրութեամբ):

287. Յեթե աշխատավարձի հայցերի վերաբերյալ կատարողական թերթով հասանելիքը չի վճարվում 285-ա հոդ. մասնանշված ժամկետում, դատավորը պահանջատիրոջ դիմումի համաձայն վորոշում է կայացնում դանձումը պարտադրանի նախահաշվային վարկերի վրա դարձնելու մասին:

Այդ դեպքերում վարկեր տնորինողը պարտավոր է դատարանին ցույց տալ նախահաշվի այն հոդվածներն ու պարտադրաճնեքը կամ այն դումարները, վորոնց հաշվին պետք է կատարվի դանձումը:

(ՀՍՄՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրութեամբ):

287-ա. Ոտար պետութեանը պատկանող գույքի վրա արդեւք դնել և դանձում դարձնել կարելի չե միայն յուրաքանչյուր առանձին դեպքում նախապես ՍՄՀՄ Ժողովրդական Կոմիսարների ինքնակազմութեան ստանալուց հետո:

[1929 թ. 18 սեպտեմբերի, (Ռր. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 154)]:

287-բ. Պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկներին, ձեռնարկութեաններին և կազմակերպութեաններին տրված կատարողական թերթերով և կատարողական այլ փաստաթղթերով դանձումը, ինչպես նաև աշխատավարձի դանձումը պետական ու տեղական բյուջեյում գտնվող պետական հիմնարկներից կատարվում է այդ հիմնարկների նախահաշվային հատկացումների հաշվին:

Այդ դեպքում կատարողական փաստաթղթերը հավասարեցվում են նախահաշվով հատկացված գումարներից կատարվող ծախսերի վճարման փաստաթղթերին և ուղարկվում են պետական բանկի համապատասխան հիմնարկին—ՍՄՀՄ Ծինժողկոմատի, միութենական կամ ավտոնոմ հանրապետութեանների Ֆինանսական կամ ավտոնոմ հանրապետութեանների ժողովրդական Կոմիսարիատների կամ տեղական Ֆինանսական մարմինների միջոցով՝ ըստ պատկանելույն (նայած՝ թե պատասխանող հիմնարկը վոր բյուջեյումն է գտնվում) վերջինների կողմից նշելու նա-

խահաչլի այն ստորաբաժանումը, վորից կատարողական փաստաթղթերով պիտի կատարվի դանձումը:

Գանձումների համար այս հոդվածով սահմանված կարգը չի տարածվում պետական և տեղական բյուջեյում գտնվող հիմնարկների հատուկ և այլ արտաբյուջետային միջոցների վրա:

Այդ միջոցների հաչլին դանձումները բյուջետային հիմնարկներից կատարվում են ընդհանուր կարգով:

[1937 թ. նոյեմբերի 14-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 49)]:

Գ Լ Ո Ւ Խ XXXIII

ԳՍԱԶՈՒՄԸ ԲՍԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇ- ԽՍՏԱՎԱՐՁԻ ՎՐԱ ԴԱՐՁՆԵԼԸ

288. Բոլոր հիմնարկներն ու ձեռնարկությունները — պետական, կոոպերատիվ, հասարակական և թե մասնավոր անձինք, պարտավոր են սահմանված ժամկետին տեղեկություն տալ դատական կատարածուի պահանջմամբ, թե պարտապանը ծառայում է արդյոք իրենց մոտ, և թե վորքան է ընթացիկ ամսում նրան հասանելիք ամեն տեսակ մշտական վարձատրության և միանվազ վճարումների դումարը:

289. Աշխատավարձից դանձումներ կատարվում են հետևյալ հիմունքներով. —

ա) բոլորովին ազատվում է դանձումից աշխատավարձի այն մասը, վորը հավասար է Աշխրենսդրքի 59-րդ հոդ. համաձայն տվյալ վայրի համար տարիֆային կոսյարների առաջին կարգով սահմանված պարտադիր նվազագույն աշխատավարձին.

բ) նվազագույն աշխատավարձից ավելի ստացածից կարելի չէ պահել վոչ ավելի, քան 50 տոկոս — 1) ընտանիքի անդամների ապրուստի համար, 2) աշխատանքով չհատուցված կանխավճարները, վճարված ճանապարհածախան ու ստացած հատուկ հազուստի արժեքը ծածկելու համար այն բանվորներից, վորոնք անտառահատման ու փայտապատրաստման և բաստառաքման (сплавные) աշխատանքներից հեռանում են պայմանագրով սահմանված ժամկետից կամ վորոչված աշխատանքը կատարելուց առաջ:

Նվազագույն աշխատավարձից ավելի ստացած մընացորդից գանձման մնացած բոլոր տեսակների համար չի կարելի 20 տոկոսից ավելի պահել:

[1930 թ. մայիսի 31-ին (Որ. և Կարգ. Ժող. № 116)]:

Ծանոթություն. — 1. Ընտանիքի անդամների ապրուստի և այլ պարտքերի համար միաժամանակ դանձում անելիս բանվորին ու ծառայողին համենայն դեպս պիտի թողնվի աշխատավարձի 50%-ը:

Ծանոթություն. — 2. Սոցիալական ապահովագրության մարմինների կողմից Աշխ. Որենսդ. 176 հոդ. «բ» և «ե» կետերի համաձայն տրվող նպաստների դումարներից և Հանրապետությանը բացառիկ ծառայություն մատուցած անձանց հատուկ սահմանված կարգով վճարվող անհատական կենսաթոշակներից կատարողական թերթերով կարելի չէ ընտանիքի անդամների ապրուստի միջոցներ դանձել այն չափով, վորոնք այդ հոդվածի «ա» և «բ» կետերով սահմանված են բանվոր-

ների ու ծառայողների աշխատավարձից դան-
ձումներ կատարելու համար:

(ՀնՄՀ Կենտրոնական 1928 թ. հունիսի 7-ի
վերջին կամ քաղաքացիական):

Մանրություն. — 3. Իր բացառիկ իրավունքի ամ-
բողջական կամ մասնակի ոտարման համար
հեղինակին հասանելիք վարձատրության
զանձման կարգը հավասարեցվում է աշխա-
տավարձի զանձման կարգին:

Մանրություն. — 4. Իր յերկն ոտարելու կամ հե-
ղինակի իրավունքի խախտման համար հեղի-
նակին հասանելիք վարձատրության վրա
զանձում դարձնելու կարգը հավասարեցվում
է աշխատավարձի զանձման կարգին:

[1928 թ. 5/11, (Որ. և Կարգ. Ժող. № 14,
հոդ. 154)]:

290. Դատական կատարածուն տեղեկություն ըս-
տանալուց հետո (հոդ. 288) անհապաղ հաշվարկ է
կատարում և պարտավորեցնում է տեղեկություն ար-
վողին համապատասխան գումար պահել աշխատա-
վարձից ու ներկայացնել իրեն՝ դատական կատարա-
ծունին:

291. Դատական կատարածունի կարգադրությունը
(հոդ. 290) չկատարելու, այլև տեղեկություն չտա-
լու դեպքում այն անձինք ու հիմնարկները, վերոնց
մոտ ծառայում կամ աշխատում է պարտապանը, պա-
տասխանատու լին պարտապանների առաջ զանձվելիք
գումարի չափով:

Կատարողական թերթով կամ ալիմենտի մասին
համաձայնության ակտով (Ամուսնության, Ընտանիքի
և Խնամակալության Որենսդրության 22 հոդ.) պատասխա-

նողից հասանելիք գումարը նրա աշխատավարձից
չբռնելու դեպքում, ինչպես նաև պատասխանողի
հասցեն փոխելու կամ նրա աշխատավարձի մասին:
Կատարողական մարմինների կողմից որենքով պա-
հանջված տեղեկանքները չհաղորդելու դեպքում, Ժո-
ղովրդական դատավորը իրավունք ունի վերջում
կայացնել՝ հանցավոր պաշտոնատար անձին տուգա-
նելու մինչև 100 ուրլի գումարով:

[1938 թ. ոգոստոսի 9-ին, (Որ. և Կարգ. Ժող.,
№ 8, հոդ. 34)]:

Գ Լ Ո Ւ Խ XXXIV

ԳՍՆՁՈՒՄԸ ՊՍՐՏԱՊԱՆԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵ-
ՐՈՒՄ ՈՒ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՅ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԴՐԱ-
ՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ
ԴԱՐՁՆԵԼԸ

292. Դատական կատարածուն զանձումը պար-
տապանի՝ մասնավոր անձանց մոտ և տեղական հիմ-
նարկներում ունեցած դրամական գումարների և գույ-
քի վրա դարձնելիս հիշյալ անձին կամ հիմնարկին
հարցույթ է անում, թե նրա մոտ պարտապանին պատ-
կանող վորևէ գույք կա՞ թե վոչ, ի՞նչի հիման վրա
և վորքան ժամանակով է նրան տրամադրված, մատ-
նանչելով, վոր այդ հարցումն ստացվելու պահից նը-
րանց մոտ յեղած գույքի և գումարների վրա արգելք
է դրվում զանձվելիք գումարի չափով և վոր նրան-
ցից հասանելիք բոլոր վճարելիքները՝ մինչև զանձե-
լիք գումարի լրիվ մարումը նրանք պարտավոր են

մուծել վոչ թե պարտապանին, այլ դատական կատարածունին :

293. Արդյունաբերական, վարկային, առևտրական և ամեն տեսակի այլ պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր հիմնարկներն ու ձեռնարկությունները, այլև մասնավոր անձինք, պարտավոր են տեղեկութուն տալ դատական կատարածուի նշանակած ժամկետում՝ թե ինչ դումարներ, արժեքներ և այլ դույք կան իրենց մոտ, վորոնք պարտապանին են պատկանում և հարցումն ստանալու որից, առանց դատական կատարածուի թույլտվության իրավունք չունեն դույք վերադարձնել կամ դրամական արժեքներ տալ պարտապանին արդելադրության սահմաններում :

294. Յերբ դատական կատարածուն տեղեկություն է ստանում, վոր յերրորդ անձանց մոտ դույք կա, վերդրում է հիշյալ դույքը և արժեքները, իսկ դրամը հանձնելն ու դույքը աճուրդով վաճառելը տեղի յե ունենում՝ նայած, թե ինչ պայմաններով են դրանք յեղել նրանց մոտ: Բայց յեթե պատասխանողի դույքըն ու արժեքները գտնվում են պետական հիմնարկներում ու պետական ձեռնարկություններում, դատական կատարածուն վերդրություն չի կազմում և զբրամ հանձնելը կամ դույք վաճառելը կարող է տեղի ունենալ միայն այն պահից, յերբ հիմնարկն այդ դույքը պիտի տրամադրեր պարտապանին:

295. Տեղեկություն տալուց խուսափելու համար կատարման վայրի ժողովրդական դատավորի վորոշմամբ կարող է տուգանք դրվել մինչև 100 ուսուլի դումարով:

ԳԱՆՁՈՒՄԸ ՇԵՆՔԵՐԻ ՅԵՎ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎՐԱ ԴԱՐՁՆԵԼԸ

296. Գանձումը շենքերի և կառուցման իրավունքի վրա դարձնելիս բացի ընդհանուր կանոններից՝ կիրառվում են հետևյալ հոդվածները:

297. Պարտապանին ծանուցադիր ուղարկելու հետ միաժամանակ դատական կատարածուն ծանուցադիր է ուղարկում կոմունալ բաժնին և այնտեղից տեղեկություն է պահանջում այն շենքը կամ կառուցման իրավունքը պարտապանին պատկանելու մասին, վորի վրա դարձվում է գանձումը, այլև քաղվածք է պահանջում կոմունալ բաժնի դրանցման մատյանից:

298. Դատական կատարածուն միաժամանակ արգելադրությունն ուղարկում է Գերագույն Դատարանին նոտարական բաժնին և տեղեկություն է պահանջում այդ դույքի վրա արդեն դրված արգելքների մասին:

(ՀՍՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

299. Գերագույն Դատարանի նոտարական բաժնի մատյանում արգելադրությունը գրանցելուց հետո արգելադրության մեջ նշանակված գանձումների դումարը պարտադիր է այն բոլոր անձանց համար, վորոնք այս կամ այն իրավունքը ձեռք կրերեն արգելադրված շենքի կամ կառուցման իրավունքի վերաբերմամբ:

(ՀՍՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորոշման խմբագրությամբ):

ԱՐԳԵԼԱԴՐՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԸ

300. Արգելադրյալ գույքն իրացման յենթակա յե հետևյալ կարգով.—

ա) Հայկական ԽՍՀ Առևտրի Ժողովրդական Կոմիտարիատի կողմից սահմանված ցուցակում նշանակված դեֆիցիտային ապրանքները, համաձայն տեղական առևտրական մարմինների ցուցումի և նրանց կողմից սահմանված գներով հանձնվում են պետական առևտրական ձեռնարկություններին կամ կոոպերատիվ կազմակերպություններին:

բ) Վոսկին, արծաթը, լուսնոսկին և լուսնոսկու խմբին պատկանող մետաղները—դրամի ձուլածոյի, ջարդի, նրանցից պատրաստված շինվածքների և հումքի ձևով, թանգարժեք քարերը, օտարերկրյա վալյուտան, որտարերկրյա վալյուտայով դուրս գրած վճարման փաստաթղթերը (մուրհակներ, չեկեր, փոխանորդադրեր և այլն) և օտարերկրյա Փոնդային արժեքները (ակցիաներ, պարտատոմսեր, նրանց կտրոնները) ԽՍՀՄ Ֆինոնկոզկոմատի ցուցումով հանձնվում են ԽՍՀՄ Պետական բանկին կամ պետական ձեռնարկություններին պայմանով, վոր դրանց արժեքը սահմանված գներով ուղարկվում է գանձում կատարող մարմիններին:

գ) Արգելադրյալ գույքի մնացած տեսակները վաճառվում են հրատարակային աճուրդով, սակայն, հանրայնացված հատվածի կազմակերպություններն ի-

րավունք ունեն այդ գույքը ձեռք բերել տեղական առևտրական օրգանների սահմանած գներով:

Ծանոթություն.— Այս հոդվածի «գ» կետում նշված գույքի իրացման պայմաններն ու կարգը, սահմանված են հատուկ հրահանգով: [1928 թ. հուլիսի 16-ին, (Որ. և Կարգ. Ժող. № 6, հոդ. 17)]:

301. Արգելադրյալ գույքն աճուրդով վաճառվում է այնտեղ, վորտեղ գույքը գտնվում է:

302. Գույք տեղափոխելը և ուրիշ տեղում վաճառելը թույլ է տրվում միայն գանձողի և պարտապանի փոխադարձ համաձայնության դեպքում՝ ծախսերի համար անհրաժեշտ դումարը նրանց հաշվին ու նրանց պատասխանատվությամբ վճարելու պայմանով:

Ծանոթություն.— Սակայն դարգացած տնտեսական կյանք ունեցող վայրերից գույքը վաճառելու համար կարելի յե տնտեսապես ավելի դարգացած վայր տեղափոխել միայն պարտապանի ինդրով այն պայմանով, վոր փոխադրության ծախսը հողա ինքը պարտապանին իր հաշվին ու իր պատասխանատվությամբ:

(ՀԽՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ):

303. Վաճառման ժամկետը նշանակում է դատական կատարածուն: Արգելադրության և վաճառման միջանկյալ ժամանակաշրջանը յոթ օրից պակաս և մի ամսից ավելի չպետք է լինի, բացի շուտ փչացող առարկաներից:

Ծանոթութիւն. — Գլուղատնտեսական և արհեստագործական վարկային կոոպերատիվ ընկերութիւններէից ստացված և ժամկետին չվճարած փոխառութեան պարտքերը դանձելիս արգելադրված դուրքը վաճառելու դեպքում արգելք դնելու և վաճառելու միջանկյալ ժամանակաշրջանը 7 օրից ալեւի չափ տի լինի :

(ՀԽՍՀ Կենտրոնական 1926 թ. մայիսի 20-ի վորդման խմբագրութեամբ) :

304. Աճուրդով վաճառելու մասին դատական կատարածուն վոչ ուշ, քան վաճառքից յերեք օր առաջ հայտարարում ե տեղական պաշտոնական թերթում, իսկ պահանջատիրոջ կամ պարտապանի խնդրով՝ նաև այլ թերթերում : Վաճառման վերաբերյալ հայտարարութիւնը փակցվում ե աճուրդը տեղի ունենալու վայրում և դատական կատարածունը գրասենյակում՝ վոչ ուշ, քան վաճառքից յերեք օր առաջ :

Ծանոթութիւն. — Գլուղատնտեսական և արհեստագործական վարկային-կոոպերատիվ ընկերութիւններէի տված և ժամկետին չվերադարձված փոխառութեաններէից մնացած պարտքերը դանձելիս պարտապանի դուրքը հրապարակային աճուրդի միջոցով վաճառելու մասին դատական կատարածունում ե հոժարակամ կատարելու համար պարտապանին արված ժամկետը լրանալուց մեկ օր հետո :

(ՀԽՍՀ Կենտրոնական 1928 թ. հուլիսի 7-ի վորդման խմբագրութեամբ) :

305. Յեթե դուրքը գրավ ե դրված, վաճառման օր-

վա մասին ծանուցադիր ե ուղարկում նաև գրավառուին : Կառուցման իրավունքի վաճառման օրվա մասին հայտնվում ե կոմունալ բաժնին :

306. Հայտարարութիւնը պիտի պարունակի հետևյալ տեղեկութիւնները. ա) վաճառվող դուրքը (թրվել, ում դուրքն ե վաճառվում, դուրքի գնահատութիւնը. բ) վաճառման ժամանակն ու վայրը (քաղաք, փողոց, տուն) :

307. Պարտապանն իրավունք ունի ցույք տալու, թե ինչ հերթով պիտի դուրքը վաճառվի : Յեթե դուրքի մի մասը վաճառելուց այնքան գումար գոյանա, վորը բավական լինի պահանջատիրոջը բավարարելու և գանձման բոլոր ծախսերը հոգալու համար, մնացածը չի վաճառվում :

308. Գնորդը՝ վաճառվող առարկան իր վրա մնալուց հետո պարտավոր ե անհապաղ մուծել վոչ պակաս քան սկզբնական գնահատութեան գումարը, իսկ մնացածը, հաջորդ օրից վոչ ուշ : Հիշյալ գումարն անհապաղ չվճարող գնորդը հեռացվում ե աճուրդին մասնակցելուց :

309. Յենքերի վաճառման աճուրդին մասնակցել ցանկացող բոլոր անձինք պարտավոր են դատական կատարածունին տեղեկանք ներկայացնելու կոմունալ բաժնից, վոր վոչ իրենք, վոչ իրենց ամուսինը և վոչ իրենց անչափահաս զավակները տվյալ վայրում վոչ մի շենք չունեն, այլ և ստորագրութիւն տալ, վոր վոչ իրենք, վոչ իրենց ընտանիքի հեշյալ անդամները շենքեր չունեն մի այլ վայրում (Քաղաքացիական Որենսդրութի 182 հոդ.) :

310. Բացի նախորդ հոդվածում մատնանշված տե-

դէկուլթյուններէց ու ստորադրուլթյուններէց՝ աճուրդին մասնակցել ցանկացողները շենքի կամ կառուցման իրավունքի գնահատուլթյան 10 տոկոսի չափով մի գումար ներկայացնում են իրեն զբաղական, վորը սակայն չի պահանջվում պետական հիմնարկներէց ու ձեռնարկուլթյուններէց :

311. Այն անձի տված զբաղականը, վորի վրա յե մնացել վաճառված շենքը կամ կառուցման իրավունքը, հանվում է գնման գումարից : Աճուրդին մասնակցած մնացած զբաղականները վերադարձվում են աճուրդը վերջանալուց հետո անհապաղ : Յեթե զնորդը չվճարի իրենց հասանելիք գումարը յոթ որվա ընթացքում, զբաղականը մնում է հոգուտ պետական դանձարանի :

312. Աճուրդով շենք կամ կառուցման իրավունք զնողին տրվում է աճուրդով վաճառելու մասին կազմված արձանագրուլթյան պատճենը : Այդ պատճենի հիման վրա կազմվում է նոտարական ակտ՝ շենք կամ կառուցման իրավունք ձեռք բերելու մասին, վորը ապա պարտագիր կերպով պիտի զբանցվի կոմունալ բաժնում :

313. Վաճառքից ստացված գումարից վճարվում են դուլքի արդէլադրուլթյան և վաճառման ծախսերը, իսկ մնացորդով բավարարում են դուլքի վրա դարձրած գանձումները :

314. Աճուրդը համարվում է չկայացած՝ 1) յեթե վոչ վոք չգա աճուրդի մասնակցելու. 2) յեթե վոչ վոք գնահատուլթյան զինը չավելացնի, կամ 3) յեթե զնորդը ժամանակին չհատուցի մնացորդ գումարը (հոդ. 308) :

315. Աճուրդը չկայանալու դեպքում պահանջա-

տերերը յերեք որվա ընթացքում կարող են հայտնել, վոր վաճառվող գուլքը թողնվի իրենց վրա՝ գնահատուլթյան համաձայն և իրենց պահանջների չափի համապատասխան հերթի կարգով :

316. Յեթե աճուրդը չկայանա և գանձողներից վոչ վոք դուլքն իր վրա չթողնի, դատական կատարածուն կրկնաճուրդ է նշանակում վոչ շուտ քան յոթ որից հետո, առաջին աճուրդի համար սահմանված կարգով : Կրկնաճուրդն սկսվում է գնահատուլթյան կամ աճուրդի ժամանակ առաջարկված առաջին գումարից :

ԳԼՈՒԽ XXXVII

ՏԻՉԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՎԱԾ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

317. Այս գլխի կանոնները կիրառվում են առևտրական մատյան մուծված կամ մուծման յենթակա Փիլիկական և իրավական բոլոր մասնավոր անձանց ձեռնարկուլթյունների վերաբերմամբ :

Մանրություն. — Առեվտրական հաշվով գործող (տնտեսալարական) պետական ձեռնարկուլթյունների, անկախ նրանց կազմակերպուլթյան ձևից (տրեստներ, պետառներ, պետական բաժնետիրական ընկերուլթյուններ, սինդիկատներ և այլն), խառը բաժնետիրական ընկերուլթյունների, ինչպես նաև ամեն տեսակի և աստիճանի կոոպերատիվ կազմակերպուլթյունների սնանկուլթյունը կարգավորում է պետական ձեռնարկուլթյունների ու

խառը բաժնեցիրական ընկերությունների սնանկութեան վերաբերյալ կանոնադրութեամբ և կոոպերատիվ կազմակերպությունների սընանկութեան վերաբերյալ կանոնադրութեամբ, վորոնք հաստատված են ԽՍՀՄ կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից 1929 թ. փետրվարի 6-ին [1929 թ. 19/3 (Ռբ. և Կարգ. Ժող. № 7, հոդ. 99)]:

318. Այն պարտապանը, վորն իր գործերի դրութեան հետևանքով դադարեցրել է պարտքերի վճարումները յերեք հազար ութըց ավելի գումարի սահմաններում կամ պետք է դադարեցնի վճարումներն այդ գումարի սահմաններում, կարող է սնանկ ճանաչվել, յեթե դատարանը կհաստատի, վոր նա անընդունակ է լիովին վճարելու պարտատերերի դրամական պահանջները:

Ծանոթություն 1.— Սահմանափակ պատասխանատու վութեամբ գործող ընկերութեան պարտքերի դիմաց նրա անդամների վրա ընկնող պատասխանատուութեանը նկատի չի առնվում այն դեպքերում, յերբ վորոշվում է, վոր ընկերութեան անընդունակ է իր պարտքը լիովին վճարելու:

Ծանոթություն 2.— Այս գլխի կանոնները չեն կիրառվում այն դեպքում, յերբ տվյալ պարտապանի բոլոր պարտքերի պարտատերը միայն մի անձ է:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

319. Մանկութեան բացվելու վերաբերյալ գործերը յենթակա յեն Գերագույն Դատարանի ընդհանուր իրավասութեան Դատական Կոլեգիային: Հիշյալ գործերը հարուցվում են.—

ա) իրավական անձանց վերաբերմամբ—նրանց վարչությունների դռնված վայրում:

բ) Ֆիզիկական անձանց վերաբերմամբ—Քաղաք. Դատավ. Որենսդ. 25-26 հոդվածների ընդհանուր կանոնների համաձայն:

320. Մանկ հայտարարելու կամ սնանկ հայտարարելու միջնորդութեանը մերժելու վերաբերյալ դատարանի վորոշման դեմ կարելի յե դանդառ տալ վճիռը հայտնելուց յոթ օրվա ընթացքում: Մանկութեան գործերի վերաբերյալ մնացած բոլոր վորոշումները կայացնում է Գերագույն Դատարանի ընդհանուր իրավասութեան Դատական Կոլեգիայի անդամը լիանձնաբար: այդ վորոշումները դանդառարկվում են Քաղ. Դատավ. Որենսդ. 249 հոդ. կարգով:

331. Մանկութեան բացվելու վերաբերյալ գործ հարուցելու իրավունքը պատկանում է՝ ա) պարտատեր-բոջը, բ) պարտապանին, գ) պաշտճ դերատեսչութեանը (դերատեսչութեաններին) կամ համապատասխան գործադիր կոմիտեյին, վորոնց իրավասութեան է վերաբերում տնտեսութեան այն ճյուղի կարգավորումը, վորին պատկանում է պարտապանի ձեռնարկութեանը, դ) դատարանին, յեթե զանձումներ կատա-

րելիս յերևան դան սնանկութեան այն նշանները, վարոնք մատնանշված են 317 և 318 հոդվածներով, և ե) դատախազին :

322. Սնանկութիւն բացվելու վերաբերյալ դործ հարուցող անձինք և հիմնարկները պետք է դատարանին ներկայացնեն՝ պարտապանը—իր պարտատերերի ու պարտապանների ցուցակը, նրանց բնակավայրերի և իր դուքի վերաբերյալ տեղեկութիւններով, պարտատերը—իր պահանջների ապացույցները և պարտապանի կողմից վճարումները դադարեցնելու մասին տվյալներ. մնացած մարմինները—պարտապանի կողմից վճարումները դադարեցնելու մասին տեղեկութիւններ :

323. Սնանկութիւն բացվելու վերաբերյալ դործը քննութեան ե առնվում դատարանին հայտնի պարտատերերին, պարտապանին և համապատասխան գերատեսչութիւններէ կամ համապատասխան դործադիր կոմիտեաների ներկայացուցիչներին կանչելով (321 հոդ. «դ» կետ) : Պարտապանը, յետե դործը նա չի հարուցել, պարտավոր է դատարանի պահանջով դատական նիստից յոթ որ առաջ ներկայացնել իր պարտատերերի ու պարտապանների ցուցակը և իր դուքի դրութեան մասին տեղեկութիւններ :

324. Սնանկութեան մասին դործ հարուցած անձանց և հիմնարկների միջնորդութեամբ դատարանը կարող է մինչև դործը լուծվելը պարտապանի դուքի վրա արգելք դնել. հայցն ապահովելու վերաբերյալ կանոնների համաձայն (Քաղ. Դատ. Որ. 85-92 հոդվածները) :

325. Պարտապանին սնանկ հայտարարելով՝ դատա-

րանն առաջարկում է 321 հոդ. «դ» կետում հիշատակված պետական մարմիններին յոթն որվա ընթացքում նշանակել մեկ կամ մի քանի լիկվիդատորներ, նայած լիկվիդացիայի յենթակա ձեռնարկութեան ծավալին, և վորոշում է լիկվիդացիայի ժամկետը :

Ժամանակամիջոցը նշանակվում է մինչև մեկ տարի : այդ ժամկետը կարելի յե յերկարացնել միայն բացառիկ դեպքերում դատարանի հատուկ վորոշմամբ. միաժամանակ դատարանն առաջարկում է նույն պետական մարմինն՝ անհապաղ նշանակել հատուկ անձ, վորի վրա դնում է ձեռնարկութեան դուքի պահպանութիւնը, մինչև լիկվիդատորներն իրենց պարտականութիւնների կատարմանը կանցնեն :

Ծանոթութիւն. — Այս հոդվածի յերկրորդ մասում հիշված անձը հավասարապես իրավունք ունի կատարելու պարտապանի դուքը կառավարելու վերաբերյալ դործողութիւններ, յետե այդ գործողութիւններ կատարելն անհրաժեշտ լինի :

326. Սնանկութիւն բացվելու մասին դատարանն անհապաղ հայտարարում է կառավարական պաշտոնական թերթերում և հաղորդում է առևտրական դրանցման համապատասխան մարմինին :

Հայտարարութիւնը պետք է իր մեջ բովանդակի սնանկութիւնը ճանաչած դատարանի անունը, պարտապանի ճիշտ անուն—ազգանունը, նրա դրոնված վայրը և լիկվիդացիայի ժամկետը : Հայտարարութեան հետ կապված ծախսերը կատարվում են պարտատերերի հաշվին :

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

327. Տվյալ անձին սնանկ ճանաչելու որից՝

ա) պարտապանի դուշըն կառավարումն ու տնորինությունն անցնում է լիկվիդատորներին, վորոնց անցնում է նաև պարտապանի դործերով դատարանում վորպես հայցվոր ու պատասխանող հանդես գալու իրավունքը բացի այն դործերից, վորոնք վարելու համար լիկվիդատորները պարտապանին թույլտվություն են տալիս:

բ) պարտապանի ամբողջ դուշըն վրա արգելք է դրվում և յերրորդ անձինք, վորոնց մոտ է գտնվում սնանկ հայտարարվածի դուշըը, կամ վորոնք նրան պիտի վճարումներ անեն, պարտավոր են այդ դուշըը հանձնել կամ վճարումներ անել լիկվիդատորներին:

գ) պարտատերերը կարող են բավարարություն պահանջել միայն լիկվիդատորներին պահանջ հայտնելու միջոցով:

Լիկվիդացիայի ժամանակ թույլ չի տրվում վոչ արգելք դնել և վոչ դատական վճիռներով կամ անվիճելի կարգով առանձին պարտատիրոջ ոգտին հարկադիր կատարումներ անել:

Դատական կատարածուները և այն մարմինները, վորոնց որենքով իրավունք է տրված անվիճելի կարգով դանձումներ կատարել, պարտավոր են դադարեցնելու իրենց վարույթում գտնվող՝ սնանկ հայտարարվածի դեմ յեղած կատարումները և այդ վարույթները հանձնել լիկվիդատորներին:

դ) բոլոր պահանջների վերաբերյալ տոկոսների,

տույժի և տուգանքի բարդումը դադարեցվում է լիկվիդացիայի ամբողջ ընթացքում, բացի 334 հոդ. և 335 հոդ. յերրորդ մասում հիշված պահանջներից:

ե) յեթե պարտատերի պահանջների կատարման ժամկետը մինչև սնանկության հայտարարման որը դեռ չի լրացել, այդ պահանջների կատարման ժամկետը լրացած է համարվում նույն որը. այդ պահանջները պակասեցվում են, դուրս գալով սնանկության մասին հայտարարելու որից մինչև պահանջի կատարման ժամկետն ընկնող ժամանակի համար հաշված որինական տոկոսների գումարը:

զ) պարտապանը զրկվում է վորեև առևտրական դործունեյությամբ զբաղվելու կամ վարձու աշխատանք պահանջող արդյունաբերական կամ այլ ձեռնարկություններ կազմակերպելու, ինչպես նաև կապալներ ու մատակարարումներ հանձն առնելու իրավունքից սնանկությունը բացվելու որից մինչև լիկվիդացիան վերջանելու մասին հայտարարելու որը:

ԼԻԿՎԻԴԱՏՈՐՆԵՐԸ

328. Լիկվիդատորները պարտավոր են.— ա) հայտարարություն տալ կառավարության պաշտոնական թերթում իրենց պարտականությունների կատարման անցնելու մասին, ցույց տալով լիկվիդատորների հասցեները: բ) պարզել պարտապանի առկա դուշըի ցուցակը և ձեռք առնել բոլոր միջոցները նրա պահպանության համար: գ) հայտարարել պարտապանի դուշըը և յերրորդ անձերից նրան հասանելիք պարտքերը և դանձել վերջինները: դ) պատշաճ կարգով դնահա-

տեղ ամբողջ գույքը և հնարավոր արագութեամբ իրացնել այն, յեթե չեն կիրառվելու այս գլխի 8-րդ հատվածի կանոնները (353-362 հոդվածները) . ե) կազմել պարտապանի պարտքերի ընդհանուր հաշվարկը, նշելով պարտապաններին բավարարելու կարգըն ու չափերը:

Մանրություն. — Մի քանի լիկվիդատորներ նշանակվելու դեպքում նրանց պարտականությունների բաշխումը կատարվում է նրանց նշանակող մարմնի կարգադրութեամբ, իսկ վերջինի բացակայութեան դեպքում—նրանց փոխադարձ համաձայնութեամբ:

329. Լիկվիդատորներն իրավունք ունեն պարտավորություններ հանձն առնել և պայմանագրեր կնքել, վորոնք անհրաժեշտ են պարտապանի դուլքն իրացնելու համար. լիկվիդատորները կարող են մուրհակներ տալ, տուգանքի պարտավորություն հանձն առնել, ինչպես նաև սնանկացածի դործերը շարունակելու կամ լիկվիդացիան հետաձգելու հետ կապված պարտավորություններ հանձն առնել և պայմանագրեր կնքել՝ միայն նրանց նշանակող պետական մարմնի թույլտվութեամբ:

330. Լիկվիդատորներն իրենց անտեսական դործունեյութեան ընթացքում յեթակա յեն նրանց նշանակող պետական մարմնի հսկողութեանը, նրանից ստանում են անհրաժեշտ ցուցումներ և պարտավոր են հաշիվ տալ նրան:

Լիկվիդատորներն ամսական վարձատրություն են ստանում ի հաշիվ լիկվիդացիայի յենթարկվող դուլքի՝ դատարանի վորոշած չափով, համաձայն Արդարադա-

տութեան Ժողովրդական կոմիտարիատի կողմից Աշխատանքի Ժողովրդական կոմիտարիատի համաձայնութեամբ հրատարակվող հատուկ հրահանգի:

331. Լիկվիդատորների վերաբերմամբ կիրառվում են պաշտոնատար անձանց համար սահմանված կանոնները:

ՀԱՏՎԱԾ V

Լիկվիդացիոն ԵՆԵԹԱԿԱ ԳՈՒՅԻԸ

332. Լիկվիդացիայի յենթակա դուլքի կազմի մեջ է մտնում սնանկ հայտարարելու պահին պարտապանին պատկանող թե առկա և թե յերրորդ անձերից հասանելիք ամբողջ դուլքը, ինչպես նաև ամեն դուլք վորը կարող է նրան հասնել մինչև լիկվիդացիան վերջանալը կամ վորը կարող է պարտապանին վերադարձվել նրա կատարած դործարքներն անվավեր ճանաչելու հետևանքով:

Պարտապանին պատկանող այն դուլքը, վորը թրված է Քաղ. Դատ. Որ. 271 հոդ. «ա» կետում, չի մտնում լիկվիդացիայի յենթակա դուլքի կազմի մեջ:

333. Պարտապանին պատկանող և յերրորդ անձանց մոտ դրավ դրված դուլքը մացվում է լիկվիդացիայի յենթակա դուլքի կազմի մեջ՝ անկախ դրավ դրութեան պահանջների ժամկետներից, իսկ պարտատերերը բավարարություն են ստանում ընդհանուր պահանջների կարգով, պահպանելով 345 հոդվածում մատնանչված այն իրավունքը, վորով դրավառու պարտատերերին, նախապատվություն է տրվում բավարա-

բուժյուն ստանալու այն արժեքի չափով, վորը չի գերազանցում դրավի առարկայի իրացումից գոյացած գումարից :

Վարկային հիմնարկները, յերկաթուղիները, նա-
վարկութեան ձեռնարկութեանները և ապրանքային
պահեստները, վորոնք որեւէ կամ կանոնադրութեան
հիման վրա իրավունք ունեն ինքնուրույնաբար իրաց-
նելու իրենց կողմից փոխադրվող, իրենց ի պահ տըր-
